

ՅՈՒ. Մ. ՍՈՒՎԱՐՅԱՆ

**ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՋԱԿԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**



ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ՔՈԹԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՅՈՒ. Մ. ՍՈՒՎԱՐՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ԵՐԵՎԱՆ

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2023

ՀՏԴ 351/354

ԳՄԴ 67.401

Ս 960

Հրատարակվում է ՀՀ ԳԱԱ

**Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի
գիտական խորհրդի երաշխավորությամբ**

Սուվարյան Յու. Մ.

Ս 960 Հայկական պետականության կառավարչական հիմնա-
խնդիրները / Յու. Մ. Սուվարյան.– Եր.: «Գիտություն»,
2023.– 222 էջ:

Գրքում լուսաբանվել են հին և միջնադարյան ժամանակա-
շրջանում, ինչպես նաև XX դարում և XXI դարի առաջին քա-
ռորդում հայկական պետականությունների կազմավորման և
գործունեության կառավարչական հարցերը, առաջացած հիմնա-
խնդիրներն ու դրանց լուծման գերակայությունները: Հատկապես
կարևորվել են հանրային կառավարման համակարգում քաղա-
քակրթական ու քաղաքագիտական կազմակերպման, ռազմավա-
րության ու կազմակերպական կառուցվածքների ընտրության,
արդի թվային տեխնոլոգիաների կիրառության, պատմության
դասերի հաշվառման խնդիրները:

Աշխատությունը կարող է օգտակար լինել պետական կա-
ռավարչական և հանրային կառավարման հիմնախնդիրներով
հետաքրքրվողների համար:

ՀՏԴ 351/354

ԳՄԴ 67.401

ISBN 978-5-8080-1512-8

© Սուվարյան Յու. Մ., 2023

ԱՌԱՋԱԲԱՆ

Տասնյակ տարիների ընթացքում հանրային կառավարման, հայ կառավարչական մտքի պատմության հետազոտությունների արդյունքում հրապարակված հոդվածներում և մենագրություններում լուսաբանվել ու բնութագրվել են հայկական պետականության կառավարչական գործընթացները և առանձնահատկությունները հնագույն ժամանակներից մինչև XXI դարի սկիզբը թե՛ նվաճումների, թե՛ կազմակերպաքաղաքական բացերի դրսևորմամբ: Սույն աշխատությունում ընդհանրացվում և ամփոփվում են հայկական պետականության կառավարչական հիմնախնդիրները՝ ներառելով նախկինում հրապարակված որոշ արդիական դրույթներ և նոր հետազոտությունների արդյունքներ:

Հայտնի է, որ հայկական պետականությունը սկիզբ է առնում Վանի թագավորությունից (մ.թ.ա. IX-VI դարեր), որին հաջորդել են Երվանդունիների հայկական թագավորությունը (մ.թ.ա. VI-II դդ.), Մեծ Հայքի թագավորությունը (մ.թ.ա. 189թ.- մ.թ. 428 թ.), Բագրատունիների թագավորությունը (885-1045 թթ.), Կիլիկյան հայկական պետությունը (մեծ իշխանապետություն՝ 1080-1198 թթ., թագավորություն՝ 1198-1375 թթ.):

Իբրև պետականության դրսևորումներ՝ մշակութային, ռազմական, տնտեսական որոշակի ինքնուրույնություն

ունեցող վարչաքաղաքական կազմավորումներ գործել են Արցախի և Ուտիքի թագավորությունը (V-VII դարեր), Խաչենի իշխանությունը (X-XV դարեր), Արցախի և Սյունիքի մելիքությունները (XVI դարից մինչև XIX դարի առաջին քառորդը):

XX դարի ընթացքում՝ Կիլիկյան Հայաստանի անկումից 543 տարի անց, ստեղծվել են հայկական Առաջին (1918-1920թթ.) ժողովրդավարական հանրապետությունը, այնուհետև՝ Երկրորդ (1920-1990 թթ.)՝ խորհրդային հանրապետությունը ԽՍՀՄ կազմում, 1991 թ. հիմնադրվել է Երրորդ հանրապետությունը՝ իբրև Ժամանակակից ժողովրդավարական պետություն:

Դիտարկելով նշված պետական կազմավորումների իրավակազմակերպական, պետական մարմինների գործառույթային և կառուցվածքային յուրահատկությունները՝ հատկապես վերլուծվում ու գնահատվում են պետականության կորստյան գործոնները և դրա հարատևության էական նախադրյալները:

Այդ առումով հատկապես էական է երկրում քաղաքակրթական և քաղաքագիտական զարգացման նպատակասլաց զուգակցումը, մասնավորապես ազգային մշակութային ու տնտեսական զարգացման համար կարևորագույն նախադրյալի՝ պետականության անհրաժեշտության գիտակցումը, դրա անվերապահ պաշտպանության կառուցակարգերի առկայությունը: Ժամանակակից ժողովրդավարական երկրներում ստեղծված են անվտանգ պետականության նախադրյալները:

- պետական իշխանության թևերը հակակշռող և անխափան գործունեությունն ապահովագրող սահմանադրություն և օրենսդրական դաշտ,
- պատշաճ մակարդակի զինված ուժեր և պետական անվտանգության երաշխիքներ ապահովող մարմիններ,
- ակտիվ գործող և հավատ ներշնչող ազգային եկեղեցի,
- զարգացած և կայացած քաղաքացիական հասարակություն, հասուն, բազմակուսակցական համակարգ,
- բարձր զարգացած, բազմաճյուղ, արդիական գիտելիքահեն տնտեսություն,
- գնահատվող պատմական և ազգային ավանդույթներ (նաև թագավորական իշխանության տեսքով),
- արտաքուստ չերևացող ներքին կառուցակարգեր, որ հաճախ անվանում են խորքային պետություն:

Թվարկված բաղադրիչները միշտ չէ, որ առկա են նոր ժողովրդավարական երկրներում, ուստի բացը լրացնելու համար շատ կարևոր են ճշգրիտ կառավարչական լուծումները, որոնք կարող են նպաստել պետականության կայուն գործունեությանը և հարատևմանը: Ի մասնավորի՝ մեր երկրում, ցավոք, թվարկված յոթ նախադրյալներից, թերևս բացի Հայ առաքելական եկեղեցուց մյուսները հիմնավոր կայացման փուլում են, որոնց ժողովրդավարական հասարակության համար անհրաժեշտ որակական զարգացումը հարկ է կանոնակարգել կառավարչական ներագդեցույթ-

յամբ՝ իրականացնելով բարեփոխումներ հանրային կառավարման բոլոր ոլորտներում և մակարդակներում: Սույն աշխատության առանցքային խնդիրը նմանատիպ բարեփոխումների գերակայությունների և բովանդակության լուսաբանումն է:

Գրքում ներառվել են նաև միջազգային գիտաժողովներում հեղինակի որոշ ելույթներ, որոնցում արծարծվում են հայապահպանության և հայկական պետականությանն առնչվող խնդիրներ:

ԳԼՈՒԽ 1.

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

1.1. ՀԻՆ ԵՎ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ: ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԸ*

Ներածություն

Ավելի քան 1500 տարի պետականություն ունեցած և չորս անգամ այն կորցրած 10.000-ամյա ժողովրդի համար չափազանց էական են հանրային կառավարման և սահմանադրականության ամրապնդման հիմնախնդիրները: Դրանց կարևորությունն առաջին հերթին պայմանավորված էր կորցրած պետականությունը վերականգնելու (օրինակ՝ Մ. Գոշի «Դատաստանագիրքը» (1184 թ.), Շ. և Հ. Շահամիրյանների «Որոգայթ փառացը» (1773 թ.) ստեղծվել են պետականության բացակայության պայմաններում) և կառավարման հանրային կառույցների զարգացման, դրանց արդյունավետության բարձրացման առաջնահերթությամբ (օրինակ՝ Վ. Բարեպաշտի «Կանոնական սահմանադրությունը» (488 թ.), Ս. Սպարապետի «Դատաստանագիրքը» (1265 թ.) և

* Առաջին անգամ հրապարակվել է *Մուվարյան Յու., Մարգարյան Վ., Մուվարյան Ա.,* Հանրային կառավարման մեթոդաբանական հիմնախնդիրներ (Ե., «Գիտություն», 2019) գրքում:

այլն): Պետականության բացակայության և օտար իշխանությունների տիրապետության պայմաններում հայ բնակչության եկեղեցական, քաղաքացիական, կենցաղային կենսական խնդիրները լուծվել են «Կանոնագիրք Հայոց»-ում՝ պարունակվող կանոններով, ինչի շնորհիվ այն կատարել է յուրօրինակ սահմանադրության և ժողովրդի համախմբման խիստ կարևոր գործառույթները:

Հանրային կառավարման պետական և տարածքային ղեկավարման մարմինների գործունեության կարգի և սկզբունքների վերաբերյալ տեղեկություններ կան հայ պատմիչների՝ Մ. Խորենացու, Փ. Բուզանդի, Ղ. Փարպեցու, Ագաթանգեղոսի և այլոց հայտնի աշխատություններում:

Հայ իրականության մեջ սահմանադրականության և պետական ու տարածքային կառավարման հիմնախնդիրներին անդրադարձել են պատմաբաններ, իրավաբաններ, կառավարման մասնագետներ: Նշված խնդիրներն առաջինը հանգամանորեն դիտարկել է Մխիթարյան միաբաններից Ղ. Բնձիճյանը¹: Հին Հայաստանի պետական կառուցվածքը մ.թ.ա. VI - մ.թ. IV դարերում (շուրջ 700 տարի) հետազոտել և բնութագրել է Ս. Մ. Կրկյաշարյանը՝ հիմք ընդունելով հայ պատմիչների, ինչպես նաև հույն հետազոտողների աշխատությունները²: Բազրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքի ու վարչական կարգի, երկրի

¹ Տե՛ս **Բնձիճյան Ղ.**, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, Հ. Բ., Վենետիկ, 1835:

² Տե՛ս **Կրկյաշարյան Ս. Մ.**, Հին Հայաստանի պետական կառուցվածքը (մ.թ.ա. VI - մ.թ. IV դդ.), Ե., «Լուսակն», 2005, 312 էջ:

կառավարման առանձնահատկությունների մասին ուսումնասիրությունն է հրապարակել Ռ. Ի. Մաթևոսյանը³:

Կիլիկյան Հայաստանի պետական կառավարման համակարգը հանգամանորեն լուսաբանվել է Ա. Գ. Սուքիասյանի մենագրությունում⁴:

Վերը թվարկված պատկառելի աշխատություններում պետական ու տարածքային կառավարման հարցերը դիտարկվում են ոչ թե առանձին, այլ պատմաքաղաքական, հաճախ նաև իրավական խնդիրների համատեքստում: Իբրև զուտ հանրային կառավարման հիմնախնդիր պատմական Հայաստանում պետական ու տարածքային կառավարումը՝ համապատասխան կառուցվածքով և լիազորություններով, հետազոտվել է տողերիս հեղինակի աշխատություններում⁵:

Ի դեպ, հանրային կառավարման օրինական հիմքը երկրի հիմնական օրենքն է՝ սահմանադրությունը, որոշ երկրներում կամ հին դարերում՝ օրենքների (կանոնների) համախումբը: Սահմանադրականությունը նշանակում է հիմնական օրենքի (կամ օրենքների ու կանոնների) առկայություն, դրանց առաջադիմականություն և պարտադիր ու լիարժեք կիրառություն երկրի հանրային գործունեության բոլոր մակարդակներում և ոլորտներում:

³ Տե՛ս *Մաթևոսյան Ռ. Ի.*, Բազրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը, Ե., ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1990, 295 էջ:

⁴ Տե՛ս *Սուքիասյան Ա. Գ.*, Կիլիկիայի հայկական պետության և իրավունքի պատմություն, Ե., ԵՊՀ հրատ., 1978, 392 էջ:

⁵ Տե՛ս, մասնավորապես, *Սուվարյան Յու. Մ., Միրզոյան Վ. Ա.*, Հանրային կառավարման տեսություն և պատմություն, Ե., «Գիտություն», 2013, 368 էջ:

Հաշվի առնելով հանրային կառավարման կատարելագործման ասպարեզում պատմական փորձի և ազգային ավանդույթների առանձնահատուկ կարևորությունը՝ սույն հետազոտության մեջ հատկապես շեշտադրվում են հիմնահարցի առավել էական մեթոդաբանական յուրահատկությունները, որոնք այսօր էլ խիստ արդիական են:

Պետական և տարածքային կառավարումը հին և միջնադարյան Հայաստանում

Հին Հայաստանում, մ.թ.ա. VI դարից սկսած մինչև մ.թ. IV դարը, շուրջ յոթ հարյուրամյակ տևող հայկական պետության կառավարման համակարգի վերաբերյալ առավել ամբողջական տեղեկություններ ամփոփում է Մ. Խորենացու «Հայոց պատմությունը»: Ըստ այդ տեղեկությունների՝ պետության գլուխը թագավորն էր, որն ուներ թե՛ օրենսդրական, թե՛ գործադիր գործառույթներ, զինված ուժերի գլխավոր հրամանատարն էր, իրավասու էր նշանակելու տարածքային կառավարման մարմինների ղեկավարներ, իրավարարներ արքունի տանը, քաղաքներում և ավաններում: Ըստ Խորենացու՝ թագավորն «...իր թագավորական տանը օրենքներ է հաստատում, ժամեր է սահմանում (արքունիք) մտնելու և իջնելու, խորհրդի, կերուխումի և զբոսանքների համար: Սահմանում է զինվորական կարգեր, առաջին, երկրորդ, երրորդ և այլն... Սահմանում է իրավարարներ արքունի տանը, իրավարարներ քաղաքներում և ավաններում»⁶: Ուշագրավ է և ուսանելի, որ թագավորը նշանակում

⁶ *Մովսես Խորենացի*, Հայոց պատմություն, Ե., «Հայաստան», 1990, էջ 76:

է «...երկու մարդ գրով հիշեցնողներ, մեկը բարին հիշեցնող, մյուսը՝ վրեժխնդրությունը: Բարին հիշեցնողին հրաման է տալիս՝ թագավորի բարկանալու կամ անիրավ հրաման տալու դեպքում հիշեցնել իրավացին և մարդասիրությունը»⁷:

Ժամանակակից ընկալմամբ այդ մարդիկ ղեկավարի այսօրվա խորհրդականներն են, օգնականները, որոնց կարևոր գործառույթներից մեկը, ըստ պատմության դասերի, արդարացի որոշումների ընդունման ապահովումն է: Բնութագրելով հայոց Վաղարշակ թագավորի գործունեությունը՝ Մ. Խորենացին նշում է. «...քաջ և խոհեմ մարդ լինելով, անվախորեն տիրեց իր սահմաններում և կենցաղային կարգեր հաստատեց մեր աշխարհում՝ որքան կարելի էր, սահմանեց նախարարություններ և այս նախարարությունների համար նահապետներ պիտանի մարդկանցից, որոնք ծագում էին մեր նախնի Հայկի սերունդից և ուրիշներից»⁸: Այդպիսով, ձևավորվել են գործակալությունները՝ իբրև թագավորական իշխանության կառավարման գործառութային մարմիններ, և տարածքային կառավարման կառույցների գլխավորները՝ նախարարները, քաղաքների կառավարիչները, գյուղական համայնքների ղեկավարները: Մ. Կրկյաշարյանի ճշմարիտ դիտարկմամբ Հայաստանում նախարարները բաժանվել են երեք խմբի.

- արքունի տնտեսությամբ զբաղվող պաշտոնյաներ,
- արքունիքում տարբեր պաշտոններ կատարողներ,

⁷ Նույն տեղում, էջ 76:

⁸ Նույն տեղում, էջ 67:

- թագավորի հանձնարարությամբ վարչապետական տարբեր պաշտոններ կատարողներ երկրի տարբեր մասերում⁹:

Յուրաքանչյուր գործակալություն թագավորի որոշմամբ կառավարում էր նախարարը, իսկ այնուհետև այդ պաշտոնը դարձավ նախարարական տան ժառանգական պաշտոն: Արքունի տնտեսությունը կառավարում էր հագարապետությունը, որի ոլորտում էին ֆինանսները, այդ թվում՝ հարկահանությունը, սկզբնական շրջանում՝ մինչև մ.թ. II դարը, նաև ռազմական գործը: Մադիսագությունն արքունի դռան գործակալություններից էր, որը կարգավորում էր արքունի թիկնապահների գործունեությունը: Արքունիքի պաշտոնյաներից էր նաև թագադիր ասպետը, իսկ այդ կոչումը Վադարշակ թագավորի կամքով առաջինը կրել է Բագարատը: Մարդպետությունը նույնպես նույն բնույթի գործակալություն էր, որի գործառույթներից էին արքունիքի վերակացությունը, թագավորական կալվածքների և գանձերի վերահսկողությունը¹⁰: Մյուս կարևոր գործակալությունը սպարապետությունն էր, որն առաջացել էր երկրորդ դարի վերջերին, իսկ սպարապետը համարվում էր Մեծ Հայքի թագավորական ուժերի գերագույն հրամանատարը¹¹: Նախարարն առաջին հերթին խոշոր հողատեր էր, որ իր ծառայությունների դիմաց ստացել էր թագավորից, և այն փոխանցվում էր սերնդեսերունդ, իբրև ժառանգություն: Նա-

⁹ Տե՛ս *Կրկնաշարյան Մ.*, Հին Հայաստանի պետական կառուցվածքը (մ.թ.ա. VI - մ.թ. IV դդ.), Ե., «Լուսակն», 2005, էջ 294:

¹⁰ Տե՛ս *Սովսեկ Խոթենացի*, նույն տեղում, էջ 70-75:

¹¹ Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. 1, Ե., ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1971, էջ 834:

խարարներից ոմանք ստանում էին գործակալություններ ղեկավարելու իրավասություններ, իսկ մյուսները կատարում էին իրենց հանձնված տարածքները (քաղաքներ, գյուղեր) կառավարելու լայն լիազորություններ (հարկային, դատական, վարչական), իրավասու էին ունենալու գորք, բերդեր:

Ըստ պատմական աղբյուրների՝ երկրի արտաքին քաղաքականությունը, հարաբերություններն արտաքին աշխարհի հետ վարում էր թագավորը, նա էր լուծում պատերազմի, հաշտության, դաշնագրերի կնքման հարցերը: Նրա իրավասության շրջանակներում էին երկրի վարչական շրջանների սահմանների որոշման, քաղաքների հիմնադրման, նրանց անվանակոչության հարցերը: Ըստ նույն աղբյուրների՝ քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց հետո Հայ առաքելական եկեղեցուն վերապահված էր հոգեվոր զարգացման, կրթության, մասամբ դատական գործը, իսկ հայկական պետության վերացումից հետո՝ նաև իրավական-քաղաքական հարաբերությունների կարգավորումը:

Պետական կառավարման խորհրդատվական մարմին էր արքունիքը, որը բաղկացած էր թագավորի անմիջական շրջապատի անդամներից, արքունիքում պաշտոններ զբաղեցնողներից, ավագանու բարձր խավի ներկայացուցիչներից: Առանձնահատուկ խորհրդատվական մարմին էր աշխարհաժողովը, որը երկրի համար կարևորություն ունեցող հարցերի քննարկման համար հանդիսավոր պահերին հրավիրում էր թագավորը, որին նախարարների և այլ իշխանների հետ միասին մասնակցում էին ազատանին, գյուղական համայնքների վերնախավը:

Աշխարհաժողովն ըստ էության հայ ավագանու բարձրագույն խորհրդակցական մարմինն էր¹²:

Անդրադառնալով Երվանդունիների սկզբնական շրջանում պետական կառուցվածքին՝ Ս. Մ. Կրկյաշարյանը գրում է, որ թագավորի հետ միասին երկրի կառավարման գործին մասնակցել են նաև քրմերը, իսկ հայոց թագավորի կողքին եղել է նրան շրջապատող և նրա իշխանությունն ինչ-որ չափով սահմանափակող ավագանու խորհուրդը, որը Քսենոֆոնի վկայությամբ գոյություն ունեւ դեռևս Աքեմենյանների կողմից Հայաստանի նվաճումից առաջ¹³:

Հանրային կառավարման համակարգը զարգացել և ճյուղավորվել էր Տիգրան Բ-ի աշխարհակալությունից հետո, հատկապես Արշակունիների գահակալության վերջին շրջանում (զժապատկեր 1.)¹⁴ :

Հին Հայաստանի հանրային կառավարման կառուցվածքը և առանձին մարմինների գործառույթները հակիրճ և ամփոփ ներկայացնելուց հետո անդրադառնանք երկու կարևոր խնդրի. Ի՞նչ կառավարչական հանգամանքներով էին պայմանավորված հայկական թագավորության մերթընդմերթ հզորացումը և այնուհետև պատմության թատերաբեմից հեռանալը: Այս հարցերի պատասխանը կարելի է գտնել Պատմահոր և մյուս նշանավոր պատմիչների հանրահայտ աշխատություններում:

Ըստ Մ. Խորենացու՝ Տիգրան Բ-ն «...մեր թագավորներից ամենահզորն և ամենախոհեմն էր և նրանցից բոլորից քաջ... Բոլոր իր ժամանակակիցներին նախանձելի եղավ,

¹² Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. 1, էջ 828:

¹³ Տե՛ս *Կրկյաշարյան Ս. Մ.*, նշվ. աշխ., էջ 154:

¹⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 154:

իսկ հետո եկողներիս ցանկալի թե՛ ինքք և թե՛ իր ժամանակը»¹⁵... Նրա օրոք, գրում է Խորենացին. «Հետևակ կովորները ձիավոր դարձան, պարսերով կովորներն հաջող աղեղնավորներ, կռպալներով կովորները զինվեցին սրերով ու տեգավոր նիզակներով, մերկերը պատսպարվեցին վահաններով և երկաթե զգեստներով»¹⁶:

Ժամանակակից ընկալմամբ բանակը վերագինեց, հզորացրեց, զինվորներին դարձրեց պաշտպանված, իսկ հարձակման ուժը՝ բազմապատկված: Իբրև անձնավորություն թագավորը, ըստ Խորենացու, եղել է «...մեծիմաստ և պերճախոս և լի բոլոր (հատկություններով), որ պիտանի են մարդուն»: «Նա ամեն բանի մեջ արդարադատ և հավասարասեր կշեռք ունենալով՝ ամեն մեկի կյանքը կշռում էր իր մտքի լծակով. չէր նախանձում լավագույններին, չէր արհամարհում նվաստներին, այլ աշխատում էր ընդհանրապես ամենքի վրա տարածել իր խնամքի զգեստը»¹⁷:

Թագավորը միապետ էր՝ օժտված օրենսդիր և գործադիր բոլոր լիազորություններով, կառավարչական որոշումներն ընդունում էր միանձնյա, ուստի դրանց որակը և նպատակասլացությունը պայմանավորվում էին նրա անհատականության՝ իբրև առաջնորդի, հատկանիշներով: Նրա որոշումների վրա կարող էին ազդել բարձր պետական ավագանին և կրոնական ավագ կառույցները՝ որպես ժողովրդի աշխարհիկ և հոգևոր պատասխանատուներ: Եթե միապետն ունի արդյունավետ առաջնորդի ակնհայտ հատկա-

¹⁵ Տե՛ս *Մովսես Խորենացի*, նշվ. աշխ., էջ 46:

¹⁶ Նույն տեղում, էջ 46:

¹⁷ Նույն տեղում, էջ 47:


նիշներ, և ավագանին ու եկեղեցին գործում են թագավորի հետ փոխհամաձայնեցված, ապա երկրի ներքին ու արտաքին քաղաքականությունը կարող է արձանագրել նվաճումներ, ու այն կունենա վերընթաց զարգացում և հզորացում: Տիգրան Բ-ի ժամանակաշրջանն այդպիսին էր, թագավորը խոհեմ էր ու քաջ, արդարադատ, օժտված մարդկային վեհ հատկանիշներով, ուներ նորի, առաջադիմականի զգացում, ինչի արդյունքում երկիրը դարձավ լիարժեք անկախ, «հարկ վճարողից հարկ պահանջող», վերազինեց բանակը, «խաղաղություն և շենություն բերեց, բոլորին լիացրեց յուզով և մեղրով»¹⁸: Նման պայմաններում հասարակությունում իշխում են համերաշխությունը, միասնությունը, առողջ սոցիալ-հոգեբանական, հայրենասիրության միջավայրը:

Եթե երկրում խախտվում է վերը նշված եռամիասնությունը, այսինքն՝ միապետի, նախարարների և հոգևոր կենտրոնի միջև առաջանում են խնդիրներ, խախտվում է նրանց փոխհամագործակցությունը, ընդունվում են անարդարացի, չիմնավորված կառավարչական որոշումներ, ապա խաթարվում է հանրային միջավայրը, դառնում վտանգավոր, անկայուն, ներքին անկայունությանը գումարվում է արտաքին սպառնալիքը, և պետականությունը, երկրի անկախությունը հայտնվում են կասկածելի անվտանգության վիճակում:

¹⁸ Նույն տեղում, էջ 46:

Գծապատկեր 1.

**Հանրային կառավարման համակարգը պատմական
Հայաստանում**



Հենց այս իրավիճակն է արտացոլված Մ. Խորենացու՝ Արտաշիրի նկատմամբ նախարարների և Սահակ կաթողիկոսի տարաձայնություններում¹⁹. «Հայոց Արտաշիր թագավորը սկսեց թաղվել անչափ անառակ ցանկությունների

¹⁹ *Մովսես Խորենացի*, նույն տեղում, էջ 235:

մեջ, այն աստիճան, որ բոլոր նախարարները նրանից զգվեցին: Նրանք եկան մեծն Սահակի մոտ, բողոք բարձրացրին և նրան էլ հրավիրեցին իրենց օգնելու, որպեսզի (Արտաշիրի) վրա չարախոսեն Պարսից թագավորի առաջ, իրենց թագավորին դեն գցեն և պարսիկ բերեն աշխարհին կառավարող», - նկարագրում է վիճակը Խորենացին իր հանրահայտ «Ռդբում»:

«Իսկ (մեծն Սահակը) ասաց. «Ձեզ սուտ չեմ հանում, ինքս էլ լսել եմ նրա ցավալի ամոթալի արարմունքները, շատ անգամ հանդիմանել եմ, բայց նա ուրացել է»²⁰: Երբ կաթողիկոսը նախարարներին այլ տարբերակ է առաջարկում, նրանք ասում են. «Որովհետև դու չկամեցար մեզ հետ համակերպվել, որ նա չթագավորե, ահա մենք էլ չենք կամենում, որ դու մեզ քահանա լինես»²¹:

Այդ իրադարձություններն առավել մանրամասն նկարագրել է Ղազար Փարպեցին²²: Պարսից Վռամ թագավորը շատ էր ցանկանում «վերացնել Արշակունյաց տոհմի թագավորությունը» և շատ ուրախացավ, երբ լսեց Հայոց արքա Արտաշեսին մեղադրողներից մեկից. «Բնավ ինչի՞ է պետք թագավորը, թող մի պարսիկ իշխան գա ժամանակով և մեզ վրա լինի վերակացու, որպեսզի մեզանից յուրաքանչյուրի հպատակությանն ու անհպատակությանը տեղյակ դառնալով հայտնի ձեզ»²³:

²⁰ Նույն տեղում, էջ 228:

²¹ Նույն տեղում, էջ 229:

²² Տե՛ս *Ղազար Փարպեցի*, Հայոց պատմություն, Ե., ԵՊՀ հրատ., 1982, էջ 45-85:

²³ Նույն տեղում, էջ 57:

Արդյունքում վերացավ թագավորությունը, պարսից արքան նշանակեց մարզպետ, փոխվեց քահանայապետը. կաթողիկոս Սահակին փոխարինեց Սուրմակ երեցը, կարճ ժամանակ անց՝ ասորի Բրքիշոն, այնուհետև՝ նույնպես ասորի Շամուելը²⁴:

Տեղի ունեցածի տխուր տրամաբանությունն այն է, որ առաջանում է աղետաբեր բախում թագավորի, նախարարների և եկեղեցու միջև: Սրան գումարվում է ստեղծված շատ աննպաստ հանրային միջավայրը՝ «իշխանները ապստամբ, գողերին գողակից, կաշառակեր, ...աշխարհ ավերող», «դատավորները տմարդի, սուտ, խաբող, կաշառակեր, իրավունքը չպահպանող», «կրոնավորները կեղծավոր, ցուցամոլ, սնափառ», «ուսուցիչները տխմար, փողով ընտրված», «զինվորականները անարի, պարծենկոտ, զենք ատող, ծուլ», «կառավարիչները կարգ չեն պահպանում, անողորմ են, սիրելիները դավաճանված են, թշնամիները գորացած», «թագավորները անտանելի հրամաններ են տալիս», «սերն ու ամորթը ամենքից վերացած»²⁵:

Առաջացած կոնֆլիկտը, անարդյունավետ կառավարման հետևանքով ստեղծված խիստ անառողջ և վտանգավոր, անմիաբան միջավայրը, արտաքին թշնամիների նվաճողական նկրտումները դարձան այն վճռական գործոնները, որոնք հանգեցրին 700-ամյա թագավորության և երկրի անկախության կորստին:

Երկարատև և համառ պայքարի արդյունքում 885 թ. ստեղծվեց Բագրատունիների հայոց թագավորությունը, որը գոյատևեց 160 տարի՝ մինչև 1045 թ.: Պետության գլխավորը

²⁴ Նույն տեղում, էջ 59-61:

²⁵ *Մովսես Խորենացի*, նշվ. աշխ., էջ 238-239:

թագավորն էր, որի իշխանությունը, ինչպես Մեծ Հայքում, Ժառանգական բնույթ ուներ: Պետական կառավարումը թեև հիմնականում կրում էր հայոց պետականության նախնաթաց շրջանի ավանդույթները, սակայն բնութագրվում էր որոշ առանձնահատկություններով: Նախ, պետական կառավարման համակարգը զուտ ունիտար չէր, այն ուներ կիսաֆեդերատիվ բնույթ: Պատմական աղբյուրների տեղեկատվությամբ վարչական համակարգը բաղկացած էր երկու մասից. առաջինը համապետական էր, երկրորդը՝ միայն տվյալ ֆեոդալական տան (վարչական միավորի) սահմաններում գործող վարչական մարմիններ (կենտրոնական գահերեց իշխանի, արքունիքին կից և տեղերում նշանակված պաշտոնյաներ)²⁶: X դարի կեսերին - XI դ. Հայոց թագավորությունն ուներ հետևյալ պատկերը՝ Բագրատունյաց (կենտրոնական) թագավորություն + Վասպուրականի + Սյունյաց + Կարսի + Տաշիր-Ձորագետի թագավորություններ + Անձևացյաց + Սասունի իշխանությունները և այլն²⁷: Իսկ արքունիքը կազմված էր լինում դիվանից կամ պետական խորհրդից և արքունի գործակալություններից: Արքունիքներ ունեին Բագրատունի հայոց թագավորները, Վասպուրականի և Սյունիքի թագավորները, ինչպես նաև գահակալ և գահերեց իշխանները²⁸:

Երկրորդ, Բագրատունիները պետական կառավարման համակարգում պահպանեցին ոչ հեռու անցյալի մի շարք պաշտոնների անունները՝ մարզպան, իշխանաց իշ-

²⁶ Տե՛ս *Մաթևոսյան Ռ. Ի.*, Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը, Ե., ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1990, էջ 99-100:

²⁷ Նույն տեղում, էջ 199:

²⁸ Նույն տեղում, էջ 101:

խան, նրանց բավական հարազատ էին իրանա-արաբական միջավայրից փոխանցված «շահնշահ» և «ոստիկան» տիտղոսները²⁹:

Պատմագիտության մեջ Բագրատունյաց պետության անկման հիմնական պատճառներ են համարվում Բյուզանդիայի ագրեսիան և Անի մայրաքաղաքի կորուստը³⁰: Ըստ Մ. Ուռհայեցու տեսակետի՝ պետականության կորուստը որոշակի քաղաքական համակարգի կազմալուծման գործընթացի արդյունք էր³¹: Ենթադրաբար այս տեսակետն իրավացի է այն պատճառով, որ կիսաֆեդերատիվ պետությունում, որը չուներ իրավական և գաղափարական ամուր հիմք, այլ պատմիչների վկայությամբ կառուցված էր գերազանցապես երկկողմանի անձնական կապերի վրա, այս պարագայում միասնականության և համախմբվածության ապահովումը բաղադրիչ թագավորությունների և իշխանապետությունների միջև դժվարագույն խնդիր է, իսկ քաղաքական համակարգի կազմալուծումը կարելի է դիտել որպես պետականության կորստի նախապես նշված երկու պատճառների հիմք:

Կիլիկյան Հայաստանում (մեծ իշխանապետության՝ 1080-1198 թթ. և թագավորության՝ 1198-1375 թթ.) պետական կառավարման համակարգը ձևավորվել է հայկական պետականությանը բնորոշ սկզբունքներով՝ ներառելով եվրոպական պետությունների փորձը:

²⁹ Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», Ե., հ. 3, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1976, էջ 266:

³⁰ Տե՛ս *Մաթևոսյան Ռ. Բ.*, նշվ. աշխ., էջ 248-261:

³¹ Տե՛ս նույն տեղում, էջ 250:

Կիլիկյան Հայաստանի պետական կառավարումն իրագործվել է Սմբատ Սպարապետի «Դատաստանագրքով» (1265 թ.), որը հանդիսացել է յուրօրինակ օրենսդրանորմատիվային կարևորագույն փաստաթուղթ:

Առավել մանրամասն Կիլիկիայի հայկական պետության թագավորական իշխանության կառավարման մարմինների լիազորությունները և գործառույթները լուսաբանված են Ա. Գ. Սուքիասյանի ծավալուն և տողերիս հեղինակի աշխատություններում³²:

Գիտական գրականության մեջ Կիլիկիայի հայկական պետության կործանման երկու պատճառ է կարևորվում³³.

- արտաքին՝ արևմտաեվրոպական պետությունների նենգ քաղաքականությունը, ինչպես նաև կաթոլիկական եկեղեցու թշնամական վերաբերմունքը նրա նկատմամբ, որովհետև բնակչությունը դեմ էր հայ եկեղեցու միավորմանը կաթոլիկականին,
- ներքին՝ մշտական պայքարը թագավորական իշխանության և առանձին անհնազանդ իշխանական տոհմերի միջև, ինչպես նաև ֆեոդալների միջև մղվող երկպառակտչական սուր պայքարը, ինչի պատճառով հայ թագավորներին չհաջողվեց վերջնականապես վերացնել կենտրոնախույս ուժերը և ստեղծել կենտրոնացված ուժեղ միապետություն:

³² Տե՛ս **Սուքիասյան Ա. Գ.**, Կիլիկիայի հայկական պետության և իրավունքի պատմություն, Ե., ԵՊՀ հրատ., 1978, 392 էջ, **Սուվարյան Յու. Մ., Միրզոյան Վ. Ա.**, Հանրային կառավարման տեսություն և պատմություն, Ե., «Գիտություն», 2013, էջ 127-130:

³³ Տե՛ս **Սուքիասյան Ա. Գ.**, նշվ. աշխ., էջ 99:

Ցավոք, վերջին պատճառը միշտ բնորոշ է հայկական պետականությունների կործանման գործընթացին: Օրինաչափության բնույթ ստացող այդ երևույթն ահագանգ պետք է հանդիսանա հայ քաղաքակրթական, հատկապես քաղաքագիտական մտքի, պետականաշինության գործնական խնդիրներով զբաղվող քաղաքական ուժերի և լայն հանրության համար:

Հանրային կառավարման սահմանադրականությունը և մեթոդաբանական հիմունքներն ըստ հայ մտածողների

Պետական և տարածքային կառավարման կայացման ու զարգացման գործընթացը Հայաստանում ուղեկցվել է օրենսդրանորմատիվային հիմունքների ստեղծմամբ: Թե՛ թագավորը՝ իբրև պետության գլուխ, թե՛ եկեղեցին՝ որպես մեծն դատավարության լիազորություն կրող և հանրության մտավոր ու քաղաքացիական կյանքի պատասխանատու, ձգտել են իրենց որոշումների և գործողությունների համար ստեղծել իրավական հիմք: Բացի այդ, ապագա պետականության ակնկալիքով նաև ստեղծվել են իրավանորմատիվային կամ սահմանադրական բնույթի աշխատություններ: Այս առումով արժեքավոր են մասնավորապես «Կանոնագիրք Հայոցը», Արցախի և Ուտիքի արքա Վաչագանի «Կանոնական սահմանադրությունը», Դավիթ Ալավկա Որդու «Կանոնական օրինադրությունը», Մխիթար Գոշի և Սմբատ Սպարապետի «Դատաստանագրքերը», ավելի ուշ ստեղծված Շ. և Հ. Շահամիրյանների «Որոգայթ փառաց» աշխատությունը և այլն:

Քանի որ նշված աշխատությունների բովանդակության քննական վերլուծությունը տեղ է գտել գիտական գրականության մեջ, ուստի ստորև կկարևորվեն այն առանցքային դրույթները, որոնք հանրային կառավարման համակարգի համար ունեն էական մեթոդաբանական նշանակություն:

Հայ մտածողներին առաջին հերթին մտահոգել է ***պետության կառավարման բնույթի, պետական համակարգի կառուցվածքի խնդիրը***: Այն Մեծ Հայքի և միջնադարյան հայկական պետությունների համար լուսաբանվել է հայ պատմիչների աշխատություններում, ինչի մասին վերևում նշվեց ու տեսականորեն խորությամբ դիտարկվել է Մ. Գոշի, Ս. Սպարապետի դատաստանագրքերում, Շ. և Հ. Շահամիրյանների «Որոգայթ փառացում»:

Մ. Գոշը և Ս. Սպարապետը պետության աստվածաբանական մեկնաբանության կողմնակից էին, նրանց կարծիքով թագավորները կարգվում են աստծո կողմից, նրա տեղապահներն են երկրում³⁴: Ըստ նրանց՝ թագավորության նպատակահարմար կառուցվածքը կենտրոնացված իշխանությունն է միապետի գլխավորությամբ: Ընդ որում, Ս. Սպարապետը կենտրոնացված ուժեղ իշխանությունը համարել է անհրաժեշտություն, ինչը բացատրվում է երկրի անվտանգությունն ապահովելու հրամայականով:

Մ. Գոշի տեսության առանձնահատկություններից է այն, որ պետությունն ու եկեղեցին դիտվում են որպես երկու հիմնասյուներ, որոնք պահում են հասարակության ամբողջ

³⁴ Տե՛ս ***Մխիթար Գոշ***, նշվ. աշխ., էջ 301-305, 404-405, Спарамет С. Судебник, Е., Айпетрат, 1958, с. 5, 81.

շենքը՝ որպես քաղաքական իրողություն³⁵: Այս դրույթը որոշակի քայլ էր դեպի հանրային կառավարման գաղափարը, երբ բացի պետական մարմնից, հասարակության կառավարման համակարգում կարևորվում էր մեկ այլ կառույցի՝ եկեղեցու էական դերը: Հին Հայաստանում տարածքային կառավարման կառույցները՝ նախարարները, քաղաքապետները, գյուղական համայնքների ղեկավարները, կենտրոնական իշխանության հետ մեկտեղ պետական մարմիններ էին:

Շ. և Հ. Շահամիրյանների «Որոգայթ փառաց»-ում հիմնավորվում է խորհրդարանական հանրապետության գաղափարը՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանության թերով³⁶, և թեև լիազորությունների պատվիրակումը դրանց միջև հստակ չէր, սակայն ժողովրդավարական հիմունքներով՝ ուղղակի ընտրությամբ իշխանության մարմինների ձևավորման կարգը և պետական կառավարման բնույթն էական առաջընթաց էին ժամանակի պետական կառավարման պարադիգմայի համեմատ (գծապատկեր 2.)³⁷:

Հաջորդ առանցքային խնդիրը, որ դիտարկվել է հայ մտավոր մշակույթում, վերաբերում է ***օրենքի գերակայությանը, մարդու իրավունքների հարգմանը և օրենքների ու կառավարչական որոշումների արդարությանը***, որոնք սահմանադրականության կարևորագույն բաղադրիչներից են:


³⁵ Տե՛ս *Մխիթար Գոշ*, նշվ. աշխ., էջ ԺԵ:

³⁶ Տե՛ս Որոգայթ փառաց, Ե., «Հայաստան», 2002, 298 էջ:

³⁷ Տե՛ս, մանրամասն, *Սուվարյան Յու. Մ., Միրզոյան Վ. Ա.*, նշվ. աշխ., էջ 165:

Գծապատկեր 2.

Հանրային կառավարումն ըստ «Որոգայթ փառացի»



Իրավակարգավորման բնույթ ունեցող համապարփակ փաստաթուղթը հայ իրականության մեջ «Կանոնագիրք Հայոցն» է, որը բովանդակում է եկեղեցական հայտնի ժողովների (Աշտիշատի (IV դար), Շահապիվանի (V դար), Դվինի (VI և VIII դարեր և այլն) որոշումները և կրոնական խոշոր

գործիչների գրությունները, որոնք վերաբերում են կրոնական ծիսակատարությունների սկզբունքներին, եկեղեցու սպասավորների վարքագծին, ամուսնության, ընտանիքի, մարդկանց բարոյական կերպարի ընդունելի նորմերին, համակեցության կանոններին, իսկ դրանք խախտելու համար սահմանվում են զանազան պատիժներ: Ուշագրավ է, որ կանոնագրքում հոդվածներ կան կաշառակերության, տուրքերու հարկեր սահմանելու և դրանց բաշխման մասին: Կանոնագրքի գլխավոր փիլիսոփայությունն այն է, որ գոյություն ունեն կամ սահմանված են համակեցության որոշակի կանոններ, որոնք պարտադիր են հանրության բոլոր անդամների համար: Այդ կանոնների համախումբը Վաչագան արքայի պարագայում անվանվել է «Կանոնական սահմանադրություն»՝ բաղկացած 21 հոդվածից, Դավիթ Ալավկա Որդին այն կոչել է «Կանոնական օրինադրություն» (97 հոդված):

Օրենքի գերակայության, արդարության, ղեկավար կադրերի ճիշտ ընտրության դրույթներով հատկապես առանձնանում է Ներսես Շնորհալու «Թուղթ ընդհանրականը» (1166 թ.)³⁸: Օրենքի գերակայության առումով խիստ ուշագրավ է նրա հետևյալ դրույթը. «Իսկ մեծատունը, որ իշխանաբար կարող էր իր ուզածը անել, ավելի հանցավոր է լինում, երբ արհամարհում է իրավունքը»³⁹:

Դիտարկվող աշխատություններում առանձնահատուկ կարևորվում է տուրքերի և հարկերի սահմանման, դրանց բաշխման արդարության սկզբունքը: Այդ իմաստով բնութագրական է Ն. Շնորհալու հարցադրումը. «Անիրավությամբ

³⁸ Տե՛ս *Ներսես Շնորհալի*, Թուղթ ընդհանրական, Ե., «Իրավունք», 2009:

³⁹ Նույն տեղում, էջ 85:

մի՛ վարվեք հպատակների հետ ծանր ու դժվարին հարկեր դնելով, որոնք չեն կարող կրել, այլ յուրաքանչյուրին օրենքով և ըստ իր կարողության չափի դատեք»⁴⁰: Նման բնույթի դրույթներ կան Աղվանքի «Կանոնական սահմանադրությունում» (գլուխ «Դ»), «Կանոնագիրք Հայոց»-ում, Ս. Սպարապետի «Դատաստանագրքում» և այլն:

Պատմական Հայաստանում հանրային կյանքի իրավակարգավորման կանոններում կարևորվել է նաև *կրթության, գիտության և մշակույթի զարգացման* անհրաժեշտությունը: Մասնավորապես «Կանոնագիրք Հայոց»-ում տեղ գտած Սահակ Պարթևի մշակած կանոններում անհրաժեշտ է համարվում դպրոցների կազմակերպումը⁴¹: Աշտիշատի ժողովի որոշման «Զ» գլխում պահանջվում է «երկրում լուսավորություն տարածելու նպատակով ողջ Հայաստանում բաց անել հունարեն և ասորերեն լեզուների դպրոցներ»⁴²:

«Որոգայթ փառաց»-ում առանձնահատուկ նշանակություն է տրվել գիտության և մշակույթի զարգացման անհրաժեշտությանը. «Հայոց տնից օժանդակություն պետք է լինի մասնագետների, հատկապես փիլիսոփայության, աստղագիտության, բժշկության, երաժշտության, ճարտասանության և այլ բնագավառների ներկայացուցիչների նկատմամբ»⁴³:

Գիտությանն ու մշակույթին աջակցելուն զուգընթաց «Որոգայթ փառաց»-ում առանձին տեղ է հատկացվել նաև

⁴⁰ Նույն տեղում, էջ 80-81:

⁴¹ Տե՛ս «*Կանոնագիրք Հայոց*», գիրք Ա, էջ 372-373:

⁴² Տե՛ս *Ավագյան Ռ.*, նշվ. աշխ., էջ 109-110:

⁴³ Տե՛ս «*Որոգայթ փառաց*», էջ 134:

նորամուծությունների խթանմանը (գլուխ 502), ըստ որի՝ ապրանքների նոր տեսակների ստեղծման կամ բարձր որակի («Եվրոպական կերպի») արտադրանքի թողարկման համար Հայոց տունը պետք է հեղինակներին նյութապես խթանի: Սա մի խնդիր է, որ տեխնոլոգիական զարգացման առումով ներկայումս գերադիական է:

Ընդհանրացնելով՝ հարկ է նկատել, որ հին և միջնադարյան Հայաստանում պետական ու տարածքային կառավարումն իրագործվել է ժամանակին համահունչ օրենսդրանորմատիվային հիմքով, բավարար մակարդակի սահմանադրականությամբ, հայ մտավոր մշակույթում կարելի էր և մշակվել են հանրային կառավարման մեթոդաբանական որոշակի հիմքեր, իսկ անցյալի փորձը և մշակութային ժառանգությունը մանավանդ պատմության դասերը, մշտապես արժանի են ուշադրության՝ քաղաքացիական հասարակության ճիշտ կողմնորոշման, քաղաքագիտական մտքի զարգացման և հանրային կառավարման արդյունավետության բարձրացման համար:

1.2. ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ XX ԴԱՐՈՒՄ ԵՎ XXI ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՌՈՐԴՈՒՄ*

1. Առաջին հանրապետություն

XX դարի սկզբին՝ 1918 թ. մայիսի 28-ին՝ Կիլիկյան հայկական թագավորության անկումից 543 տարի անց, վերականգնվել է Հայոց պետականությունը, և ստեղծվել ժամանակին համահունչ պառլամենտական հանրապետություն՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմիններով, որը ներկայումս անվանվում է Առաջին հանրապետություն: Սկզբնական փուլում օրենսդիր մարմնի գործառույթները, այդ թվում՝ կառավարության ձևավորումը, իրագործել է Հայոց ազգային խորհուրդը, այնուհետև՝ Հայաստանի խորհուրդը (1918 թ. օգոստոսի 1-ից), իսկ մեկ տարի հետո՝ 1919 թ. օգոստոսի 1-ից, սկսել է գործել ժողովրդի կողմից ընտրված բազմակուսակցական Խորհրդարանը՝ իր խորհրդարանական 12 հանձնաժողովներով¹:

Առաջին հանրապետության բարձրագույն գործադիր մարմինը՝ կառավարությունը, սկզբում բաղկացած էր վարչապետից, արտաքին գործերի, ներքին գործերի, ֆինանսների (եղևտական), զինվորական նախարարներից:

* Առաջին անգամ հրապարակվել է *Սուվարյան Յու. Մ., Միրզոյան Վ. Ա.*, Հանրային կառավարման տեսություն և պատմություն (Ե., «Գիտություն», 2013) գրքում: Սույն հրատարակությունում կատարվել են անհրաժեշտ լրացումներ:

¹ Տե՛ս *Ս. Վրացյան*, Հայաստանի Հանրապետություն, Փարիզ, 1928, էջ 132, 160, 251, 252:

Խորհրդարանի հաստատած կառավարության կազմն արդեն էականորեն բարեփոխված էր և բաղկացած վարչապետից (որը համատեղում էր նաև արտաքին գործերի նախարարի պաշտոնը), ներքին գործերի և արդարադատության, պարենավորման և ելևմտական, խնամատարության և աշխատանքի, հանրային կրթության և արվեստի, զինվորական նախարարներից²:

Ըստ Հայաստանի Հանրապետության վարչապետներից մեկի՝ Ալ. Խատիսյանի՝ 1918 թ. ամռանից մինչև 1920 թ. դեկտեմբերը Հայաստանի կառավարության գործունեությունը կարելի է բաժանել երեք շրջանի.

- պետական-կազմակերպական,
- քաղաքական-ստեղծագործական,
- արտաքին և ներքին թշնամիների դեմ կռվի³:

1919 թ. ամռանը, ըստ Ս. Վրացյանի, Հայաստանն արդեն կազմակերպված պետություն էր: Երկիրը բաժանված էր 10 գավառի (Երևանի, Էջմիածնի, Դարալագյազի, Նոր Բայազետի, Դիլիջանի, Ղարաքիլիսայի, Ալեքսանդրապոլի, Կարսի, Զանգեզուրի, Սուրմալուի)՝ կառավարման տարածքային մարմիններով՝ գավառապետներով ու վարչություններով⁴: Ստեղծվել էր դատական իշխանությունը (գավառներում՝ հաշտարար դատարաններ, Երևանում՝ շրջանային դատարան, դատաստանական պալատ, սենատ)⁵: Ձևավորվում էր չորրորդ իշխանությունը՝ մամուլը: Խորհրդարա-

² Տե՛ս նույն տեղում, էջ 252:

³ Տե՛ս **Ալ. Խատիսյան**, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968, էջ 133:

⁴ Տե՛ս **Ս. Վրացյան**, նշվ. աշխ., էջ 320–321:

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 320:

նում կառավարության հրապարակած ծրագրային հայտարարության մեջ (1919 թ., օգոստոս) կարևորվում էր գավառային և քաղաքային ինքնավարության զարգացումը⁶։ Ի դեպ, տեղական ինքնավարության խնդիրներով զբաղվում էր ներքին գործերի նախարարությունը։ Ըստ Ալ. Խատիսյանի՝ «...տեղական ինքնավարության վերաբերյալ օրինագծի հիմք ընդունված էր անոր կատարյալ անկախությունը. անոր հանձնված էին տեղական սահմաններու մեջ մեկ քանի գործառնությունները, պաշտոնները»⁷։ Այսպիսով, ամբողջանում էր ժողովրդավարական հիմունքների վրա կառուցված հանրային կառավարման համակարգ։ Կառավարության հայտարարած սոցիալ-տնտեսական քաղաքականության հիմնական դրույթներից էին.

- ստեղծել ամենամատչելի պետական վարկ՝ շահագործելու և գործարկելու մի շարք ձեռնարկություններ, պայքարել գործազրկության դեմ, կիրառել աշխատանքի վարձատրության կենսական նորմաներ,
- պետական օգնություն ցուցաբերել աշխատավոր դասակարգին՝ հատկապես բնական աղետներից քայքայված տնտեսությունը վերականգնելու համար,
- խրախուսել մասնավոր կապիտալի մուտքը երկիր,
- կարգավորել հարկային համակարգը՝ կիրառելով պրոգրեսիվ եկամտահարկ, ուժեղացնել ուղղակի հարկերն ի հաշիվ անուղղակի հարկերի,

⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 253:

⁷ Տե՛ս *Ալ. Խատիսյան*, նշվ. աշխ., էջ 134:

- արմատավորել ընդհանուր, պարտադիր, ձրի տարրական կրթություն, զարկ տալ մասնագիտական կրթությանը,
- աջակցել կոռպորատիվներին, զարկ տալ արտադրողական ուժերի զարգացմանը,
- իրականացնել կալվածատիրական, եկեղեցապատկան, վանքապատկան և մասնավոր գինեգործական հողերի ազգայնացումը և բաժանել այդ հողերը սակավահող գյուղացիությանը՝ ըստ նորմայի և կարիքի⁸:

Ակնհայտ է, որ տնտեսական քաղաքականության հիմքում ընկած էր մասնավոր սեփականատիրական հարաբերությունների գերակայությամբ շուկայական տնտեսական համակարգի գաղափարախոսությունը, որը բնորոշ էր եվրոպական քաղաքակրթությանը, սակայն որոշակի սոցիալական ուղղվածությամբ, ինչը պայմանավորված էր իշխող քաղաքական ուժի՝ ՀՅԴ-ի՝ իբրև սոցիալիստական կուսակցության ծրագրային դրույթներով:

Առաջին հանրապետությունը չհասցրեց մշակել և ընդունել երկրի սահմանադրությունը, թեև օրենսդրական դաշտի, մասնավորապես հիմնական օրենքի ստեղծման փորձ և տեսություն Հայաստանի պատմության նախընթաց շրջաններում առկա էր (Վաչագան Բարեպաշտի «Մահմանադրություն կանոնականը», Մ. Գոշի և Ս. Սպարապետի դատաստանագրքերը, Շահամիրյանցների «Որոգայթ փառացը» և այլն), սակայն Հայաստանի խորհուրդը, իսկ այնուհետև Խորհրդարանն ընդունել են համապատասխանաբար

⁸ Տե՛ս Մ. Վրացյան, նշվ. աշխ., էջ 253–254:

116 և 202 օրենք ու որոշում⁹, որոնք կազմել են հանրապետության կառավարման օրենսդրանորմատիվային դաշտը: Ինչպես վկայում են ժամանակակիցները և հրապարակված օրենսդրական ակտերը, ընդունված օրենքները վերաբերել են ընթացիկ կյանքի խնդիրներին, բխել են ստեղծված իրավիճակներից, և «ընդհանուր քաղաքականությունը բնորոշող կամ ընկերային, տնտեսական ու մշակութային ընդհանուր արժեք ունեցող օրենքներ, համեմատաբար, քիչ կան»¹⁰:

2. Երկրորդ հանրապետություն

1920 թ. նոյեմբերի 29-ին՝ ռազմաքաղաքական բարդ իրադրության պայմաններում, «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցությունը ստիպված էր պետական իշխանությունը զիջել բոլշևիկներին. Առաջին հանրապետությանը հաջորդեց Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը: Առաջին հանրապետությունը գոյատևել է 2,5 տարի՝ որպես անկախ պետություն, իսկ ՀԽՍՀ-ն՝ մինչև 1991 թ. սեպտեմբերի 21-ը՝ անկախության հանրաքվեն, թեև 1990 թ. օգոստոսի 23-ին ՀԽՍՀ նորընտիր, քաղաքական տարբեր ուժերի (ՀՀՇ, ՀԿԿ) ներկայացուցիչներից բաղկացած Գերագույն խորհուրդը, որում գերակշռում էին Հայոց համագգային շարժումը ներկայացնող կամ համակիր պատգամավորները, ընդունել էր Հանրապետության Անկախության հռչակագիրը, և երկրում իրագործվում էր ինքնուրույն սոցիալ-տնտեսական քաղաքակա-

⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 518, 529:

¹⁰ Նույն տեղում, էջ 518, 519, 546:

նություն, ինչը նշանակում էր, որ Կոմունիստական կուսակցությունը Հայաստանում 1990 թ. օգոստոսին սահմանադրորեն զրկվել էր իշխանությունից: Երկրորդ հանրապետությունը նույնպես ուներ պառլամենտական հանրապետության ատրիբուտները՝ օրենսդիր, գործադիր, դատական իշխանություններ, զինանշան, օրհներգ, սահմանադրություն, սակայն լիարժեք անկախ պետություն չէր, գտնվում էր ԽՍՀՄ կազմում. պետական կառավարման մարմինների գործառույթները սահմանափակ էին, նրանք հիմնականում իրագործում էին միութենական կառավարման մարմինների որոշումները, իրականացնում նրանց կողմից վարվող տնտեսական ու սոցիալական քաղաքականությունը Հայաստանի տարածքում:


Խորհրդային Հայաստանի տնտեսական համակարգի հիմքն արտադրության միջոցների սոցիալիստական, ըստ էության՝ պետական սեփականությունն էր, իսկ կառավարումն ուներ խիստ կենտրոնացված բնույթ: Մասնավորապես տնտեսության կառավարման տիրապետող եղանակը միասնական, օրենքի ուժ ունեցող համընդգրկուն պլանների սահմանումը և դրանց անվերապահ կատարման ապահովումն էր: Երկրում իշխող գաղափարախոսությունը մարքս-լենինյան կոմունիստական ուսմունքն էր, ինչն էլ միաժամանակ երկրի կառավարման մեթոդաբանական հիմքն էր: Այդ հիմքի վրա ՀԽՍՀ-ում, ընդօրինակելով ՌՍՖՍՀ, իսկ այնուհետև ԽՍՀՄ հիմնական օրենքները, ընդունվել են երեք սահմանադրություններ՝ 1922-ին (1925 թ. ենթարկվել է որոշ բարեփոխումների), 1937 և 1978 թվականներին¹¹: Հիմնական

¹¹ Տե՛ս ՀՄՀ, «Սովետական Հայաստան», Եր., 1987, էջ 8:

օրենքի հիման վրա ձևավորվել է երկրի օրենսդրանորմատիվային դաշտը: Պետական կառավարման համակարգը, ըստ վերջին սահմանադրության, ներկայացված է գծապատկեր 1-ում:

Գծապատկեր 1.

ՀԽՍՀ պետական կառավարման համակարգը



Համաձայն ՀԽՍՀ սահմանադրության՝ պետական իշխանության բարձրագույն մարմինը Գերագույն խորհուրդն էր, որն իրավասու էր ընդունելու երկրի սահմանադրությունը, կազմավորելու գործադիր և դատական իշխանության մարմինները, հաստատելու տնտեսական ու սոցիալական զարգացման պլաններն ու պետական բյուջեն, ձևավորելու օրենսդրական դաշտը:

Պետական իշխանության բարձրագույն գործադիր և կարգադրիչ մարմինը ՀԽՍՀ Մինիստրների խորհուրդն էր՝ երկրի տնտեսության, սոցիալական ոլորտի և մշակույթի կառավարման ընդարձակ իրավասություններով, որոնք սահմանվել էին սահմանադրությամբ և «ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի մասին» օրենքով, ինչպես նաև ԽՍՀՄ սահմանադրությամբ միութենական հանրապետություններին վերապահված լիազորություններով: Տեղական կառավարման մարմիններ էին քաղաքների, շրջանների, ավանների և գյուղերի ժողովրդական պատգամավորների համապատասխան սովետները՝ իբրև ներկայացուցչական մարմիններ, և տեղական սովետների գործադիր կոմիտեները՝ որպես գործադիր և կարգադրիչ մարմիններ: Ի դեպ, 1987 թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ ՀԽՍՀ տարածքը բաժանված էր 37 գյուղական և 10 քաղաքային շրջանների, գոյություն ունեին 22 հանրապետական և 5 շրջանային ենթակայության քաղաքներ, 31 քաղաքատիպ ավաններ, 479 գյուղական սովետներ¹²: Հարկ է ավելացնել, որ պետական կառավարման ողջ համակարգը գործում էր ԽՄԿԿ կենտրոնական, հանրապետական ու շրջանային (քաղաքային) մարմիններ-

¹² Տե՛ս ՀՄՀ, «Սովետական Հայաստան», Եր., 1987, էջ 19:

րի ղեկավարությամբ ու վերահսկողությամբ, քանի որ թե՛ ԽՍՀՄ, թե՛ ՀԽՍՀ սահմանադրություններով (6-րդ հոդված) ամրագրված էր, որ սովետական հասարակության ղեկավար և ուղղություն տվող ուժը, նրա քաղաքական համակարգի միջուկը ԽՄԿԿ-ն է:

Խորհրդային իշխանության տարիներին ստեղծվել են կառավարման տեսությանն առնչվող աշխատություններ, որոնցում մարքս-լենինյան ուսմունքի, հատկապես պետության դասակարգային մեկնաբանության շրջանակներում հիմնավորվում էին կառավարման մեթոդաբանությունը, սահմանադրական հիմունքները, տնտեսության պլանային և ֆինանսական կառավարման սկզբունքները: Ընդունվում էր պետության պատմական անցողիկության դրույթը, ըստ որի՝ սոցիալիստական պետությունը դիտվում էր որպես պետության բարձրագույն տիպ, ինչը աստիճանաբար կմահանա՝ իր տեղը զիջելով կոմունիստական ինքնավարությանը: Այս դրույթը բխել է պետության դասակարգային մեկնաբանությունից և չի հաստատվում իրական կյանքի իրողություններով, մանավանդ կոմունիստական ապագայի վերաբերյալ պատկերացումների անհեռանկարայնության արդի պայմաններում:

Պետության՝ ԽՍՀՄ-ում ստեղծված սոցիալիստական տիպը կառուցվել էր մի քաղաքական հոսանքի՝ մարքս-լենինյան գաղափարախոսության հենքի վրա, դրա տնտեսական համակարգն արտադրության միջոցների պետական անարդյունավետ սեփականությունն էր, պետական կառավարման զինանոցում գերակշռում էին վարչական մեթոդները, խիստ սահմանափակ էր տնտեսվարող սուբյեկտների տնտեսական ազատությունը, համակարգում բացակայում

էր զարգացման բնական շարժիչ ուժը՝ տնտեսական մրցակցությունը: Նման քաղաքական ու տնտեսական համակարգը կամ պետք էր էականորեն բարեփոխել, կամ օրինաչափորեն հարկ էր» փոխարինել առավել առաջադիմական քաղաքական ու տնտեսական համակարգով և դրան համապատասխան պետական կառավարման կառուցակարգով, ինչը տեղի ունեցավ 1991 թվականին:

3. Երրորդ հանրապետություն

Երրորդ հանրապետության հռչակման առաջին իրավական փաստաթղթում՝ Հայաստանի անկախության մասին հռչակագրում, որն ընդունել է Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը 1990 թ. օգոստոսի 23-ին, նշվել է, որ զարգացնելով 1918 թ. մայիսի 28-ին ստեղծված անկախ Հայաստանի Հանրապետության ժողովրդավարական ավանդույթները՝ հռչակվել է անկախ պետականության հաստատման գործընթացի սկիզբը:

1991 թ. սեպտեմբերի 21-ի անկախության հանրաքվեով ավարտվել է Հայաստանում անկախ պետականության հաստատման գործընթացը, և արդեն 1995 թ. հուլիսի 5-ին հանրաքվեով ընդունված Սահմանադրությամբ հռչակվել է, որ «Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է»¹³: Թեև անկախ պետականությունը Հայաստանում, ինչպես արդեն նշվել է, հարուստ պատմություն ունի, մեծ է նաև մեզանում սահմանադրության ստեղծման փորձը,

¹³ Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, Եր., «Մխիթար Գոշ», 1997, էջ 4:

սակայն գործնականում առաջին անգամ 1995 թ. Պետականորեն ընդունվել է երկրի հիմնական օրենքը, որի մշակման ընթացքում, անշուշտ, հաշվի են առնվել այդ ասպարեզում ոչ միայն ազգային, այլ նաև համաշխարհային նվաճումները:

Երրորդ հանրապետությունը ստեղծման պահից և մինչև 1991 թ. հանրապետության առաջին նախագահի ընտրությունը պառլամենտական բնույթ ուներ: Գերագույն խորհրդի նախագահը պետության ղեկավարն էր, իսկ կառավարությունը ձևավորվել էր պառլամենտում ու հաշվետու էր նրան: Հանրապետության նախագահի ընտրությամբ անցում կատարվեց կիսանախագահական կառավարման համակարգին, ինչն ամրագրվեց 1995թ. հուլիսի 5-ին ընդունված երկրի սահմանադրությամբ: Հետագայում անհրաժեշտություն առաջացավ կատարելագործելու հանրային կառավարման համակարգը, մասնավորապես ճշգրտելու ու հավասարակշռելու ՀՀ նախագահի, օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների լիազորությունները, ստեղծելու զսպումների և հակակշիռների արդյունավետ համակարգ: Այդ նպատակով գործող սահմանադրությունում կատարվեցին անհրաժեշտ բարեփոխումներ, և փոփոխություններով տարբերակը հանրաքվեով ընդունվեց 2005 թ. նոյեմբերի 27-ին: Հայկական Երրորդ հանրապետության սահմանադրորեն ամրագրված կառավարման համակարգը համապատասխանում էր հանրային կառավարման ժամանակակից պահանջներին: Ըստ ՀՀ սահմանադրության՝ հանրապետության նախագահը պետության գլուխն էր, ապահովում էր օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեությունը (հոդված 49), իսկ օրենսդիր իշխանությունն

իրականացնում էր ՀՀ Ազգային ժողովը (հոդված 62), գործադիրը՝ ՀՀ կառավարությունը (հոդված 85), դատական իշխանությունը՝ սահմանադրական և ընդհանուր իրավասության դատարանները:

ՀՀ նախագահը ՀՀ սահմանադրությամբ սահմանված կարգով նշանակում և ազատում էր վարչապետին, կառավարության անդամներին, դատական իշխանության ղեկավար պաշտոնատար անձանց: Ազգային ժողովի ընդունած օրենքները հրապարակվում և գործադրվում են միայն ՀՀ նախագահի ստորագրելուց հետո: Ինչպես ամրագրված է ՀՀ Սահմանադրության 49-րդ հոդվածում, ՀՀ նախագահը հանրապետության անկախության, տարածքային ամբողջականության և անվտանգության երաշխավորն էր: Նա ներկայացնում էր հանրապետությունը միջազգային հարաբերություններում, կնքում միջազգային պայմանագրեր, դրանք ներկայացնում Ազգային ժողովի վավերացմանը, ստորագրում դրանց վավերագրերը, հաստատում էր միջազգային պայմանագրերը:

Ազգային ժողովն ընդունում է օրենքներ, ստեղծում տնտեսավարման համար անհրաժեշտ օրենսդրական դաշտ, կառավարության ներկայացմամբ հաստատում երկրի պետական բյուջեն, վարչատարածքային բաժանումը, ՀՀ նախագահի առաջարկությամբ նշանակում ՀՀ կենտրոնական բանկի նախագահ, վերահսկիչ պալատի նախագահ: Միաժամանակ, Ազգային ժողովն իրականացնում է վերահսկողություն պետական բյուջեի կատարման, օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից ստացված փոխառությունների ու վարկերի օգտագործման նկատմամբ: Իր օրենսդրական գործառույթներն իրակա-

նացնելու համար բարձրագույն օրենսդիր մարմինը կարող է ստեղծել ոչ ավելի, քան 12 մշտական հանձնաժողով, անհրաժեշտության դեպքում՝ ժամանակավոր հանձնաժողովներ, որոնք քննարկում են օրենքների նախագծերը և եզրակացություններ ներկայացնում Ազգային ժողով:

Ըստ սահմանադրության՝ գործել են հետևյալ մշտական հանձնաժողովները.

- Առողջապահության հարցերի (առողջապահություն, մայրություն և մանկություն),
- Արտաքին հարաբերությունների (միջազգային պայմանագրեր, միջազգային հարաբերություններ և միջխորհրդարանական կապեր),
- Գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերի (գիտություն, կրթություն, հրատարակչական գործ, մշակույթ, Սփյուռքի հետ կապեր, մամուլ, ռադիո, հեռուստատեսություն, երիտասարդություն, սպորտ),
- Գյուղատնտեսական և բնապահպանական հարցերի (գյուղատնտեսություն, բնական պաշարներ, բնության պահպանություն),
- Եվրոպական ինտեգրման հարցերի (Եվրամիության և Եվրախորհրդի հետ կապեր, Հայաստանի Հանրապետության օրենքների և եվրոպական օրենսդրության ներդաշնակեցում),
- Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի (մարդու և քաղաքացու իրավունքներ և ազատություններ, փաստաբանական և նոտարական ծառայություններ, երեխայի իրավունքներ, կուսակցություններ և այլ հասարակական

միավորումներ, կրոն, գենդերային հարցեր, ազգային փոքրամասնություններ, տեղեկատվություն),

- Պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի (պաշտպանություն, անվտանգություն, արտակարգ իրավիճակներ, ոստիկանություն, ռազմարդյունաբերական համալիր, ռազմական ուսումնական հաստատություններ, զինվորական և ոստիկանական ծառայություններ),
- Պետական-իրավական հարցերի (սահմանադրական փոփոխություններ, ընտրական համակարգ, հանրային ծառայություն, դատարանակազմություն, արդարադատություն, դատախազություն, քաղաքացիական, քրեական, վարչական օրենսդրություն, Ազգային ժողովի կանոնակարգ),
- Սոցիալական հարցերի (սոցիալական ապահովություն, հաշմանդամության հիմնահարցեր, աշխատանք, զբաղվածություն, բնակարանային պայմաններ, ժողովրդագրություն և հայրենադարձություն),
- Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման (տարածքային կառավարում, տեղական ինքնակառավարում, տարածքային զարգացում, համայնքային ծառայություն, տեղական հարկեր, տուրքեր և վճարներ),
- Տնտեսական հարցերի (հարկեր, տուրքեր, վճարներ, արդյունաբերություն, քաղաքաշինություն, էներգետիկա, տրանսպորտ, կապ, հեռահաղորդակցություն, արտադրական ենթակառուցվածքի այլ ճյուղեր, զբոսաշրջություն, առևտուր և ծառայութ-

յուններ, ձեռնարկատիրական գործունեություն, պետական գույքի կառավարում),


- Ֆինանսավարկային և բյուջետային հարցերի (բյուջետային օրենսդրություն, պետական բյուջե, փոխառություններ, վարկեր, դրամ, դրամաշրջանառություն, բանկային համակարգ, ֆինանսավարկային կազմակերպություններ):

Կառավարությունը՝ որպես գործադիր իշխանության բարձրագույն մարմին, մշակում և իրականացնում էր ՀՀ ներքին քաղաքականությունը, մասնավորապես կառավարում է պետական սեփականությունը, իրագործում ֆինանսատնտեսական, վարկային, հարկային միասնական պետական քաղաքականություն, ապահովում պետական քաղաքականություն գիտության, կրթության, մշակույթի, առողջապահության, սոցիալական ապահովության, բնության պահպանության և այլ բնագավառներում, Ազգային ժողովի հաստատմանն է ներկայացնում պետական բյուջեի նախագիծը, ապահովում հաստատված բյուջեի կատարումը, բարձրագույն օրենսդիր մարմնի հավանությանն է ներկայացնում իր գործունեության ծրագիրը: Կառավարությունը կազմված էր վարչապետից և նախարարներից: Նախարարներից մեկը կարող էր վարչապետի առաջարկությամբ ՀՀ նախագահի կողմից նշանակվել փոխվարչապետ:

Կառավարության կառուցվածքը սահմանվում էր օրենքով: Գործադիր իշխանության գործառույթներն իրագործվում են ֆունկցիոնալ և ճյուղային նախարարությունների ու գերատեսչությունների միջոցով (գծապատկեր 2.):

Գծապատկեր 2.

Հայաստանի Հանրապետության գործադիր
իշխանության կառուցվածքը մինչև 2015 թ.
սահմանադրության ընդունումը



Հայաստանի Հանրապետությունում տարածքային կառավարումն իրականացվում է կառավարման մարզային մարմինների միջոցով: Հանրապետության վարչատարածքային միավորներն են մարզերը և համայնքները: Յուրաքանչյուր մարզ կազմված է քաղաքային և գյուղական համայնքներից: ՀՀ 10 մարզերն են՝ Արարատի, Արագածոտնի, Արմավիրի, Շիրակի, Լոռու, Գեղարքունիքի, Սյունիքի, Տավուշի, Կոտայքի և Վայոց Ձորի: Ըստ գործող օրենսդրության՝ մարզերում իրականացվում է պետական կառավարում, այսինքն՝ կառավարման մարզային մարմինները մարզերում իրագործում են կառավարության տարածքային քաղաքականությունը, համակարգում գործադիր իշխանության մարմինների տարածքային ծառայությունների գործունեությունը:

Մարզում պետական կառավարումն իրագործում է մարզպետը մարզպետարանի միջոցով, որը ֆինանսավորվում է պետական բյուջեից: Մարզպետներին նշանակում և ազատում է կառավարությունը: Մարզպետը նշանակում է մարզպետի տեղակալ (ՀՀ տարածքային կառավարման նախարարի համաձայնությամբ) և ձևավորում մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումները (գծապատկեր 3.):


ՀՀ-ում տարածքային կառավարման մարմինների գործունեությունը ղեկավարում էր տարածքային կառավարման նախարարը (ներկայումս՝ տարածքային կառավարման և արտադրական ենթակառուցվածքների նախարարը):

Հանրային կառավարման համակարգին բնորոշ առանձնահատկություններից են պետական կառավարման որոշ գործառույթների ապակենտրոնացումը և պատվիրա-

կումը բնակչությանը մոտ կանգնած կառավարման մարմիններին՝ համայնքային կառավարման օղակներին:

Գծապատկեր 3.

Տարածքային կառավարման կազմակերպական կառուցվածքը



ՀՀ Սահմանադրության 104-րդ հոդվածին համապատասխան՝ համայնքներում իրականացվում է տեղական ինքնակառավարում: Տեղական ինքնակառավարումը, ինչպես ամրագրված է Եվրոպական հռչակագրում (խարտիայում), տեղական ինքնակառավարման մարմինների՝ պետության կողմից ապահովված ու երաշխավորված իրավունքն է և իրական ունակությունը՝ սեփական պատասխանատվությամբ համայնքի բնակիչների բարօրության նպատակով, օրենքին համապատասխան, կանոնակարգելու և կառավարելու հանրային գործերի զգալի մասը: Իսկ համայնքը մեկ կամ մի քանի բնակավայրերի բնակչության հանրությունն է, իրավաբանական անձ, ունի սեփականության և այլ գույքային իրավունքներ: Չորս տարի (ներկայումս՝ 5 տարի) ժամկետով ընտրվում են տեղական ինքնակառավարման մարմիններ՝ համայնքի ավագանի (5–15 անդամով) և համայնքի ղեկավար՝ քաղաքապետ, գյուղապետ: Ըստ 2015 թ. ընդունված սահմանադրության (հոդված 181)՝ համայնքի ղեկավարը կարող է ընտրվել ուղղակի կամ անուղղակի սկզբունքով, ինչը նախատեսվում է ընտրական օրենսգրքով: Այդպիսով, համայնքի սեփականությունը տնօրինելու, համայնքային նշանակության խնդիրներ լուծելու համար լիազորությունները սահմանադրորեն փոխանցվում են տեղական ինքնակառավարման մարմիններին: Դա նշանակում է, որ տեղի է ունենում պետական կառավարման գործառույթների ապակենտրոնացում՝ տարածքային առումով:


Տեղական ինքնակառավարումն իրականացվում է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքին համապատասխան:

Մինչև 2005 թ. Սահմանադրության փոփոխությունները Երևանն ուներ մարզի կարգավիճակ, իսկ տեղական ինքնակառավարումն իրագործվում էր 12 թաղային համայնքներում, Երևանի քաղաքապետին նշանակում էր ՀՀ նախագահը: Այդ պայմաններում Երևանը չուներ ներկայացուցչական մարմին (ավագանի), միասնական հաստատված բյուջե և զարգացման ծրագիր: 2015 թ. սահմանադրական բարեփոխումներից հետո Հիմնական օրենքի 108-րդ հոդվածով Երևանը ստացավ համայնքի կարգավիճակ: Ըստ այդ հոդվածի՝ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորման առանձնահատկությունները սահմանվում են օրենքով: Օրենքով կարող է սահմանվել Երևանի քաղաքապետի ուղղակի կամ անուղղակի ընտրություն»: «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով Երևանի քաղաքապետը ընտրվում է մայրաքաղաքի ընտրովի բազմակուսակցական ավագանու նիստում:

Համայնքի ավագանին ներկայացուցչական մարմին է, օրենքով սահմանված կարգով տնօրինում է համայնքի սեփականությունը, հաստատում է համայնքի տարեկան բյուջեն, վերահսկում դրա կատարումը և համայնքի ստացած վարկերի օգտագործումը, իրավասու է սահմանելու տեղական տուրքեր և վճարներ, որոշումներ ընդունելու համայնքի սեփականություն համարվող գույքն օգտագործելու վերաբերյալ, հաստատում է համայնքի ղեկավարի աշխատակազմի կազմակերպական կառուցվածքը. ներառվում են համայնքի ղեկավարի տեղակալը, աշխատակազմի քարտուղարը և կառուցվածքային ստորաբաժանումները (գծապատկեր 4.):

Գծապատկեր 4.

Տեղական ինքնակառավարման համակարգի
կազմակերպական կառուցվածքը



Նրանց լիազորությունները սահմանվում են աշխատակազմի կանոնադրությամբ, որը հաստատում է համայնքի ղեկավարը:

Համայնքի ղեկավարն իր աշխատակազմով տեղական ինքնակառավարման գործադիր մարմինն է: Նա իրական-

նացնում է Սահմանադրությամբ և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով վերապահված լիազորություններ, մասնավորապես՝

- վարում է ավագանու նիստերը (խորհրդակցական ձայնի իրավունքով),
- մշակում և ավագանու քննարկմանն է ներկայացնում համայնքի տնտեսական զարգացման քառամյա ծրագիրը, բյուջեի նախագիծը և ապահովում հաստատված ծրագրի և բյուջեի կատարումը,
- կազմակերպում է համայնքի քաղաքաշինական գլխավոր հատակագծի ու հողերի օգտագործման սխեմայի մշակման, կառուցապատման աշխատանքները, հողահատկացումները,
- ղեկավարում է համայնքի կոմունալ տնտեսությունը, ջրմուղի, կոյուղու, ռոտգման, գազի և ջեռուցման ցանցերի շահագործումը, կազմակերպում է համայնքի տարածքի բարեկարգումը, սանիտարական մաքրումը, ճանապարհների շինարարությունը և շահագործումը, կանոնակարգում է համայնքի տարածքում հասարակական տրանսպորտի աշխատանքը,
- սահմանում է առևտրի և հասարակական սննդի կազմակերպման կանոնները,
- կազմակերպում է կրթական և մշակութային կազմակերպությունների (դպրոցներ, գրադարաններ, ակումբներ, մշակութային տներ, մանկապարտեզներ և այլն) գործունեությունը,
- աջակցում է գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը, բնության և շրջակա միջավայրի պահպանությանը:

Վերը թվարկված լիազորությունների իրագործման նյութական հիմքը համայնքի բյուջեն է, որի եկամուտների աղբյուրներն են համայնքի վարչական տարածքում գանձվող հողի հարկը և գույքահարկը, յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի մասին օրենքով սահմանվող տոկոսաչափերով մասհանումները եկամտահարկից, շահութահարկից ու բնապահպանական վճարներից, պետական և տեղական տուրքերը, համայնքի սեփականություն համարվող հողի և գույքի վարձակալության դիմաց վճարները, պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներն ու նպատակային հատկացումները (սուբվենցիաներ) և այլն:

Գործող օրենսդրությամբ համայնքների որոշակի հիմնախնդիրների համատեղ լուծման և ծախսերի կրճատման նպատակով տեղական ինքնակառավարման մարմիններն իրավասու են պայմանագրային հիմունքներով ստեղծելու միջհամայնքային միավորումներ, որոնց կառավարման համար համայնքների ղեկավարներից կազմավորվում է խորհուրդ, և ընտրվում դրա նախագահ:

Հանրապետությունում գործող տեղական ինքնակառավարման համակարգի արդիականությունը կարող է գնահատվել «Տեղական ինքնակառավարման մասին» Եվրոպական հռչակագրի դրույթների իրագործման աստիճանով և լուծման ենթակա հիմնախնդիրներով, որոնք արտահայտվում են ստորև տրվող աղյուսակում:

***Եվրոպական հռչակագրի դրույթների իրագործման
աստիճանը և լուծման ենթակա հիմնախնդիրները***

Հոդվածներ և դրույթներ	Իրագործվել է լրիվ	Իրագործվել է մասնակիորեն	Ենթակա է իրագործման
Հոդված 2 ՏԻ սկզբունքի սահմանադրական ընդունումը	ՀՀ Սահմանադրություն, հոդված 105	-	-
Հոդված 3 3.1. ՏԻ հասկացու- թյունը 3.2.1. Ներկայացուց- չական մարմնի ստեղծումը 3.2.2. Գործադիր մարմնի ստեղծումը	ՀՀ Սահմանադրություն, հոդված 105, ՀՀ օրենքը «ՏԻ մասին»	-	-
Հոդված 4 ՏԻ իրավասու- թյունները	ՀՀ Սահմանադրու- թյուն, գլուխ 7, ՀՀ օրենքը «ՏԻ մասին»	-	-
Հոդված 5 Համայնքների սահ- մանների փոփոխու- թյունը միայն բնակ- չության կարծիքը հաշվի առնելով	-	Իրագործվել է ՀՀ Սահմանադրու- թյուն (հոդված 190), «ՀՀ վարչատարած- քային բաժանման մասին» ՀՀ օրեն- քով՝ հաշվի առնե- լով համայնքների ձևավորված սահ- մանները	

Հոդվածներ և դրույթներ	Իրագործվել է լրիվ	Իրագործվել է մասնակիորեն	Ենթակա է իրագործման
Հոդված 6 6.1. Կառավարման կազմակերպական կառուցվածքների սահմանումը 6.2. Կադրերի ընտրությունը	Իրագործվել է «ՏԻ մասին» ՀՀ օրենքով -	- «ՏԻ մասին», «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքներով	-
Հոդված 8 Վարչական վերահսկողությունը ՏԻ մարմինների գործունեության նկատմամբ	-	Նախատեսված է «ՏԻ մասին» ՀՀ օրենքով և ՀՀ Սահմանադրությամբ (հոդված 109)	
Հոդված 9 9.1. ՏԻ մարմինների սեփական ֆինանսական ռեսուրսների համապատասխանությունը լիազորություններին 9.2. Ֆինանսական համահարթեցման հնարավորություն	- Ֆինանսական համահարթեցումը նախատեսված է օրենքով	Սեփական ֆինանսական ռեսուրսները կազմում են մոտ 50% -	Հիմնախնդիրը ենթակա է լուծման -
Հոդված 10 ՏԻ մարմինների հետ ընկերակցությունների ստեղծման իրավունքը	Միջհամայնքային միավորումների ստեղծումը նախատեսվում է «ՏԻ մասին» ՀՀ օրենքով (հոդված 78-80)	-	-


Ընդհանուր առմամբ, թեև ՀՀ-ում ստեղծված հանրային կառավարման, այդ թվում՝ տեղական ինքնակառավարման

համակարգը հիմնականում համապատասխանում է քաղաքակիրթ աշխարհում ընդունված ժողովրդավարական, իրավական չափանիշներին, սակայն, իբրև անընդհատ զարգացող երևույթ, ենթակա է բարեփոխման ու կատարելագործման՝ նպատակ ունենալով առավել ժողովրդավարացնել հանրային կառավարումը և բարձրացնել դրա քաղաքական, տնտեսական ու սոցիալական արդյունավետությունը:

Սահմանադրական բարեփոխումներից (2015 թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեի արդյունքում) հետո անցում է կատարվել պետական կառավարման պաշտամենտական եղանակին: Ըստ բարեփոխված սահմանադրության 123-րդ հոդվածի՝ հանրապետության նախագահը հետևում է ՀՀ սահմանադրության պահպանմանը, այսինքն՝ դրա պահանջների կատարմանը: Նա չի ընտրվում ժողովրդի կողմից, ինչպես նախկինում, այլ ընտրվում է Ազգային ժողովում յոթ տարի ժամկետով, ուստի չունի առաջնային մանդատ, իսկ լիազորությունները նախկինի համեմատ խիստ կրճատված են:

Ազգային ժողովն իրականացնում է օրենսդիր իշխանությունը (գլուխ IV) ընդլայնված լիազորություններով, իսկ կառավարությունը գործադիր իշխանության բարձրագույն մարմինն է (գլուխ IV):

Այսպիսով, փոփոխվել են հանրապետական կառավարման մարմինների լիազորությունների ծավալը և հարաբերակցությունը (գծապատկեր 5.):



2015 թվականի սահմանադրական բարեփոխումները հիմնականում նպատակ ունեին հասնելու երկրում կայուն ժողովրդավարական համակարգի հաստատմանը, իրավական պետության անկյունաքար համարվող իրավունքի գերակայության երաշխավորմանը, պետական իշխանությունների բաժանման և հավասարակշռության սկզբունքի կենսագործմանը, երկրում քաղաքացիական իշխանության գերկենտրոնացվածության հաղթահարմանը, ժողովրդավարական քաղաքական համակարգի ձևավորմանը, պետական կառավարման համակարգի արդյունավետության բարձրացմանը, իշխանության պատասխանատվության մեծացմանը և իշխանությանն իրավունքով սահմանափակ-

մանը և այլն¹⁴: Սակայն խնդիրն այն է, որ պատլամենտական համակարգն արդյունք է ձևավորված ու զարգացած ժողովրդավարական քաղաքական համակարգի և ոչ թե միջոց՝ դրան հասնելու համար: Իրական կյանքն ապացուցեց, որ վաղ էր անցումը կառավարման պատլամենտական համակարգին, քանի որ երկրում քաղաքացիական հասարակությունը և քաղաքական համակարգը կայացման փուլում են: Արդյունքում պետական իշխանության թևերի բաժանման ու հակակշռման կառուցակարգերը և հանրային կառավարման արդյունավետությունը դեռևս չունեն պատշաճ մակարդակ, քաղաքական ինստիտուտներն ու պետականության զարգացման և ապահովագրման նախադրյալներն ունեն զարգացման ու կայունացման ակնհայտ անհրաժեշտություն: Ահա թե ինչու դեռևս շարունակվում են սահմանադրական նոր բարեփոխումների տարբերակների որոնումները և դրանց քննարկումները:

4. Հայկական պետականության և հայ-ռուսական հարաբերությունների լույսն ու ստվերը

XX դարում հայկական պետականությունների կայացման ընթացքը շաղկապվում է հայ-ռուսական հարաբերությունների հետ: Հայտնի է, որ 1813 և 1828 թթ. ռուս-պարսկական պատերազմների արդյունքում Գյուլիստանի և Թուրքմենչայի ռուս-պարսկական պայմանագրերով Արցա-

¹⁴ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների նախագիծ և մեկնաբանություններ, Ե., «Տիգրան Մեծ», 2015, էջ 95-96:

խի և Արևելյան Հայաստանի տարածքներն առհավետ անցել են ցարական Ռուսաստանի տիրապետության տակ: 1917 թ. ռուսաստանյան հեղափոխության կամ ավելի ճիշտ՝ բոլշևիկյան հեղաշրջման շնորհիվ Հարավային Կովկասում 1918 թ. առաջացան երեք անկախ պետություններ՝ Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի հանրապետությունները: Այնուհետև 1920 թ. հետո դրանք դարձան Խորհրդային Միության մաս՝ իբրև միութենական հանրապետություններ ԽՍՀՄ կազմում: Վերջինիս փլուզումից հետո խորհրդային 15 միութենական հանրապետություններն ստացան իրական անկախություն, դարձան ժողովրդավարական անկախ պետություններ, որոնց թվում էր նաև Հայաստանի Հանրապետությունը: Ակնհայտ է, որ հայկական պետականության վերականգնման ու զարգացման ընթացքի կարևոր սկզբնական նախադրյալներից էին 1813 և 1828 թթ. իրադարձությունները: Հարկ է նաև ընդգծել, որ ռուսական կայսրության կազմում և հատկապես ԽՍՀՄ ժամանակահատվածում հայկական տնտեսությունը, գիտությունն ու մշակույթը վիթխարի վերելք են ապրել: Այդ մասին վկայող փաստերը շատ են, հանրահայտ և ակնառու: Այս ամենը հայ-ռուսական հարաբերությունների լուսավոր էջերից են: Սակայն, ցավոք, դրանք ուղեկցվել են նաև ստվերոտ և անընդունելի դրսևորումներով: Դրանցից առաջինը համաշխարհային հեղափոխության անհիմն ձգտումների հավատով Թուրքիային տարածքային զիջումներն էին հատկապես Հայաստանի հաշվին (Կարսի և Սուրմալուի հատվածները): Հաջորդ ճակատագրական բացթողումը, ավելի ճիշտ՝ սխալը Թուրքիայի խորամանկ քայլին հավաստալը, ընդառաջելը և Ադրբեջան պետության ստեղծումն էր՝ նրան զիջելով Նախիջևանի

և Արցախի տարածքները: Խորհրդային տարիներին թուրք-ադրբեջանական երկյակը հասցրեց հայաթափել Նախիջևանը, իսկ Արցախը պահպանեց իր ազգային ինքնությունը, 1991-ին հռչակեց անկախություն և առայսօր մաքառում է ազգային ինքնորոշման իրավունքի իրացման ուղիով պահպանելու իր պետականությունը կամ միանալու ՀՀ-ին: Այդ հիմնախնդիրն ստացել է միջազգային հնչեղություն և դարձել առայսօր չլուծված բարդագույն ազգային հարց, իսկ արցախահայությունը հայտնվել է ցեղասպանության վտանգի առաջ: Ինչպես պատմությունն ապացուցեց, Ադրբեջան պետության հիմնադրմամբ Թուրքիան իր համար ճկուն, բայց գաղտնի միջոց էր ստեղծել՝ հարմար պահին տիրանալու Հարավային Կովկասին, իրագործելու իր հեռահար պանթուրքական ծրագրերը: Այսօր նա արդեն հասել է իր՝ դարերով երազած Ղարաբաղ և նրա միջնաբերդ հայկական Շուշի քաղաքը, մյուս հակահայկական ծրագրերն ընթացքում են: Որպեսզի նշված պնդումները կասկած չհարուցեն, հիշեցնենք Մուստաֆա Քեմալի (Աթաթուրքի)՝ 1933թ. հոկտեմբերի վերջին Թուրքիայի Հանրապետության հռչակման 10-րդ տարեդարձի առթիվ ելույթից մի հատված. «Երբևիցե Ռուսաստանը կկորցնի վերահսկողությունը այն ժողովուրդների նկատմամբ, որոնց այսօր ամուր պահում է իր ձեռքերում: Աշխարհը կհայտնվի նոր մակարդակում: Այդ պահին Թուրքիան պետք է իմանա, թե ինչ է պետք անել: Հարկ է պատրաստվել: ...Մեր ընդհանուր լեզուն մեր կամուրջն է, մեր ընդհանուր հավատը մեր կամուրջն է, մեր ընդհանուր պատմությունը մեր կամուրջն է: Մենք պետք է հիշենք մեր արմատների մասին և միավորենք մեր պատմությունը, բախտի քմահաճույքով մեզնից բաժանված մեր

եղբայրներին: ...Նույն այն օրը, երբ Ռուսաստանն անկում կունենա, Թուրքիան կդառնա մեր եղբայրների համար օրինակելի երկիրը»¹⁵: Ադրբեջանի Հանրապետության նախկին նախագահ Հեյդար Ալիևը, 1994 թ. խմբագրված կրկնելով Աթաթուրքի խոսքերը, ոգևորությամբ նշում է, որ 60 տարի առաջ Մ. Քեմալը կանխատեսել է այդ օրերը, մեզ կտակ է թողել, հիմա դրանք եկել են¹⁶:

Բայց Ադրբեջանը և անձամբ Հ. Ալիևը սկսել է այդ կտակի իրացման գործով զբաղվել դեռևս 1960-ական թվականներից սկսած: Պետական կազմակերպված գաղափարական արշավ էր սկսվել Ադրբեջանի գիտական շրջանակներում՝ ապացուցելու, որ Արցախի տարածքը ադրբեջանական է, մշակութային հուշարձանները՝ աղվանական կամ ուղիական, բնակիչները՝ հայախոս աղվաններ^{*}: Իսկ 1999թ. Հ. Ալիևը հանձնարարել է պատմաբաններին. «Հարկ է ստեղծել այնպիսի աշխատություններ, որոնք մշտապես և հետևողականորեն ապացուցեն այն հողերի պատկանելությունը Ադրբեջանին, որտեղ ներկայումս Հայաստանն է:

¹⁵ Հղումը ըստ *Арис Казинян Полигон* «Азербайджан» աշխատության, Ե., 2011, էջ 375:

¹⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 376-377:

^{*} Հայ հեղինակավոր մասնագետները (Աս. Մնացականյան, Պ. Սևակ, Կ. Մելիք-Օհանջանյան, Պ. Մուրադյան, Ա. Հակոբյան և այլք) անդրադարձել են ադրբեջանական պատմաբանների կեղծիքներին, հիմնավորապես հերքել են Ջ. Բունիաթովի, Ֆ. Մամեդովայի և այլոց անհիմն, կեղծ պնդումները հայկական մշակույթի ու պատմության վերաբերյալ: Այդ առումով ամփոփիչ տեղեկություններով և հեղինակային հարցադրումներով ամբողջական է Վ. Եղիազարյանի «Արցախի հայկականության և ադրբեջանական աղվանագիտության» կեղծիքների դեմ» (Ե., ՎՄՎ-Պրինտ, 2023) վերջերս լույս տեսած աշխատությունը:

Մենք դա պետք է կատարենք: Մենք պետք է բացենք ապագա սերունդների ճանապարհը»¹⁷: Առաջին անգամ (1998 թ.) ավագ Ալիևն է Հայաստանն անվանել Արևմտյան Ադրբեջան և վստահությամբ հայտարարել, որ ադրբեջանցի մուսուլմանները կվերադառնան «Էրիվանի, Գոյչայի, Զանգիբասարի, Զանգեզուրի մահալները»¹⁸:

Մեր օրերում Թուրքիան և Ադրբեջանը շարունակում են ավագ սերնդի իրենց ավանդված կտակի իրագործումը:

Ներկայումս ստեղծվել է այնպիսի իրավիճակ, որ Ռուսաստանի Դաշնությունն արդի բարդ աշխարհաքաղաքական իրադրության պայմաններում ստիպված է անընդհատ մանևրել՝ հաճախ դիմելով թուրք-ադրբեջանական տանդեմին զիջումների իր հնամենի քաղաքականությանը, ինչը նորից ստվերում է հայ-ռուսական հարաբերությունները: Նկատենք նաև, որ առանձին դեպքերում հայ քաղաքական ուժերը միակողմանի արևմտամետությամբ կամ ռուսամետությամբ խանգարում են արդյունավետ միջպետական հարաբերությունների: Նման ուղղագիծ և ժամանակավրեպ գործողությունների օրինակները մեր պատմության ընթացքում, ցավոք, ևս կան ու հայտնի են կորստաբեր հետևանքներով:

Հայկական պետականության ամրապնդման համար հարկ է հաշվի առնել մեր բազմադարյան պատմության դասերը, որոնցից հատկապես կարևոր են.

1. ստեղծել և ամրապնդել պետականության կայացման ու զարգացման ներածությունում արդեն թվարկված կարևորագույն նախադրյալները,

¹⁷ *Арис Казинян*, նշվ. աշխ., էջ 5:

¹⁸ Նույն տեղում, էջ 6:

2. խիստ կարևորել պետականության հարատևության ապահովման գործում հանրության գաղափարաքաղաքական նպատակասլաց միասնականությունը՝ դիտարկելով պետականությունն իբրև բարձրագույն ազգային արժեք,
3. միջպետական հարաբերությունները միշտ և բոլոր տարածաշրջաններում եղել են բարդ, և շահել են այն ժողովուրդները, որոնք ապավինել են սեփական կարողություններին, հզորացրել են դրանք և հաստատել ճկուն, նպատակասլաց ու շահեկան հարաբերություններ՝ հարևանների, միջազգային գործընկերների հետ՝ հաշվի առնելով, որ բոլոր հնարավոր ռիսկերի կառավարման փորձված եղանակը գործողությունների բազմատեսակացումն է:

1.3. ОЧЕРК ИСТОРИИ ГОСУДАРСТВЕННОСТИ АРЦАХА И ВЕК КАРАБАХСКОГО ДВИЖЕНИЯ*

Проблема Нагорного Карабаха, безусловно, архиактуальна не только с научной точки зрения, но и больше всего из-за необходимости практических рекомендаций по судьбе Арцаха и населяющего его тысячелетиями коренного армянского населения.

Нахождение какого-либо справедливого и юридически обоснованного решения данной проблемы осложняется как минимум двумя обстоятельствами:

–игнорирование со стороны Азербайджана исторических, этно-культурных и юридических объективных реалий, относящихся к проблеме Арцаха с единственной целью - любыми способами захватить его территорию,

–навязывание с этой же целью некоторым странам, делающим политическую погоду в мире, неправомерного вердикта о том, что Арцах является международно признанной территорией Азербайджана, не учитывая факт многовекового существования этой области как часть Армянского государства в течение 1300 лет, а также то, что Арцах с V века по 1813 год имел различные относительно независимы государственные образования (царство, княжество, меликства), в том случае, когда азербайджанской государственности всего немного более 100 лет, из которых 70 лет в составе СССР.

Ниже попытаюсь обосновать некоторые тезисы, которые, на мой взгляд, будут полезными для выработки стратегии эффективных решений Арцахской проблемы.

* Առաջին անգամ հրապարակվել է «ՀՀ ԳԱԱ գեկույցներում» (№1 (122), 2022 թ.):

1. Краткий очерк по истории Арцаха, его этнического состава и культурного наследия обоснованно доказывает несостоятельность утверждения о том, что Нагорный Карабах является международно признанной территорией Азербайджана. По сведениям ученых (Страбон, Плиний Старший, Мовсес Хоренаци и др.), Арцах, а также Утик входили в состав Ванского царства (IX-VI вв. д.н.э.), Армянского царства Ервандидов (VI-II вв. д.н.э.), царства Великой Армении (царства армянских Аршакидов) (189 г. д.н.э. – 428 г.н. э.) [1, стр. 72, 2, стр. 43-63].

Об истории Арцаха с 5-ого века по 1813 г. далее будет сказано.

Теперь приведем некоторые статистические данные по этническому составу населения Арцаха (в границах НКАО) в период с 1823 по 1914 год [2, стр. 564].

Из приведенных данных очевидно, что в Арцахе преобладающая часть населения - 81-85% в XIX веке и в начале XX-го были армяне, а в сельской части населения этот показатель составлял от 91 до 97%.

В 1914 г. 90.6% сельского населения Арцаха, 52.3% жителей города Шуши были армяне, в общей численности населения края татары составляли 17.9%, в городе Шуше – 44.8%.

Шуши получил статус города в 1847 году, начал интенсивно развиваться и стал крупным армянским духовным и культурным центром.

Год	Население	Армяне	%	Татары	%	Прочие в %
1823	Сельское	27500	97.5	700	2.5	-
	г. Шуши	3350	41.0	4670	56.0	3.0
	В целом	30850	84.6	5370	14.7	0.7
1850	Сельское	29886	97.3	900	2.7	-
	г. Шуши	6355	50.0	6370	50.0	
	В целом	36241	83.3	7270	16.7	
1886	Сельское	83919	93.2	5839	6.5	0.3
	г. Шуши	15188	56.6	11595	43.3	0.1
	В целом	99107	84.8	17434	14.9	0.3
1897	Сельское	91943	89.5	9631	9.4	1.1
	г. Шуши	14420	55.8	10778	41.7	2.5
	В целом	106363	82.7	20409	15.9	1.4
1914	Сельское	113210	90.6	11013	8.8	0.6
	г. Шуши	22004	52.3	18864	44.8	2.9
	В целом	135214	80.9	29877	17.9	1.2

Шуши получил статус города в 1847 году, начал интенсивно развиваться и стал крупным армянским духовным и культурным центром.

Пытаясь изменить демографический состав населения Арцаха и г. Шуши с целью экспансии территории 23 марта

1920 г. (за месяц до советизации Азербайджана) была сожжена и разрушена вся армянская часть города. В ходе пожара и резни погибло около 10 тысяч армян, остальные бежали из города, бросив все имущество [2, стр.258-259]. Таким образом искусственным варварским путем армянский город был “превращен” в азербайджанский. Такое положение продолжалось до 1992 г. – всего 70 лет из тысячелетней истории этого армянского населенного пункта в Варанде.

Недавно, 7 сентября 2022 г., во Владивостоке в своем выступлении президент РФ, многоуважаемый В.В. Путин придал очень важное значение праву наций на самоопределение. Примечательно, что самоопределение народа Арцаха происходило дважды: в 1991 г., а в первый раз в далеком V веке. После падения армянского царства Аршакидов в 428 г., было создано в 485 г царство Арцаха и Утика (V-VII вв) [3, стр.150-151, 2, стр. 70-72, 8, стр. 426-433].

Более того, в 488 г. при царе Вачагане III (Благочестивом) была принята первая армянская каноническая конституция, которая содержала 21 статью. Затем было создано Хаченское княжество (X-XV века)[4, стр. 114-119]. С XVI века в Арцахе были образованы пять известных меликств (Варанда, Дизак, Хачен, Джраберд, Гюлистан) [5, стр. 27-38, 64-69]. Таким образом, государственность в Арцахе в различных формах и уровнях сохранилась до 1813 г. - года заключения Гюлистанского договора между Россией и Ираном о переходе Арцаха в состав России.

2. По существу, началом Карабахского движения необходимо считать 1918 год, потому что тогда под руководством Турции началась борьба татар за включение территории Арцаха в состав вновь созданной Турцией Азербайджанской республики. Карабахские армяне в течение 1918-1920 гг. героически сопротивлялись и Нагорный Карабах не вошел в состав непризнанной Лигой Наций Азербайджанской республики. Подробный анализ этого сопротивления приведен в работе Тер-Саркисянца А. [2, стр. 226-265]. Однако затем большевики под давлением турецко-азербайджанской стороны передали Арцах в состав Советского Азербайджана. 7 июля 1923 года Азербайджан объявил о создании автономной области Нагорного Карабаха на территории 4.4 тыс. кв км, что составляла 38.2 % от общей исторической территории Арцаха [2, стр. 326, 5, стр. 65]. Таким образом большая часть территории Арцаха была отторгнута от него и включена в состав Азерб. ССР в качестве административных районов, а НКАО превратилась в анклав – без непосредственных коммуникаций с Арменией. Опять очевидна конечная цель – экспансия данной территории путем этнической чистки коренного населения. Напомним, что в 1923 году в Нагорном Карабахе численность населения составляла 157.8 тысяч человек, в том числе армяне – 149.6 т. человек, удельный вес в общей численности 91.8 %. Конечно, в результате целенаправленной дискриминационной политики азербайджанских властей в период советской власти доля армянского населения снизилась и в 1989 г. составляла 76.9% [2, стр. 356].

Для доказательства дискриминационной политики властей Азерб. ССР приведем некоторые факты: по нашим расчетам промышленная нагрузка территории НКАО в 2.6 раза уступала среднему показателю Азербайджана, объем капитальных вложений на душу населения в области составил 37 % среднереспубликанского уровня. В 1971-1987 гг. капитальные вложения, направленные на экономическое и социальное развитие в расчете на единицу территории в Азерб. ССР в 3.6 раза были больше, чем в НКАО [6, стр. 263-264]

Борьба армян за воссоединение Арцах с Арменией всегда продолжалась. Дважды Первые секретари ЦК КП Армении Г. Арутюнян и А Кочинян обращались к центральным властям с просьбой о передаче армянской области Нагорного Карабаха в состав Арм. ССР. Но безуспешно, видимо старший брат – модератор запретил младшему согласиться с подобным решением.

В 1988 г. начался новый активный этап карабахского движения, результаты которого общеизвестны.

Таким образом, на первом этапе карабахского движения не удалось воссоединить Арцах с Арменией, была образована Нагорно-Карабахская автономная область, которая являлась государственной структурой с минимальными полномочиями. Второй этап этого движения завершился созданием в 1991 году на основе права наций на самоопределение Арцахской Республики. Пытаясь силой удержать Нагорный Карабах в своем составе, Азербайджан начал агрессию против Нагорно-Карабахской республики, которая завершилась 5 мая 1994 г. заключением Бишкекского соглашения о прекращении огня в зоне

конфликта. Результатом навязанной Азербайджаном агрессивной войны против НКР стали не только защита независимости Арцаха, но и освобождение исконной исторической части его территории, которая была завоевана Азербайджанской ССР в 1923 году при создании НКАО (Карвачар, Ковсакан, Кашатаг, отторгнутые территории Варанды, Дизака и др.). Было создано современное демократическое государство – Арцахская Республика с общей конституционной площадью в 12.02 тыс. кв. м [7, стр. 961-969]. Но такой ход событий не входил в планы турецко-азербайджанского тандема, и, пользуясь созданным благоприятным для них международным положением и другими обстоятельствами, через 100 лет после начала карабахского движения и турецко-армянской войны 1920 года они захватили большую часть Арцахской Республики, создали необходимые условия для полного захвата Арцаха и доминирования Турции на Южном Кавказе. Как объявил президент Турции Р. Т. Эрдоган, они продолжают дело своих предков. В целях идейного обоснования и оправдания захватнических действий и военной агрессии с 60-ых годов прошлого века азербайджанские историки и политики организованно и целенаправленно, по приказам государственных органов, фальсифицируют историю Арцаха, всячески пытаются представить армянское культурное наследие как албанское, религию и всемирно известные армянские храмы – удинское, по поручению властей на оккупированных территориях уничтожается всякое армянское, армянский след – объекты культуры и религии, кладбища и др.

Очевидно, что создание государства Азербайджан, передача ему армянских областей Арцаха и Нахичевана были первичными элементами, нацеленными на перспективу стратегии.

В качестве заключения: необходимо добиться выполнения следующих почти общепризнанных целей:

–обоснованно отрицать навязанного турецко-азербайджанским тандемом некоторым странам утверждения о том, что Арцах является международно признанной территорией Азербайджана, т.к. оно не имеет юридической, историко-географической и этно-культурной основы.

Справедливость такого подхода подтверждается вышеприведенными историческими, демографическими реалиями. Кроме того, НКАО вышла из состава Азербайджанской ССР по закону СССР “О порядке решения вопросов, связанных с выходом союзной республики из СССР” от 03.04.1990 г. и, как было отмечено, Нагорный Карабах не входил в состав Азербайджанской республики, преемником которой стал вышедший из СССР независимый Азербайджан согласно декларации ВС Азерб. ССР 30.08.1991 года. Отрицание отмеченного неправомерного утверждения откроет дорогу для международного признания независимости Арцахской Республики,

–разработать мероприятия по укреплению Арцахской Республики с восстановлением территории и границы НКАО и обеспечением всех надежных коммуникаций с РА,

–совместно с РФ и другими дружественными странами обеспечить надлежащее решение проблем безопасности Арцахской Республики.

Լիտերատուրա

1. Խորենացի Մ., Հայոց պատմություն, Ե., Հայաստան, 1990, 321 էջ:
2. Тер-Саркисянц А., Армяне Нагорного Карабаха (История. Культура. Традиции), М., Русская панорама, 2015, 918 стр.
3. Հայկական սովետական հանրագիտարան, հ. 2, Ե., 1976, 720 էջ:
4. Հայոց պատմություն, հ. 2, Միջին դարեր (XVII դ. երկրորդ կես), գիրք երկրորդ, Ե., Զանգակ, 2014, 800 էջ:
5. Հայոց պատմություն, հ. 3, Նոր ժամանակաշրջան (IV դար- XVII դ. առաջին կես), գիրք առաջին, Ե., Զանգակ, 2010, 704 էջ:
6. Սովարյան Յու. Մ., Տնտեսություն, գիտություն, կրթություն, Ե., «Գիտություն», 2014, 370 էջ:
7. Հայաստան հանրագիտարան, Ե., «Հայկական հանրագիտարան» հրատարակչություն, 2012, 1164 էջ:
8. Հայոց պատմություն, հ. 2, Միջին դարեր (IV դար- XVII դ. առաջին կես), գիրք առաջին, Ե., «Զանգակ», 2018, 704 էջ:

Արցախի պետականության պատմության ակնարկ և դարաբաղյան շարժման դարը (Ամփոփում)

Արցախի հիմնախնդրի արդարացի և իրավական առումով հիմնավորված լուծմանը խանգարում են Ադրբեյ-

ջանի կողմից Լեռնային Ղարաբաղին վերաբերող պատմական, էթնո-մշակութային ու իրավական օբյեկտիվ իրողությունները հաշվի չառնելը, ինչպես նաև աշխարհի ազդեցիկ որոշ երկրներին ոչ իրավաչափ այն դրույթի պարտադրելը, որ իբր թե Արցախը Ադրբեջանի միջազգայնորեն ճանաչված տարածքն է: Ադրբեջանա-թուրքական կողմի նման վարքագիծը նպատակաուղղված է Արցախի տարածքի բռնազավթմանը, մինչդեռ պատմական փաստերի վկայությամբ Արցախը 1300 տարի գտնվել է հայկական պետության կազմում, իսկ 485 թ. մինչև 1813 թ. ունեցել է անկախ պետականության զանազան կարգավիճակներ՝ թագավորություն, իշխանապետություն, մելիքություններ, երբ Ադրբեջանի պետականությունը սկիզբ է առել 1918 թ.: Բացի այդ, իրավական առումով Լեռնային Ղարաբաղը 1991 թ. հռչակել է իր անկախությունը ԽՍՀՄ համապատասխան օրենքով: Ղարաբաղյան շարժումն սկսվել է 1918-1920 թթ., որով կանխվել է Արցախն Ադրբեջանի Հանրապետության կազմի մեջ ներառելու թուրք-ադրբեջանական կողմի ձգտումը: Սակայն բուլղիկների իշխանությունն Արցախի տարածքի 38.2 % ներառմամբ ստեղծում է Ադրբեջանի ԽՍՀ-ի կազմում Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ, մյուս հատվածների վրա կազմավորում Ադրբեջանի վարչատարածքային շրջանները:

Ղարաբաղյան շարժման երկրորդ փուլում, որն սկսվում է 1988 թ., հիմնվում է Արցախի ժողովրդավարական անկախ Հանրապետությունը՝ 12.02 հազ. քառ. կմ սահմանադրական տարածքով, ներառելով 1923 թ. իրենից օտարված հատվածները:

Թուրք-ադրբեջանական տանդեմի սանձազերծած 2020թ. պատերազմի արդյունքում բռնագավթվում է Արցախի Հանրապետության տարածքի մեծ մասը. ստեղծվում են պայմաններ՝ Լեռնային Ղարաբաղն ամբողջովին նվաճելու և Հարավային Կովկասում Թուրքիայի գերիշխանությունը հաստատելու համար:

Արցախյան հիմնախնդրի երկարաժամկետ ու կայուն կարգավորման նպատակով անհրաժեշտ է հիմնավորապես հերքել ու մերժել Լեռնային Ղարաբաղն Ադրբեջանի մաս համարելու անհիմն պահանջը, նպատակասլաց միջոցառումներով ամրապնդել Արցախի Հանրապետությունը՝ վերականգնելով առնվազն ԼՂԻՄ-ի սահմանները, ապահովել բոլոր հուսալի կոմունիկացիաները ՀՀ-ի հետ, ՌԴ և այլ բարեկամ երկրների հետ համատեղ լուծել ԱՀ անվտանգության խնդիրները:

ԳԼՈՒԽ 2.

ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

2.1. ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ*

Ներածություն

Պետական կառավարման պատմությունն իր առաջացման ժամանակաշրջանից առ այսօր դրսևորել է կայացման ու զարգացման որոշակի միտումներ: Հավաքչական գործունեությունից դեպի արտադրություն, այսինքն՝ նյութական բարիքների և անվտանգության միջոցների ստեղծում, ընթացող մարդկությունն ուներ իր իրավունքները, սեփականությունը և առաջացող երկրների սահմանների անվտանգությունը երաշխավորող լեգիտիմ կառույցի անհրաժեշտությունը, որը հայտնի դարձավ իբրև պետություն՝ իր գործառույթներն իրականացնող կարևոր պետական մարմիններով (թագավոր, նախարարներ, ոստիկանություն, բանակ, անվտանգության ծառայություն և այլն):

Ի սկզբանե պետական իշխանությունն ստանձնեցին

* Առաջին անգամ հրապարակվել է «Լրաբեր հասարակական գիտությունների» (2021 թ., թ.2) հանդեսում:

առավել հզոր ցեղախմբերի առաջնորդները և, ինչպես ընդունված էր հնադարում, այն փոխանցվում էր ժառանգներին, այդպիսով սկզբնավորվում էր իշխանության ժառանգական փոխանցման ավանդույթը, որ շարունակվեց մինչև հանրային կառավարման համակարգի ամբողջական արմատավորումը (18-19-րդ դարեր): Ուշագրավ է, որ այն մասնակիորեն, թեև ըստ էության՝ էականորեն իբրև խորքային պետության դրսևորում, պահպանվել է 20-րդ դարում, նաև գործում է 21-րդ դարում: Ժառանգական միապետն իր կարևորագույն խնդիրն է համարում պետական իշխանության և երկրի տարածքային ամբողջականության պահպանումը, վերջինիս առումով, և հատկապես միջնադարում, նաև ընդլայնումը, նոր տարածքների նվաճումը: Նոր տարածքները նոր ռեսուրսներ են, հարստացման և երկրի հզորացման միջոց, ինչը գայթակղիչ է բոլոր ժամանակներում: Եթե միջնադարում տարածքների գրավման գլխավոր միջոցն ուժային կառույցներն էին, ապա այսօր դրանք փոխարինվում կամ լրացվում են այսպես կոչված «փափուկ ուժի» ազդեցությամբ:

Հանրային կառավարման համակարգի պայմաններում, որն այսօր տիրապետող է, պետական իշխանության մարմինները ձևավորվում են քաղաքացիական հասարակության ինստիտուտների միջոցով, ընտրական տեխնոլոգիաներով, ինչի արդյունքում հաղթող քաղաքական ուժը ձևավորում է հանրային կառավարման մարմինները: Եթե ժառանգական միապետության պայմաններում երկրի զարգացման որակի համար կարևորվում էր քաղաքակրթական գործոնը, ինչն էական է տնտեսական, սոցիալական, մշակութային, անվտանգային զարգացման համար, ապա հան-

րային կառավարման պայմաններում դրան գումարվում են երկրի շահերի քաղաքագիտական ընկալման, պետականության անհրաժեշտության գիտակցման, պետական կազմակերպվածության բաղադրիչները՝ իբրև հանրային կառավարման համակարգի ամրության կարևորագույն նախադրյալներ, որոնք առարկայանում են քաղաքական ինստիտուտների՝ հասարակական-քաղաքական կազմակերպությունների, իսկ այնուհետև՝ դրանց ձևավորած հանրային կառավարման մարմինների միջոցով:

Երկիրը շահում է, եթե քաղաքական ինստիտուտները գտնվում են պետականության և ազգային շահերի ընկալման ու իրացման բարձր աստիճանի վրա, և հակառակը, պետությունը թուլանում է, եթե դրանք առավել կարևորում են անձնական-կուսակցական շահերը՝ դրսևորելով քաղաքագիտական ու պետական կազմակերպվածության ոչ պատշաճ մակարդակ:

Պետականության ամրապնդման և երկրի բարգավաճման համար էական է, թե ինչպիսին է ժողովրդի քաղաքակրթական մակարդակը համաշխարհային միջինի համեմատությամբ, քանի որ այն թե՛ սոցիալ-տնտեսական ու մշակութային հետագա զարգացման, թե՛ անվտանգային խնդիրների լուծման առանցքային ռեսուրսն է:

Միաժամանակ չափազանց կարևոր է նաև ժողովրդի քաղաքակրթական մակարդակի և երկրի քաղաքական ինստիտուտների հասունության աստիճանի հարաբերակցությունը, որը, ինչպես վկայում է իրական կյանքը, միշտ չէ, որ համամասնական է, ավելին, երկրորդն էականորեն կարող է զիջել առաջինին, ինչը բացասական ազդեցություն կունե-

նա պետականության և պետության կարևորագույն խնդիրների լուծման ու գործառնությունների իրագործման վրա:

Հայտնի ճշմարտություն է, որ մարդիկ և նրանցից բաղկացած կազմակերպություններն առավելապես առաջնորդվում են սեփական շահերով, որոնք ավելի շատ դրսևորվում են բոլոր մակարդակների կազմակերպական հարաբերություններում ու ներազդում նաև քաղաքական ինստիտուտների վարքագծի վրա: Եվ եթե մարդկանց պետականության ու քաղաքագիտական, այդ թվում՝ ազգային արժեքների գիտակցության ու պաշտպանության աստիճանը բարձր չէ ու զիջում է անհատական շահին, ապա նման իրավիճակն ապացուցում է տվյալ հանրության քաղաքակրթական ու քաղաքագիտական-կազմակերպական մակարդակների միջև առաջացած անջրպետը, ինչն անհրաժեշտ է հաղթահարել, այլապես այն ողբերգական կարող է լինել այդ հանրության կամ ժողովրդի ճակատագրի համար: Հարկ է նշել, որ հանրային կառավարման վերաբերյալ և արդի տնտեսագիտական ու քաղաքագիտական գրականության¹ մեջ դրա

¹ Տե՛ս, օրինակ, **Փալ Լ. Ա.**, Քաղաքականության վերլուծության շուրջ. հանրային կառավարման հիմնախնդիրներն անհանգիստ ժամանակներում, Ե., «Պետական ծառայություն», 2005, **Վեյսեր Դ. Լ., Վայնինգ Է. Ռ.**, Քաղաքականության վերլուծություն. հասկացություններ և պրակտիկա, Ե., «Պետական ծառայություն», 2010, **Դենհարդ Ռ. Բ.**, Հանրային կազմակերպության տեսություններ, Ե. , «Անտարես», 2006, **Լինց Խ., Ստեփան Ա.**, Ժողովրդավարությանն անցնելու և ժողովրդավարության կայացման խնդիրները, Ե., «Կովկասի ինստիտուտ», 2011, **Սուվարյան Յու. Մ., Միրզոյան Վ.**, Հանրային կառավարման տեսություն և պատմություն, Ե., «Գիտություն», 2013, **Սուվարյան Յու. Մ., Սարգսյան Վ. Ա., Սուվարյան Ա. Ս.**, Հանրային կառավարման մեթոդաբանական հիմնախնդիրները, Ե., «Գիտություն», 2019, **Аджемоглу Д., Робинсон Дм. А.**,

արդյունավետության խնդիրը պատշաճ խորությամբ չի դիտարկվել երկրի քաղաքակրթական աստիճանի և քաղաքագիտական, պետական-կազմակերպական մակարդակի հարաբերակցության տեսանկյունից, և քանի որ այն ունի գիտագործնական կարևոր նշանակություն, ըստ այդմ հետազոտական առումով, անկասկած, արդիական հիմնախնդիր է: Գործնական-քաղաքական տեսակետից քաղաքակրթական և քաղաքագիտական զարգացման հարաբերակցության խնդիրն էական է թույլ զարգացած կամ անգամ նոր զարգացող պետականությունների համար, քանի որ նրանք աշխարհաքաղաքական ոլորտների ազդեցության առումով ավելի խոցելի են: Այդ տեսակետից Հայաստանի Հանրապետության դրությունն առանձնահատուկ է, որովհետև հայ ժողովուրդը, ցավոք, չորս անգամ՝ 428, 1045, 1375 և 1920 թվականներին կորցրել է պետականությունը, 19-րդ դարի վերջին, 20-րդ դարի ընթացքում պարբերաբար ենթարկվել ցեղասպանության, հայրենազրկման, վայրագ հարևանների կողմից պղծվել են նրա մշակութային արժեքները, յուրաց-

Почему одни страны богатые, а другие бедные. Происхождение власти, процветания и нищеты. М., изд.-во АСТ, 2016, **Ֆերգյուսոն Ն.**, Մեծ անկում. ինչպես են քայքայվում ինստիտուտներն ու կործանվում տնտեսությունները, Ե., «Նյու Մեք», 2020, **Շարմա Ք.**, Взлеты и падения государств. Силы перемен в посткризисном мире, М., изд.-во АСТ, 2018, **Стиглиц Дж.**, Люди, власть и прибыль: прогрессивный капитализм в эпоху массового недовольства, М. «Альпина Паблишер», 2020, **Мухаев Р. Т.**, Политология, М., Проспект, 2009, **Путачев В. П., Соловьев А. И.**, Введение в политологию, М., Аспект Пресс, 2005, **Соловьев А. И.**, Политология: политическая теория, политические технологии, М., Аспект Пресс, 2008.

վել նյութական արժեքները, տարածքները, այսօր էլ փորձում են կեղծել պատմությունը՝ ձգտելով վերացնել հայկական հետքը Հարավային Կովկասում: Ակնհայտ է, որ նշված արհավիրքների հաղթահարման ուղին հայկական պետականության ամրապնդումն է հայ ժողովրդի վաղնջական հողատարածքներում:

Ստորև հանգամանորեն կդիտարկվեն պետականության կառուցման և հանրային կառավարման համակարգում քաղաքակրթական, քաղաքագիտական, քաղաքական ինստիտուտների և պետական-կառավարչական գործոնների նշանակությունն ու դրանց նպատակասլաց օգտագործման գերակայությունները:

Քաղաքակրթական բաղադրիչը հանրային կառավարման համակարգում

Պետության, իսկ այնուհետև հանրային կառավարման գաղափարները մարդկային քաղաքակրթության նվաճումներից են, ճիշտ այնպես, ինչպես հայտնի գիտական գաղափարները, դրանց հիմքի վրա ստեղծված մարդկության ամենօրյա օգտագործման առարկաները (հեռախոս, հեռուստացույց, ռադիոէլեկտրոնային այլ արժեքներ, ավտոմեքենա, ինքնաթիռ և այլն), գեղարվեստական հաճույք պատճառող մշակութային հանրածանոթ հոգևոր և նյութական արժեքները: Հանրային, այդ թվում՝ պետական կառավարման բովանդակությունը գիտական որոշակի գաղափարների մարմնացումն է հիմնական օրենքի՝ սահմանադրության, այլ ոլորտային օրենքների, կառավարման կազմակերպական կառուցվածքների, անվտանգային ծառայու-

յունների, տարածքային ու ռազմավարական խնդիրների լուծման կառուցակարգերի միջոցով: Գիտական գաղափարների մի զգալի մասը վերաբերում է քաղաքագիտական-կառավարչական ոլորտին, ինչը նշանակում է, որ ընդհանուր քաղաքակրթական մակարդակը, հատկապես գիտության և մշակույթի ոլորտներում ձեռքբերումների առումով, բավարար չէ արդյունավետ պետական կամ հանրային կառավարման համար: Պատմական փորձը վկայում է, որ նվազագույն քաղաքակրթական մակարդակի պարագայում, սակայն պետականության ու պետական կազմակերպվածության որոշակի ձգտման դեպքում հնարավոր է պետական կառավարում, պետականաստեղծ գործունեություն: Եթե նշված երկու բաղադրիչներն առկա են, հնարավոր է ունենալ զարգացող և արդյունավետ պետականություն, իսկ եթե քաղաքակրթական մակարդակը բարձր չէ, իսկ պետականաստեղծ կազմակերպվածության մակարդակն ակտիվ է ու բավարար, կարող է ստեղծվել պետական միավոր, որն իր արդյունավետությամբ կզիջի նախորդին: Սակայն եթե պետականության ձգտումը և հանրության կազմակերպվածության մակարդակը քաղաքակրթական աստիճանին էականորեն զիջում են, ապա հաճախ նման ժողովուրդները չեն կարողանում կառուցել ամուր և զարգացող պետություն:

Այսպիսով, պետությունը քաղաքակրթական նվաճում է, և միաժամանակ պետականության զարգացումը պայմանավորված է երկրի քաղաքակրթական վերելքով՝ գիտության, արտադրության, մշակույթի անընդհատ աճով, ինչպես նաև քաղաքագիտական-կառավարչական հասունության աստիճանով: Վերջինս, ինչպես նշվեց, նույնպես քաղաքա-

կրթության բաղադրիչ է, սակայն ամբողջի մասերը, ինչպես վկայում են պատմական փաստերը, միշտ չէ, որ զարգանում են համաչափ թե՛ բովանդակային, թե՛ տարածաշրջանային, թե՛ քաղաքակրթության գլխավոր հեղինակ մարդկային հանրությունների համադրմամբ:

Մշակույթը կարող է զարգանալ արագ, քան գիտությունը, կամ հակառակը, դրանց զարգացումը յուրահաստուկ է՝ դրսևորվելով ըստ ժողովուրդների և երկրների: Իբրև օրինակ են մարդկային քաղաքակրթության որոշ ուղենշային հայտնագործություններ, որոնց աշխարհագրությունը և հեղինակների ազգային ու երկրային պատկանելությունը հաստատում են այդ դրույթը²: Հանրային կառավարման արդյունավետության առումով գործնական կարևոր նշանակություն ունի այն հարցը, թե ինչպիսին է ըստ առանձին ժողովուրդների քաղաքակրթության աստիճանի և դրա բաղադրիչներից մեկի՝ քաղաքագիտական ու պետական կառավարչական մտքի հարաբերակցությունը: Թեև դժվար է քանակական արտահայտությամբ գնահատել այդ երկու բարդ երևույթները, սակայն դրանք կարող են չափելի և համադրելի դառնալ հարաբերական ցուցանիշներով: Մասնավորապես քաղաքակրթության աստիճանի գնահատման համար կիրառելի է յուրաքանչյուր ժողովրդի հեղինակած, աշխարհում ընդունված գիտական նվաճումների, արվեստի և գրականության ստեղծագործությունների թիվը, քաղաքագիտական ու պետական կառավարչական մտքի մակարդակը կարող է արտահայտվել տվյալ ժողովրդի (երկրի հանրության) պետականության ժամանակահատվածով և

² Տե՛ս “100 великих научных открытий”. Харьков, 2018, 188 էջ:

հանրային կառավարման արդյունավետության ցուցանիշներով: Վերը նշված հարաբերակցությունը մաթեմատիկորեն կարող է արտահայտվել հետևյալ տեսքով՝

$$\frac{yi}{x} \geq \frac{xi}{x}, \text{ կամ } \frac{yi}{xi} \geq 1, \text{ որտեղ.}$$

x-ը քաղաքակրթական նվաճումների հանրագումարային ցուցիչն է,

xi - նույնը առանձին երկրի կամ ժողովրդի (հանրության) համար,

yi - առանձին երկրի կամ ժողովրդի (հանրության) քաղաքագիտական, պետական կառավարչական մտքի ընդհանրացված ցուցիչը:

Եթե խախտվում է անհավասարությունը հակառակ ուղղությամբ, կամ կոտորակի մեծությունը փոքր է միավորից, ապա դա հանգեցնում է անարդյունավետ հանրային կառավարման, անգամ պետականության կորստի վտանգի:

Չխորանալով այդ բարդ մաթեմատիկայի մեջ (ի դեպ, այն առանձին հետազոտության թեմա է)՝ նշենք, որ հայ ժողովուրդն իր գոյության ավելի քան 5 հազար տարիների ընթացքում ունեցել է 1500 տարվա պետականություն, ինչը, ինչպես արդեն նշվել է, կորցրել է 4 անգամ: Մինչդեռ համաշխարհային քաղաքակրթության ասպարեզում ունի զգալի նվաճումներ մաթեմատիկայի, աստղագիտության, ֆիզիկայի, կերպարվեստի, երաժշտության, գրականության, թատրոնի, կինոյի և այլ ոլորտներում, որոնք ընդունվում են աշխարհում իբրև իրողություն*:

* Գիտության առումով իրենց նվաճումներով աշխարհում հայտնի անուններ են Մ. Խորենացին, Ա. Շիրակացին, Մ. Գոշը, Վ. Համբարձումյանը, Ս. Մերգելյանը, Աբրահամ և Արտեմ Ալիխանյանները, Յու. Հով-

Նորբելյան մրցանակի դափնեկիր Ջ. Ստիգլիցի կարծիքով ժողովրդի հարստությունը հենվում է երկու պոնտների վրա. առաջինն աշխատանքի արտադրողականության աճն է, որի գլխավոր աղբյուրը պետության կողմից ֆինանսավորվող հիմնարար հետազոտությունների արդյունքում տեխնիկական առաջադիմությունն է, ինչի շնորհիվ պետությունը հարստանում է, աճում է կենսամակարդակը, երկրորդը հասարակության բարվոք կառուցվածքն է, որը հնարավորություն է ընձեռում մարդկանց համագործակցելու, առևտուր անելու ու ներդրումներ կատարելու, և որը բնութագրվում է օրենքի գերակայությամբ, ժողովրդավարությամբ, անհրաժեշտ իրավական գործընթացներով, գապումների և հակակշիռների համակարգով³: Ակնհայտ է, որ քաղաքակրթության երկու հայտնի բաղադրիչները՝ գիտությունը և քաղաքական-կառավարչական համակարգը, կարևոր են հարուստ և ապահով պետության, ուստի և արդյունավետ հանրային կառավարման համար, սակայն երկուսն էլ պետք է գտնվեն զարգացման և հասունության բարձր աստիճանում, ընդ որում գիտատեխնիկական առաջադիմության գործնական ապահովումը նույնպես քաղաքական-կառավարչական որոշումների արդյունք կարող է

հաննիսյանը, Հ. Օրբելին, Հ. Ադամյանը, Ի. Կնունյանցը, Բ. Մարգարյանը, Ա. Թախտաջյանը, արվեստի և գրականության ոլորտներում վիթխարի ավանդ ունեն Թ. Ռոսլինը, Հ. Այվազովսկին, Մ. Մարյանը, Ա. Խաչատրյանը, Կոմիտասը, Ս. Փարաջանովը, Ռ. Մամուլյանը, Վ. Փափագյանը, Գ. Նարեկացին, Հ. Թումանյանը, Ավ. Իսահակյանը, Վ. Մարոյանը: Թվարկումը, անշուշտ, ավարտուն չէ, այն կարելի է շարունակել, ինչն ապացուցում է հայ ժողովրդի էական ներդրումը մարդկային քաղաքակրթության վերելքի տարբեր բնագավառներում:

³ Տե՛ս *Стиглиц Дж.*, նշվ. աշխ., էջ 14-15:

լինել: Ի դեպ, քաղաքակրթության և դրա մեկ այլ բաղադրիչի՝ տնտեսագիտության ու տնտեսական քաղաքականության հարաբերակցությունը ևս էական է տնտեսության աճի, նորամուծական զարգացման համար: Երկու արևմտյան հեղինակներ, պատասխանելով Անգլիայում 18-րդ դարում արդյունաբերական հեղափոխության վերաբերյալ հարցին, տալիս են միմյանցից տարբերվող պատասխաններ:

Ըստ Ա. Թոյնբիի՝ այդ հեղափոխությունը տեղի ունեցավ Անգլիայում այն պատճառով, որ քաղաքականության, կրոնի և կենսակերպի լճացումն արագացրեց արդյունաբերության համակենտրոնացումը, որն էլ խթանեց ձգտումը տեխնիկական հայտնագործությունների նկատմամբ, ինչին նպաստել են մաթեմատիկայի զարգացումը և ֆիզիկական գիտության նվաճումները⁴: Ըստ Դ. Աճեմօղլուի և Ջ. Ռոբինսոնի՝ արդյունաբերական հեղափոխությունը տեղի ունեցավ Անգլիայում այն պատճառով, որ այնտեղ գործում էին ունիկալ ինկլյուզիվ (ներառական) տնտեսական ինստիտուտներ, որոնք իրենց հերթին նույնատիպ քաղաքական ինստիտուտների արդյունք էին և ապահովում էին սեփականության իրավունքը, վերջ էին դրել արտաքին առևտրի պետական մենաշնորհին, վերացրել արդյունաբերության զարգացման արգելքները⁵:

Երկու պատասխաններն էլ ըստ էության ճիշտ են, սակայն առանձին վերցրած լիարժեք չեն, բայց միմյանց լրաց-

⁴ Տե՛ս *Тойнби А. Дж.*, Постигание истории, М., Прогресс, 1991, էջ 25:

⁵ Տե՛ս *Аджемоглу Д., Робинсон Дм. А.*, Почему одни страны богатые, а другие бедные. Происхождение власти, процветания и нищеты. М., изд.-во АСТ, 2016, էջ 284:

նում են: Թոյնբիի պատասխանում կարևորվում են արդյունաբերության համակենտրոնացումը և նորամուծական զարգացման ձգտումը: Այդ ամենը հնարավոր է համապատասխան քաղաքական ու տնտեսական միջավայրի առկայության պայմաններում, ինչին վերաբերում է Դ. Աճեմօղլուի և Ջ. Ռոբինսոնի տեսակետը: Իսկ արդյունաբերության համակենտրոնացումը կապիտալի կուտակման հետևանք է, որի հիմքում տնտեսագիտական մտքի՝ դասական մակրոտնտեսագիտության [Ա. Սմիթ (1776 թ.), Ժ. Բ. Սեյ (1803թ.), Ջ. Ս. Միլլ (1848 թ.)] զարգացումն է⁶: Երկու մոտեցումներում էլ այս կարևոր դրույթն է պակասում: Այսինքն՝ Անգլիայում տնտեսական ու քաղաքական ինստիտուտների հասունության աստիճանը, համամասնական լինելով քաղաքակրթական մակարդակին, նպաստեց արդյունաբերական հեղափոխությանը՝ տնտեսության նորամուծական զարգացմանը:

Պետականության ու պետական կառավարման անհրաժեշտության գիտակցումը և կազմակերպական գործոնները

Արդի աշխարհում յուրաքանչյուր առաջադեմ երկրում հանրային կառավարման մարմինները ժողովրդավարական սկզբունքներով ձևավորում են քաղաքացիական հասարակության կազմակերպություններ, որոնք կոչված են իրացնելու ժողովրդի՝ իշխանության իրավունքի իրագործումը պետական և տեղական ինքնակառավարման մար-

⁶ Տե՛ս մանրամասն *Самуэльсон П. А., Нордхаус В. Д.*, Экономика, М., Лаборатория базовых знаний, 2000, էջ 638-642:

մինների կազմավորման և դրանց գործունեության ապահովման միջոցով: Հանրային կառավարման մարմինների ձևավորման այդ կառուցակարգին հասնելու համար մարդկային հասարակությունը երկար ճանապարհ է անցել:

Անտիկ աշխարհում քաղաքականությունը համարվել է հասարակության խելամիտ կազմակերպման բարոյաէթիկական նախադրյալների ամբողջություն, իսկ դրա էությունը մարդկանց միավորումն է պետության և մարդու բարձր նպատակներին հասնելու համար (Արիստոտել)⁷: Քաղաքագիտությունը՝ իբրև ուսմունք քաղաքականության մասին, զարգացել է չորս փուլերով⁸.

- սկզբնական փուլ (մ.թ.ա. 5-րդ դար – XVII դար), որի ընթացքում ձևավորվեց քաղաքական փիլիսոփայությունը, իսկ այնուհետև սկզբնավորվեց Վերածննդի դարաշրջանի քաղաքական գիտությունը,
- ուսցիոնալացման փուլ (XVII-XIX դդ.), որն ընդգրկում է նոր ժամանակների քաղաքական մտածողների տեսությունները,
- դասական փուլ (XIX դարի առաջին քառորդ – XX դարի սկիզբ), երբ ձևավորվում է քաղաքագիտությունը՝ իբրև ակադեմիական դասընթաց, ԱՄՆ-ում, Գերմանիայում, Ֆրանսիայում և Մեծ Բրիտանիայում,
- ժամանակակից փուլ (XX-XXI դդ.)՝ ժամանակակից քաղաքագիտական հիմնական դպրոցների և ուղղությունների ձևավորման ժամանակաշրջան:

⁷ Տե՛ս *Myxaev P. T.*, նշվ. աշխ., էջ 38-39:

⁸ Տե՛ս նշվ. աշխ., էջ 60-61:

Քաղաքագիտության հիմնադիրն է համարվում իտալացի փիլիսոփա, դիվանագետ, գրող Ն. Մաքիավելին, որը քաղաքագիտության առարկան համարել է իշխանությունն իր բոլոր դրսևորումներով⁹: Իր հայտնի «Իշխանը» աշխատությունում Ն. Մաքիավելին նկարագրում է պետության տեսակները, նրա կառավարման և իշխանությունը պահպանելու մեթոդները, ռազմական գործը վարելու սկզբունքները, հասարակություն-պետություն նպատակասլաց հարաբերությունները¹⁰:

Ուշագրավ է, որ հայ մտածողներն ստեղծել են պատմության, գրականության, մշակույթի հայտնի մտավոր և նյութական կոթողներ, նաև փիլիսոփայական, սահմանադրական (իրավագիտական) արժեքավոր աշխատություններ, բայց զուտ քաղաքագիտական միտքը մինչև XIX դարի վերջը (առաջին քաղաքական կուսակցությունների ստեղծումը) թվում է աղքատ, իսկ այնուհետև այն զարգացման թափ է ստանում ՀՀ Երրորդ հանրապետության հռչակումից հետո:

Հայկական քաղաքագիտական մտքի պատմության՝ Կ. Միրումյանի ուշագրավ հետազոտությունում մեկնաբանվում են հնագույն ժամանակներից մինչև 18-րդ դարը հայ քաղաքագիտական մշակույթի կայացման առանձնահատկությունները, բնորոշ գծերը, գերակայությունները, ինչպես նաև լուսաբանվում են այդ մշակույթը ստեղծողների գաղափարական ուղղությունները: Քաղաքական անկախության և պետականության երկարաժամկետ բացակայության պայմաններում, ըստ հեղինակի, քաղաքագիտական-իրա-

⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 69-70:

¹⁰ Տե՛ս **Макиавелли Н.** Государь, история Флоренции, М., Эксмо, 2010, էջ 6-87:

վական հիմնախնդիրները դրսևորվել են ազգային-քաղաքական բովանդակությամբ՝ եկեղեցական-քաղաքական երանգավորմամբ՝ գերխնդիր ունենալով իրացնելու հայ ժողովրդի բնական իրավունքը՝ ստեղծելու անկախ և ազատ ազգային պետականություն¹¹: Միաժամանակ պատմականորեն, պետականության բացակայության պայմաններում, պետական քաղաքականությունը փոխարինվել է ազգային քաղաքականությամբ, որի հիմնական կրողը Հայ առաքելական եկեղեցին էր՝ իբրև միակ համազգային կառույց¹²: Թերևս դա է պատճառը, որ նշված աշխատությունում հայ քաղաքագիտական մտքի, ավելի ճշգրիտ՝ ազգային-մշակութային իրավաքաղաքական երանգներով մտքի կրողները և զարգացնողները մեծ մասամբ կրոնական, մշակութային գործիչներ են (Ներսես Մեծ, Մ. Մաշտոց, Մ. Խորենացի, Դ. Անհաղթ, Ա. Շիրակացի, Մ. Գոշ, Գ. Տաթևացի, Ն. Շնորհալի, Ս. Սպարապետ, Շ. Շահամիրյան և այլք):

Քաղաքագիտական մտքի նշված հայկական յուրահատկությունները ներկայացնում են ստեղծված վիճակը, սակայն պետականության բացակայությունն արդեն իսկ հիմնականում բացատրվում է ազգային-քաղաքագիտական մտքի տկարությամբ և անհրաժեշտ գործողությունների անարդյունավետությամբ: Եթե վերը նշված ազգային գաղափարների կրողը գերազանցապես մշակութային-եկեղեցական վերնախավն էր, իսկ հասարակության մյուս խավերի համար դրանք հազիվ թե ունեին էական նշանակություն, մինչդեռ անկախ պետականության անհրաժեշտությունը

¹¹ Տե՛ս *Мирумян К. А.*, Армянская политическая мысль. Формирование и этапы развития, Е., изд.-во РАУ, 2021, էջ 530:

¹² Նույն տեղում, էջ 532:

բարձրագույն արժեք պետք է լինի ողջ հանրության, ոչ թե նրա առանձին շերտերի համար, այլապես այն իրողություն չի կարող դառնալ: Այդ խնդրի լուծման համար հանրության վերնախավն էական ջանքեր պետք է գործադրի, որ նրա բոլոր շերտերը գիտակցեն ու պատրաստ լինեն իրագործելու ազգային-պետական նշանակության արժեքները: Նման գործառույթ XIX-XX դարերում սկսեցին իրագործել հասարակական-քաղաքական կազմակերպությունները:

Հայաստանյան հասարակական-քաղաքական կազմակերպությունները սկսել են ձևավորվել XIX դարի վերջին, երբ չկար հայկական անկախ պետություն, և հայ ժողովուրդն իր պապենական տարածքներով գտնվում էր ռուսական և օսմանյան կայսրությունների կազմում: Առաջին կուսակցություններից է Հայ հեղափոխական դաշնակցությունը (ՀՅԴ), որը հիմնադրվել է 1890 թվականին, և որի նպատակն էր սկզբանե ազգային ազատագրական շարժումը կազմակերպելը և Հայկական հարցի լուծումն էր: Նույն նպատակով էր ստեղծվել նաև Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցությունը (ՄԴՀԿ) 1887 թվականին: Հաջորդ քաղաքական ուժը Ռամկավար ազատական կուսակցությունն է (ՌԱԿ), որը հիմնադրվել է 1921 թվականին, նույնպես Հայկական հարցի լուծման նպատակադրմամբ: Այդ կուսակցություններից առաջին երկուսը, հատկապես ՀՅԴ-ն, մասնակցել են Հայաստանի Առաջին հանրապետության (1918-1920 թթ.) ստեղծմանն ու պետականաշինության կարևոր գործին¹³: Հայաստանում խորհրդային իշխանության

¹³ Տե՛ս մանրամասն *Սուվարյան Յու. Մ., Սարգսյան Վ. Ա., Հայրապետյան Ռ. Ա., Ասատրյանց Ս. Ա., Քոչարյան Մ. Ռ.*, Հանրային կառավարումը Հայաստանի Հանրապետությունում. զարգացման

հաստատումից հետո (1920-1991 թթ.) իշխել է մեկ կուսակցություն՝ Հայաստանի Կոմունիստական կուսակցությունը, որը ԽՄԿԿ մի բաժանմունք էր, իսկ վերը նշված հայ ավանդական կուսակցություններն սկսեցին գործել արտասահմանում, զբաղվել ավելի շատ հայապահպանական և մշակութային խնդիրներով: 1991 թ.՝ Հայաստանի Երրորդ հանրապետության ստեղծումից հետո, երկրում օրենսդրորեն հաստատվեց բազմակուսակցական, ժողովրդավարական հանրային կառավարման համակարգ, իսկ իշխանության մարմինները ձևավորվում են քաղաքացիական հասարակության ինստիտուտների կողմից¹⁴: 1991 թ. հետո ընդունված ՀՀ Սահմանադրության (1995 թ.) ու դրա բարեփոխումների և համապատասխան ազատական իրավական դաշտի ստեղծման արդյունքում ազգային ավանդական կուսակցությունների համար հնարավորություն ընձեռվեց գործելու հայրենիքում, բացի այդ ստեղծվեցին նոր հասարակական-քաղաքական կազմավորումներ, որոնց թիվը 01. 01. 2020 թ. դրությամբ հասնում էր 109-ի: Աստիճանաբար ձևավորվում է նաև փորձագիտական ինստիտուտը: Մակայն հանրային կառավարման ոչ պատշաճ որակը և հատկապես 2018 թ. ապրիլից հետո տեղի ունեցած քաղաքական

ընթացքը և բարեփոխման գերակայությունները, Ե., «Տնտեսագետ», 2018, էջ 20-36:

¹⁴ ՀՀ-ում քաղաքացիական հասարակության կայացման ընթացքը, զանգվածային լրատվամիջոցների դերակատարությունը հանրային կառավարման համակարգում և դրանց զարգացման հիմնախնդիրները լուսաբանվել են *Սուվարյան Յու. Մ., Մարգարյան Վ. Ա., Ասատրյանց Մ. Ա., Քոչարյան Մ. Ռ.*, Հանրային կառավարման ենթահամակարգերը և արդյունավետությունը (Ե., 2021) աշխատությունում:

զարգացումներն ապացուցում են, որ քաղաքացիական հասարակության քաղաքագիտական հասունության աստիճանը, պետականության անհրաժեշտության գիտակցումը և պետական կազմակերպվածությունը համահունչ չեն աշխարհաքաղաքական արդի մարտահրավերներին: Կարելի է ենթադրել, որ այդ երևույթը դարեր շարունակ պետականություն չունենալու, պետական կառավարման փորձի պակասի, քաղաքագիտական ու փորձագիտական մտքի հասունացած չլինելու կամ կայացման ընթացքում գտնվելու արդյունք է: Սակայն, ցավոք, հայոց պետականության պատմական ընթացքի վերլուծությունը հուշում է, որ դրանցից բացի կան այլ պատճառներ ևս, որոնք ժամանակի ընթացքում չեն հաղթահարվում, այլ շարունակվում են: Այդ պատճառներից են¹⁵.

- ներքին անկայունությունը իշխանության թևերի միջև, նաև եկեղեցու հետ անհամաձայնությունը, անմիաբանությունը,
- առաջնորդի անարդյունավետությունը, հաճախ անհրաժեշտ հատկանիշներ չունենալը,
- հասարակության ցածր քաղաքական մշակույթը՝ համընդհանուր ընդունված արժեքների, կողմնորոշումների, զարգացման գերակայությունների գրեթե բացակայությունը,
- աննպաստ հանրային միջավայրը, այսինքն՝ հասարակության անդամների, պետական պաշտոնյաների անտարբեր վերաբերմունքը հայրենավեր իրադարձություններին,

¹⁵ Տե՛ս մանրամասն սույն աշխատության առաջին գլխի 1.1 հատվածը:

- քաղաքական համակարգի կազմալուծումը՝ անհրաժեշտության պարագայում քաղաքական ուժերի միասնականության և համախմբվածության կարևորությունը չգիտակցելու հետևանքով, անցյալում այդ երևույթը դրսևորվում էր թագավորական իշխանության և ֆեոդալների, ինչպես նաև միմյանց միջև ներքին պայքարի տեսքով, ցավալի փաստ է կենտրոնախույս ուժերի մշտական առկայությունը,
- արտաքին պետությունների նենգ քաղաքականությունը, ինչի հանդեպ թույլ է մեր դիմադրողականության ներուժը վերը նշված պատճառներով:

Նշվածներին հաճախ գումարվում են առանց աշխարհաքաղաքական ռիսկերը ճշգրիտ հաշվառելու, առանց կանխատեսումային հաշվարկների կառավարչական որոշումների ընդունումը, ինչն աղետաբեր հետևանքներ է ունենում երկրի ու ժողովրդի համար: Ցավալիորեն մեր պատմությունը հարուստ է նման օրինակներով:

Նշվածը փաստում է, որ էական բարելավման կարիք ունի հանրային կառավարման արդյունավետությունը, ինչի կարևորագույն գործոններից են.

- պետական կազմակերպվածության և կարգապահության մակարդակի բարձրացումը օրենքի գերակայության և վերապահված լիազորությունների պարտադիր կատարման պայմաններում,
- գիտական սկզբունքների ներդրումը հանրային կառավարման համակարգում, հատկապես կարևորագույն նշանակության ռազմավարական որոշումների կայացման գործընթացում, ինչին կարելի է հաս-

- նել կառավարչական կադրերի ճիշտ ընտրության, փորձագետների ներգրավման դեպքում,
- էական նշանակություն տալ երկրում քաղաքագիտական, դիվանագիտական, միջազգային իրավագիտության մասնագիտություններով կադրերի պատրաստմանը և այդ ուղղություններով գիտական հետազոտությունների իրականացմանը, հասարակության քաղաքական մշակույթի ու մտածողության մակարդակի բարձրացմանը,
 - խիստ հստակեցնել իշխանության թևերի միջև լիազորությունների բաշխումը և անհրաժեշտ հակակշիռների ու զսպումների սահմանադրորեն ամրագրումը, ինչը մասամբ ստվերվել է սահմանադրական վերջին (2015թ.) բարեփոխումների ընթացքում,
 - վերադառնալ հանրային կառավարման կիսանախագահական համակարգին, քանի որ քաղաքացիական հասարակության հասունության ներկա մակարդակի համար ժամանակավրեպ էր անցումը խորհրդարանական կառավարման սկզբունքներին:

Շարադրվածի համատեքստում դիտարկենք լուծման ենթակա մի հիմնախնդիր ևս: Քաղաքագիտության մեջ XIX դարի վերջերին և XX դարի ընթացքում ձևավորվել է այսպես կոչված քաղաքական վերնախավի ժամանակակից դասական ժողովրդավարական տեսությունը, ըստ որի՝ աշխարհը պետք է կառավարի ընտրյալ փոքրամասնությունը՝ վերնախավը, մարդիկ, որոնք օժտված են հատուկ հատկանիշներով (բնական օժտվածություն, կրթությամբ և

դաստիարակությամբ ստացված)¹⁶: Ընդ որում վերնախավային լինելը կամ վերնախավ ունենալը, ըստ այդ տեսության, հասարակության արդյունավետ գործունեության պայման է և հիմնվում է կառավարչական ու կատարողական աշխատանքների միջև բնական բաժանման վրա, իսկ վերնախավի ձևավորումը հասարակության բնական ընտրության հետևանք է, երբ առանձնացվում են առավել արժանիները: Ընտրության կառուցակարգերը տարբեր են, դրանցից են որակյալ համալսարանական կրթությունը, աշխատանքը, այդ թվում՝ հասարակական-քաղաքական, ընտրությունները, սոցիոլոգիական հարցումները, մամուլի արձագանքները և այլն¹⁷: Ի դեպ, սովորաբար վերնախավից առանձնանում են առանձնաշնորհյալ (խարիզմատիկ) անհատները, որոնք իրականացնում են օրինակի (էտալոնային) իշխանությունը (առաջնորդումը)¹⁸: Ինչպես ընդգծում են ժամանակակից հետազոտողները, արդի ժողովրդավարական պետության խնդիրը ոչ թե պայքարն է վերնախավության դեմ, այլ հասարակության համար օգտակար, արդյունավետ վերնախավի ձևավորումը, դրա ժամանակին որակական նորացումը, օլիգարխացման ու փակ տիրապետող և արտոնյալ խավ դառնալու միտումների կանխումը¹⁹:

¹⁶ Տե՛ս *Пугачев В. П., Соловьев А. И.*, նշվ. աշխ., էջ 132-152:

¹⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 139-149:

¹⁸ Տե՛ս *Мескон М., Альберт М., Хедоури Ф.*, Основы менеджмента, М., «Дело», 2000, էջ 468, 475:

¹⁹ Տե՛ս *Пугачев В. П., Соловьев А. И.*, նշվ. աշխ., էջ 147:

Խորքային պետություն. էությունը, անհրաժեշտությունը և դրսևորման ձևերը

Հրապարակախոսական և հանրագիտարանային գրականության («Ռեգնում», «Վիքիպեդիա» հանրագիտարան և այլն) էջերում հաճախ է հանդիպում «խորքային պետություն» արտահայտությունը՝ մի շարք էլիտար ընտանիքների (օրինակ՝ «Ջեներալ մոթորս», «Ջեներալ էլեկտրիկ» սեփականատերերի), որևէ կուսակցության, կրոնական (Իրանի Իսլամական Հանրապետություն) կամ պետական քաղաքական գործչի, բանակի (Թուրքիա, Եգիպտոս) և այլ դրսևորումներով: Ուշագրավ է, որ գիտական գրականության մեջ խորքային պետության գաղափարը չի լուսաբանվում: Առաջին հայացքից երևույթի ընկալումը բացասական է, քանի որ, մանավանդ մեր օրերում, գոյություն ունեն ժողովրդավարական սկզբունքներով ընտրված պետական ու տեղական ինքնակառավարման մարմիններ, և թվում է, թե ինչ անհրաժեշտությամբ է թելադրվում խորքային պետության գաղափարը: Սակայն իրական կյանքը, տեղի ունեցող ռազմաքաղաքական իրադարձությունները, տնտեսական սուր մրցակցությունը, պայքարն ազդեցության գոտիների համար հանգեցնում են այն եզրակացության, որ, ինչպես նկատել են պետության ծագման «հասարակական դաշինքի» տեսաբանները (Թ. Հոբս²⁰, Ջ. Լոկկ²¹), «Բոլորը բոլորի դեմ

²⁰ См' u **Т. Гоббс**, Левиафан, или Материя, форма и власть государства церковного и гражданского // Сочинения в двух томах. Т. 2. М.: Мысль, 1991.

²¹ **Дж. Локк**, Два трактата о государственном правлении // Сочинения в трех томах, т. 3. М.: Мысль, 1988.

պատերազմի» վտանգը բնութագրական է մարդկանց, եթե չկա պետական իշխանություն, ապա ներկայումս, մեր համոզմամբ, նույն երևույթը վերաբերում է նաև միջպետական հարաբերություններին: Եվ թեև այդ վտանգի գիտակցումով ստեղծվել են վերապետական կառույցներ (Ազգերի լիգա, այնուհետև՝ ՄԱԿ, դաշնակցային զանազան ռազմաքաղաքական միավորումներ), այնուամենայնիվ յուրաքանչյուր պետություն օբյեկտիվ անհրաժեշտությամբ ինքը պարտավոր է ամրապնդել իր ներքին և արտաքին անվտանգությունը: Այդ նկատառումներով ստեղծվում են բանակը, ազգային անվտանգության և ներքին գործերի կառույցները: Ուսումնասիրություններից պարզվում է, որ այդ համակարգի կարևոր օղակներից է նաև խորքային պետությունը: Այն հատկապես անհրաժեշտ է փափուկ ուժի ներգործությամբ իրականացվող գունավոր հեղափոխությունների պայմաններում, երբ պետությանը վտանգ է սպառնում արտաքին ուժերի ազդեցությամբ գործող ներքին քաղաքական ինստիտուտների՝ հոգուտ այլ երկրների շահերի գործունեության արդյունքում, ինչը կարող է տեղի ունենալ նույնիսկ ժողովրդավարության կարևորագույն կանոններից մեկի՝ օրենքի գերակայության պայմաններում: Մանավանդ, ըստ արևմտյան փորձագետների վերլուծության, քաղաքացիական հասարակությունը հետընթաց է ապրում ոչ այնքան տեխնոլոգիաների (հեռուստացույց, համացանց, ֆեյսբուք և այլն), որքան պետական չափազանց լայն ռոնձգությունների պատճառով²²: Ավելին, «քաղաքացիական հասարակութ-

²² Տե՛ս *Ֆեդգուսոն Ն.*, Մեծ անկում. ինչպես են քայքայվում ինստիտուտներն ու կործանվում տնտեսությունները, Ե., «Նյու Մեգ», 2020, էջ 130-161:

յունը կարծես կորպորատիվ շահերի ու ամենակուլ պետության միջև ընկած անտեր գոտի լինի», իսկ «ժողովրդավարության և կապիտալիզմի համար այդքան կարևոր իրավունքի գերակայությունն սպառնում է վերածվել իրավաբանների գերակայության»²³: Նույնիսկ միտում է նկատվում, որ ԱՄՆ-ը կարող է վերածվել մի երկրի, որտեղ էկոնոմիկան և ժողովրդավարությունը բնակչության մեկ տոկոսի համար են և այդ մեկ տոկոսի ցանկությամբ²⁴: Մարդկանց անհավասարության նման իրավիճակը վտանգավոր է ոչ միայն տվյալ երկրի, այլ նաև մյուսների համար, քանի որ հարուստ վերնախավը ձգտում է իր քաղաքական ու տնտեսական ազդեցությունը տարածել նաև տարբեր տարածաշրջանների վրա՝ «փափուկ ուժի» ազդեցությամբ շարունակելով գաղութացման միջնադարյան ավանդույթները, որոնք լավ նկարագրված են Յու. Ն. Հարարիի աշխատությունում²⁵: Ժառանգական միապետության պայմաններում խորքային պետության անհրաժեշտությունը նվազագույն էր, քանի որ միապետը և նրա ընտանիքը տնօրինում էին երկիրը, նրա հարստությունը և շահագրգռված էին ընդլայնելու ու զարգացնելու առկա ունեցվածքը: Հանրային կառավարման արդի պայմաններում ժառանգականության երևույթը բացառված է, քաղաքական ինստիտուտները հարաբերաբար ժա-

²³ Տե՛ս նույն տեղում, էջ 180:

²⁴ Տե՛ս *Стиглиц Дж.*, նշվ. աշխ., էջ 7 (ի դեպ, այս երևույթը մարդկանց անհավասարության, ժողովրդավարության ձևախեղման, խորքային պետության գոյության և աշխարհի տարբեր տարածաշրջաններում փոքրաթիվ խմբերի ազդեցության տարածման ձգտման մասին վկայող փաստ է):

²⁵ Տե՛ս *Հարարի Յու. Ն.*, Sapiens: Մարդկության համառոտ պատմություն, Ե., Նյու Մեք, 2020, 512 էջ:

մանակավոր կառավարիչներ են, ու երկրի ճակատագրի հետ նրանց կապը նվիրվածությունն է ազգային արժեքներին և հայրենասիրությունը: Համընդհանրացման արդի պայմաններում վերջիններս ժառանգական սեփականության համեմատությամբ հարափոփոխ են, շահագրգիռ ներագդեցության ենթակա: Հենց այս հանգամանքն է խորքային պետությունը դարձնում անհրաժեշտ, քանի որ անվտանգային ուժային կառույցները մեծ մասամբ գտնվում են ընտրված պետական մարմինների ենթակայության ներքո, հատկապես եթե սահմանադրորեն ճիշտ չեն կառուցված իշխանության թևերի միջև հակակշիռները, իսկ այդ երևույթը բնորոշ է երիտասարդ և թույլ զարգացած երկրներին*:

* Համընդհանրացման պայմաններում հանրային կառավարման մարմինների ժողովրդավարական սկզբունքներով ձևավորումը պարունակում է դժվար կառավարվող ռիսկեր հետևյալ պատճառներով.

- չափազանց բարդ է սովորական քաղաքացու համար այսօր կողմնորոշվել թե՛ ներքին, թե՛ արտաքին քաղաքականության դժվար ընկալելի բարդագույն խնդիրների առաջարկվող լուծումներում, որոնք ներկայացնում են քաղաքական ուժերը,
- բևեռացված է հասարակությունը՝ ըստ ինտելեկտուալ մակարդակի, և հաճախ մեծամասնություն են կազմում անձինք, որոնց համար գրեթե անհնար է ըմբռնել աշխարհաքաղաքական հիմնախնդիրները և շատ հաճելի անձնական շահերին վերաբերող ամբոխավարական խաբուսիկ խոստումները, ինչը մեծացնում է պոպուլիստների՝ իշխանությանը տիրանալու հնարավորությունները,
- քաղաքացիական հասարակության համընդհանրացման գաղափարներով զինված կառույցներն արագորեն ազգային արժեքների և շահերի փոխարեն կարող են ընտրության և հետագա գործընթացներում առավելապես կարևորել համընդհանրական արժեքները:

«խորքային պետություն» երևույթը կոչված է ամբողջացնելու երկրի պետականությունը, թույլ չտալու գործող քաղաքական ինստիտուտներին շեղվելու ազգային արժեքներից, պետության և երկրի զարգացման ազգաշահ տեսլականից: Իր բնույթով այն ազգային անվտանգության ոչ բացահայտ, բայց կայուն ու կարևոր բաղադրիչներից է: Հարկ է ընդգծել նաև, որ իշխանության ձևավորման, պետական քաղաքականության բովանդակության առումներով խորքային պետությունը կարող է նշանակել սողացող վերադարձ դեպի մինչև 18-րդ դար գոյատևած ազնվականական պետության հայեցակարգ, ինչից հարկ է խուսափել օրենսդրական կարգավորումներով:

Անդրադառնալով խորքային պետության դրսևորման ձևերին, որոնք, ինչպես արդեն նշվել է, բազմազան են, նկատելի է, որ դրանց թվում թե՛ եվրոպական, թե՛ ասիական որոշ երկրներում նախընտրել են ավանդական ժառանգական միապետների ինստիտուտը (Մեծ Բրիտանիա, Իսպանիա, Ճապոնիա և այլն): Այդ ուղիով հավանաբար կգնանա Ռուսաստանը (տե՛ս Халдей А. Глубинное государство в России-утопия или реальность? “Регнум”, 21. 05. 2020):

Այս տարբերակներից են մտավոր (նաև փորձագիտական) կամ գործարար էլիտան, կրոնական գաղափարախո-

Ուշագրավ է, որ ժողովրդավարության հնարավոր թերությունները մատնանշել է դեռևս Պլատոնը՝ ընդգծելով, որ դրա պայմաններում հավասարեցվում են «հավասարներն ու անհավասարները», ինչի հետևանքով իշխում է ամբոխավարությունը, աղավաղվում են բարոյական չափանիշները (տե՛ս Платон, Государство //Сочинения в 3-х томах, т. 3, ч. 1, М., Мысль, 1971, էջ 150, 374, 380):

սությունը՝ առաջնորդի գլխավորությամբ, զանազան քաղաքական կազմակերպությունները (կուսակցությունները), բանակի սպայակազմը և այլն: Հայաստանում պատմականորեն կայացած կառույցը, որն առաջին հերթին կարող է հավակնել այդ դերին, Հայ առաքելական եկեղեցին է, որը դարեր շարունակ պետականության բացակայության պայմաններում ապահովել է հայոց ինքնության պահպանությունը, անգամ իր քրիստոնեական գաղափարախոսությունից բացի ունենալով իրավական հիմք՝ «Կանոնագիրք Հայոցը»:

Հաջորդիվ ժողովրդի առջև պետականության ամրապնդման պարտավորություններ պետք է ունենան նաև մտավորական և հասուն գործարար վերնախավը, բանակի և ազգային անվտանգության ծառայության բարձրաստիճանի սպայակազմը: Ի դեպ, նշված լիազորությունները ոչ մի երկրում ամրագրված չեն օրենսդրական փաստաթղթերում: Դրանք ձևավորվում, կայանում և հանրության կողմից ընդունվում են տարիների ընթացքում, դառնում ավանդույթ: Էականն այն է, որ վերը թվարկված սուբյեկտները գիտակցեն իրենց առաքելությունը և իրենց գործելակերպով ստանան հանրության վստահությունն ու դառնան ամուր պատվար հայկական պետականության ամրապնդման ու զարգացման համար:

Եզրակացություններ

Հանրային կառավարման արդյունավետության ու պետականության անվտանգության համար չափազանց կարևոր են երկրում մարդկային քաղաքակրթության մակար-

դակը՝ իբրև առանցքային ռեսուրս սոցիալ-տնտեսական և մշակութային հետագա զարգացման, անվտանգային խընդիրների լուծման նպատակով, ինչպես նաև քաղաքագիտական ու պետական կառավարչական մտքի բարձր աստիճանը՝ առկա ռեսուրսների և աշխարհաքաղաքական ռիսկերի հաշվառմամբ ճշգրիտ կանխատեսումային հաշվարկների և հիմնավոր ու նպատակասլաց կառավարչական որոշումների ընդունման համար:

Պատմատրամաբանական վերլուծությունը փաստում է, որ եթե երկրորդը էականորեն զիջում է առաջինին, ինչը նկատվում է նոր զարգացող կամ դեռևս թույլ երկրներում, ապա դա բացասական ազդեցություն կունենա պետականության ու պետության կարևորագույն խնդիրների լուծման ընթացքի և արդյունքների վրա: Դիտարկելով նման իրավիճակ առաջացնող պատճառները, մասնավորապես Հայաստանի Հանրապետության համար, կարևորվում է հանրային կառավարման գիտական մակարդակի բարձրացումը, ինչին կարելի է հասնել կառավարչական կադրերի ճիշտ ընտրության, ռազմավարական որոշումների ընդունման հիմքում գիտական հետազոտությունների արդյունքների, ոլորտային փորձագետների եզրակացությունների հաշվառման պարագայում: Կարևորագույն խնդիրներ են իշխանության թևերի միջև լիազորությունների հավասարակշռված բաշխումն ու օրենքի գերակայությամբ դրանց պարտադիր կատարումը, անհրաժեշտ հակակշիռների ու զսպումների սահմանադրորեն ամրագրումը:

Քաղաքացիական հասարակության հասունության ներկա մակարդակի պայմաններում ժամանակավրեպ էր անցումը խորհրդարանական կառավարման սկզբունքնե-

րին: Ուստի անհրաժեշտ է վերադառնալ հանրային կառավարման կիսանախագահական համակարգին:

Հետազոտելով այսպես կոչված խորքային պետության երևույթը, դիտելով այն իբրև պետականության անվտանգության երաշխիք՝ առաջարկվել է համընդհանրացման և աշխարհաքաղաքական ռիսկերի չեզոքացման նպատակով դրա հնարավոր կիրառության եղանակների համալիր:

2.2. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ*

Ներածություն

Հասարակական-տնտեսական կյանքի արդի փուլում չափազանց շատ են գործածվում իրար հետ սերտորեն շաղկապված ռազմավարություն և կառուցվածք արտահայտությունները: Դրանցից առաջինը՝ իբրև գիտական կատեգորիա, արտահայտում է կազմակերպության, նաև երկրի, տարածաշրջանի, զարգացման գերակայությունները ժամանակի որոշակի հատվածում, սովորաբար միջին ժամկետային և երկարաժամկետ հորիզոններով, գնահատելով դրանց համար անհրաժեշտ բոլոր տեսակի ռեսուրսների քանակական բնութագիրը¹:

Կառուցվածքն արտացոլում է այն կազմակերպական միջավայրը, որը կարող է ապահովել ռազմավարական տեսլականի իրագործումը: Ըստ կառավարման տեսության՝ կազմակերպական կառուցվածքն ածանցյալ է ընտրված ռազմավարությունից և պետք է բխի դրանից²:

Նման տրամաբանության հենքը գործարար մտածողության կառուցակարգն է՝ սահմանել կազմակերպության

* Առաջին անգամ հրապարակվել է «Լրաբեր հասարակական գիտությունների» (2022 թ., թ. 2) հանդեսում:

¹ *Мескон М., Альберт М., Хедоури Ф.*, 2000, 257: Минцберг Г., Альстрэнд Б., Лэмпел Д. 2000, 16: Дафт Р.Л. 2006, էջ 237: *Սովորյան Յու. Մ.*, 2020, էջ 21-22:

² *Мескон М., Альберт М., Хедоури Ф.*, 2000, 331: Дафт Р.Л. 2006, էջ 360:

առաքելությունից բխող շահեկան նպատակներ, ստեղծել դրանք իրագործելու կազմակերպական կառույցներ, նաև աշխատողներին շահադրդելու և նպատակներին հասնելու գործընթացները վերահսկելու միջավայր: Վերահսկողությունը միաժամանակ միջոց է նպատակներ–արդյունքներ շղթայի հետադարձ կապի ապահովման համար: Գործարար փիլիսոփայության նման տրամաբանությունն առանցքային նշանակություն ունի կառավարման գործառույթների դասակարգման համար: Իսկ դրանք ներկայումս, ինչպես ընդունված է կառավարման տեսության մեջ, հիմնականում չորսն են՝ պլանավորում (ծրագրավորում), կազմակերպում, շահադրդում, վերահսկողություն³ [1, էջ 71-76]:

Իհարկե, կան նաև այլ դասակարգումներ⁴:

Սույն հետազոտության խնդիրը ռազմավարություն–կազմակերպական կառուցվածք փոխառնչությունների արդյունավետ տարբերակի ընտրության սկզբունքների և չափանիշների մշակումն է: Ի դեպ, այդ խնդիրը դիտարկվելու է միկրոմակարդակում (կազմակերպություններում), ինչպես նաև մակրոմակարդակում՝ հանրային կառավարման առանձնահատկությունների հաշվառմամբ: Կարող է թվալ, թե ռազմավարություն–կառուցվածք փոխառնչությունները ժամանակի ընթացքում կարգավորվում են, մանավանդ ներդրվում են ճկուն և հարմարվող կազմակերպական կառուցվածքներ, սակայն հաճախ կազմակերպություններում և մակրոմակարդակում կառավարման արդյունավետությունը չի համապատասխանում անհրաժեշտ մակար-

³ Мескон М., Альберт М., Хедоури Ф., 2000, էջ 71-76:

⁴ Файоль А., 1965, 362-363: Кунц Г., О’Доннел С., 1981, 114-116: Дафт Р.Л. 2006, էջ 26-28.

դակին, ինչը դրսևորվում է տնտեսական աճի ցածր տեմպերի կամ նվազման միջոցով, տնտեսական մրցունակության, բնակչության կենսամակարդակի, անվտանգային միջավայրի անբավարար մակարդակով և այլն: Շատ դեպքերում նման թերությունների պատճառներ համարվում են ռեսուրսների ծավալը կամ որակը, աշխատանքի ցածր արտադրողականությունը, անբավարար տեխնոլոգիական մակարդակը, մինչդեռ թե՛ ցածր ցուցանիշները, թե՛ այդ բացերը կարող են լինել անարդյունավետ կառավարման արդյունք: Ահա թե ինչու արդիական խնդիր է կառավարման կազմակերպական կառուցվածքի լավագույն տարբերակի ընտրությունը, ինչը կառավարման բարձր արդյունավետության էական նախադրյալ է:

Սակայն նախքան ռազմավարության և կառուցվածքի փոխառնչությունները դիտարկելը, փորձենք բնութագրել դրանց ներկայացվող ժամանակակից պահանջները և չափանիշները:

1. Ռազմավարության ունիվերսալ բնութագիրը և առանձնահատկությունները միկրո և մակրո մակարդակներում

Ռազմավարությունը՝ իբրև գիտագործնական լայնորեն կիրառվող հասկացություն, ծնունդ է առել գործարարության ոլորտում և ռազմական գործում: Յուրաքանչյուր կազմակերպություն ստեղծվում է որոշակի առաքելության իրականացման համար, ըստ այդմ՝ հետապնդելով որոշակի նպատակներ և ձգտելով լինել մրցունակ ու ստանալ եկամուտներ (շահույթ): Գործարարությունը (նաև ռազմական

գործը) կարճաժամկետ գործողություն չէ, այն ենթադրում է կատարել ներդրումներ, թողարկել արտադրանք (ծառայություններ), իրացնել այն, ունենալ հաճախորդներ, շուկայում նկատվել որակյալ արտադրանքով, մրցունակ գնով և ապահովել կայուն ու երկարաժամկետ եկամտաբերություն: Հետևաբար՝ անհրաժեշտություն է գործարարության գործողությունների երկարաժամկետ ծրագրավորումը՝ հստակեցնելով կազմակերպության առաքելությունից բխող ռազմավարության նպատակները, գնահատելով պահանջը ռեսուրսների նկատմամբ և շուկայական մրցակցային չափանիշները (որակ, գին, պահանջարկի կառուցվածք և այլն): Կառավարման տեսության մեջ ռազմավարության էության ընդհանրական բնորոշումներից մեկի համաձայն. «...ռազմավարությունը պլան է, որը նկարագրում է ռեսուրսների բաշխումը և գործողությունները, որոնք անհրաժեշտ են արտաքին միջավայրի հետ փոխգործակցելու, ստանալու մրցակցային առավելություններ և հասնելու կազմակերպության նպատակներին»⁵ : Այսպիսով, ռազմավարությունը կազմակերպության փիլիսոփայությունն է, որը, հաշվի առնելով զարգացման անցյալի փորձը, օրինաչափությունները, ներքին և արտաքին միջավայրերի փոփոխությունները, արտահայտում է նրա մրցակցային նպատակները, գործողությունների և ռեսուրսների բաշխման գերակայությունները: Կախված ռազմավարության առարկայից՝ այն կարող է լինել

⁵ *Дафт Р.Л.*, 2006, էջ 237:

տնտեսական, սոցիալական, գիտատեխնիկական, քաղաքական, տարածքային և այլն⁶:

Ռազմավարության հիմնավորվածությունը զգալիորեն պայմանավորված է դրա մշակման մեթոդաբանությամբ: Հարկ է հաշվի առնել, որ ընտրել ռազմավարություն նշանակում է ընդունել կառավարչական որոշում կազմակերպության առաքելության և նպատակների վերաբերյալ երկարաժամկետ՝ առնվազն 3-5 և ավելի տարիների համար: Իսկ ապագային միտված որոշումներն ընդունվում են անորոշության և ռիսկերի պայմաններում հնարավոր այլընտրանքային տարբերակներից: Արդյունավետ կամ լավագույն տարբերակը կարող է ընտրվել, եթե կիրառվեն կազմակերպության ներքին և արտաքին միջավայրերի, տեխնոլոգիական և շուկայական գործոնների փոփոխությունները հաշվի առնող կանխատեսումային բազմատարբերակ մաթեմատիկական մեթոդներ, հայտնի Բոստոնի և Մակ-Քինսիի խորհրդատվական խմբերի, Ի. Անսոֆի, Մ. Պորտերի մատրիցային եղանակները, SWOT վերլուծության գործիքակազմը⁷: Անշուշտ, առավել բարդ է ռազմավարական որոշման ընդունումը հանրային կառավարման մակարդակով: Սակայն մեթոդաբանական առումով մասշտաբի և առարկայի (ըստ տարիների) տարբերություններն էականորեն չեն ազդում ռազմավարության ընտրության տրամաբանության վրա, քանի որ ռազմավարության բովանդակությունը կառուցվածքային առումով անփոփոխ է, տարբեր կարող են լինել ծավալային ցուցանիշները, արտաքին ու ներքին միջավայրերի, շուկայական և գիտատեխնոլոգիա-

⁶ *Մուլարյան Յու. Մ.*, 2020, էջ 21:


⁷ Մենեջմենթ 2016, էջ 105-119:

կան գործոնների կազմը և արժեքները, դրանց փոփոխության միտումները:

Ի դեպ, անկախ մակարդակից, ռազմավարության ընդունումը և ռազմավարական կառավարումը տարբերվում են միմյանցից: Առաջինը ռազմավարական պլանավորումն է երկարաժամկետ և օպերատիվ ժամանակային հորիզոններով, իսկ երկրորդը, դրանից բացի, նաև ներառում է ծրագրված միջոցառումներն իրագործելու համար կառավարման կազմակերպական կառուցվածքների և շահադրդման համակարգի ստեղծումը, ռեսուրսների բաշխումը, հետադարձ կապի եղանակով վերահսկողության ապահովումը (գծապատկեր 1.)⁸:

Գծապատկեր 1.

Ռազմավարական կառավարման գործընթացը



⁸ Մուվարյան Յու. Մ., 2020, էջ 22-23:

2. Կառուցվածք. սկզբունքները, պահանջները և մոդելները

Եթե ռազմավարության ընտրությունը դրական կամ բացասական առումով ճակատագրական կարող է լինել կազմակերպության, նույնիսկ երկրի համար, ապա կառավարման կազմակերպական կառուցվածքը կարող է դերակատարում ունենալ որոշված ռազմավարության ճշգրիտ իրագործման կամ ձախողման, իսկ ընդհանուր առմամբ՝ ռազմավարական կառավարման գործընթացի բոլոր փուլերի հիմնավորվածության և քանակական ու որակական արդյունավետության համար:

Ռազմավարությունը՝ իբրև կարևորագույն որոշում, ընդունում է կազմակերպության (երկրի, տարածաշրջանի) ղեկավարությունը, անշուշտ, այս խնդրում կարևորվում է կազմակերպական կառուցվածքը գլխավորողի՝ առաջնորդի կերպարը՝ որպես կառավարչական որոշումների ընդունման առաջին սուբյեկտի⁹: Կառավարման տեսության մեջ կազմակերպության կառուցվածքը բնութագրվում է որպես «...կառավարման մակարդակների և ֆունկցիոնալ ռլորտների այնպիսի տրամաբանական փոխհարաբերություններ, կառուցված այնպիսի ձևով, որը հնարավորություն է ընձեռում առավել արդյունավետ հասնելու կազմակերպության նպատակներին»¹⁰:

⁹ *Մուվարյան Յու. Մ.*, 2020, էջ 75-79:

¹⁰ *Мескон М., Альберт М., Хедоури Ф.*, 2000, էջ 90:

Ռազմավարության ընտրությունից հետո, ինչպես նշվել է, հաջորդ կառավարչական որոշումը կառավարման կազմակերպական կառուցվածքի սահմանումն է, որին ներկայացվող հիմնական պահանջներն են.

- անկախ մակարդակից՝ ստեղծվող կազմակերպական կառուցվածքի նպատակն ընդունված ռազմավարության իրագործումն է, ուստի պետք է բխի նրանից, համապատասխանի առաջադրված խընդիրների անվերապահ լուծմանը,
- ստեղծվող կազմակերպական կառուցվածքն արդյունավետ կարող է լինել, եթե այն արտացոլում է աշխատանքի մասնագիտական ու ոլորտային բաժանումը, և առանձին կառույցներին ու աշխատատեղերին վերապահված են հստակ լիազորություններ իրենց խնդիրներն իրագործելու համար,
- գիտատեխնոլոգիական արագ փոփոխությունների պայմաններում ստեղծվող կառուցվածքները պետք է լինեն ճկուն, հարմարվողական, իսկ անհրաժեշտության դեպքում, հատկապես սիներգիկ բնույթի խնդիրների լուծման համար կարող են ձևավորվել միջգերատեսչական (միջբաժնային) ժամանակավոր նախագծային կառույցներ,
- կազմակերպական կառուցվածքներն օրյեկտիվ անհրաժեշտությամբ պետք է համապատասխանեն Մ. Վեբերի ձևակերպած ռացիոնալ բյուրոկրատիայի բնութագրերին¹¹, որոնցից են աշխատանքի հստակ բաժանումը, որը հանգեցնում է ըստ պաշտոնների

¹¹ *Мескон М., Альберт М., Хедоури Ф.*, 2000, էջ 332-333:

բարձր որակավորման մասնագետների ներգրավման, կառավարման մակարդակների աստիճանակարգությունը, երբ ստորին մակարդակները վերահսկվում են բարձրերի կողմից, բոլորի համար պարտադիր ընդհանուր կանոնների և ստանդարտների առկայությունը, որն ապահովում է աշխատանքի համակարգվածությունը և միատիպությունը, պատոնական պարտականությունների կատարման ձևական անդեմության ոգին և այլն,

- կառավարման ապարատի օպտիմալացում, ինչը նշանակում է կառավարման գործառույթների իրականացում նվազագույն կամ չուճացված կառավարչական ծախսերի պայմաններում, այսինքն՝ աշխատողների այնպիսի թվով, որն անհրաժեշտ է սահմանված լիազորությունների կատարման համար:

Կառավարման կազմակերպական կառուցվածքի ամենատարածված և կիրառվող տարատեսակը գծային-ֆունկցիոնալ մոդելն է, որն ունի տարբեր դրսևորումներ, իսկ կազմակերպությունների և հանրային կառավարման առումով՝ առանձնահատկություններ, որոնց կանոդրադառնանք ստորև:

3. Ռազմավարության և կառուցվածքի փոխառնչությունները կազմակերպություններում

Գործնական կյանքում կազմակերպություններում ռազմավարության և կառավարման կազմակերպական կառուցվածքի փոխառնչությունները կարգավորվում են գոր-

ծող օրենսդրությամբ՝ երկրի սահմանադրության, քաղաքացիական օրենսգրքի և ոլորտային օրենքների, ինչպես նաև կազմակերպության կանոնադրության հիման վրա:

Ըստ ՀՀ գործող քաղաքացիական օրենսգրքի 51-րդ հոդվածի՝ բոլոր իրավաբանական անձ հանդիսացող կազմակերպությունները, ինչպես հայտնի է, բաժանվում են առևտրայինի և ոչ առևտրայինի: Առևտրային կազմակերպությունները կարող են ստեղծվել տնտեսական ընկերակցությունների և ընկերությունների ձևով, ոչ առևտրային կազմակերպություններ են հասարակական միավորումները, հիմնադրամները, իրավաբանական անձանց միությունները և օրենքով նախատեսված այլ կառույցներ¹²:

Ռազմավարության և կազմակերպական կառուցվածքի փոխառնչությունները ֆունկցիոնալ առումով նախ դիտարկենք առավել լայն տարածում ունեցող առևտրային որոշ կազմակերպությունների՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների և բաժնետիրական ընկերությունների օրինակով: Այնուհետև կանդրադառնանք պետական ոչ առևտրային կազմակերպություններին:

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կառավարման բարձրագույն մարմինն ընդհանուր ժողովն է, որի գուտ կառավարչական իրավասություններից են ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, կանոնադրության ընդունումը, գործադիր մարմինների ձևավորումը, վերստուգիչ հանձնաժողովի

¹² Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք 2015, 26:

ընտրությունը, ներքին գործունեությունը կարգավորող փաստաթղթերի ընդունումը¹³:

Բաժնետիրական ընկերությունների կառավարման բարձրագույն մարմինն ընդհանուր ժողովն է, որի կառավարչական իրավասություններից են կանոնադրության հաստատումը, ինչպես նաև կառավարման հաջորդ մարմնի՝ խորհրդի քանակական կազմի հաստատումը և դրա անդամների ընտրությունը, ընկերության գործադիր մարմնի (միանձնյա կամ կոլեգիալ) ձևավորումը, եթե կանոնադրությամբ այդ իրավունքը վերապահված չէ խորհրդին, ընկերության վերստուգիչ հանձնաժողովի անդամների ընտրությունը¹⁴: Խորհրդի բացառիկ իրավասություններից են ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, ընկերության գործադիր մարմնի ձևավորումը (եթե կանոնադրությամբ այդ իրավունքը վերապահված է խորհրդին), ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը, ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի և հաստիքացուցակի հաստատումը¹⁵:

Շարադրանքից ակնհայտ է, որ գործարար ոլորտի կազմակերպություններն ինքնուրույն են որոշում ընդունում ռազմավարության և կառավարման կազմակերպական կառուցվածքի վերաբերյալ: Մասնավորապես սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններում ռազմավարության ընդունման պատասխանատուն ընկերության ժո-

¹³ ՀՀ օրենքը սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին 2008, էջ 21-22:

¹⁴ ՀՀ օրենքը Բաժնետիրական ընկերությունների մասին 2009, էջ 66-67:

¹⁵ Նույն տեղում, էջ 70-71:

դովն է, իսկ բաժնետիրական ընկերություններում՝ ընկերության խորհուրդը: Նույն տրամաբանությամբ կարգավորվում են նաև կառավարման կազմակերպական կառուցվածքի ձևավորման խնդիրները:

Կազմակերպությունների հիմնադիր փաստաթղթում՝ կանոնադրությունում, արտացոլվում են նրանց գործունեության առարկան, նպատակները, ինչպես նաև կառավարման մարմինների կազմը և իրավասությունը, նրանց կողմից որոշումների ընդունման կարգը և այլն¹⁶: Ըստ էության, կանոնադրությունում արտահայտվում են այն սկզբունքային լուծումները, որոնք առաջարկվում են կառավարման բարձրագույն մարմնի՝ ժողովի և դրան հաջորդող մարմնի՝ խորհրդի կողմից: Տրամաբանական է, որ թե՛ ռազմավարության հիմնավորվածությունը, թե՛ կազմակերպական կառուցվածքի արդյունավետությունը պայմանավորված են դրանք մշակողների և ընդունողների գիտագործնական մակարդակով:

Պետական ոչ առևտրային կազմակերպության մասին գործող ՀՀ օրենքով դրա կառավարման մարմինների գործառույթներ են իրականացնում հիմնադիրը, նրա լիազորած պետական մարմինը, գործադիր մարմինը, ինչպես նաև հիմնադրի որոշմամբ կոլեգիալ կառավարման մարմինը՝ խորհուրդը¹⁷: Ըստ այդ օրենքի՝ հիմնադրի բացառիկ լիազորություններից են ՊՈԱԿ-ի գործունեության առարկայի և նպատակների սահմանումը, կանոնադրության հաստա-

¹⁶ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք 2015, 28, 52:

¹⁷ Հայաստանի Հանրապետության օրենքը Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին, <https://www.arlis.am>, հոդված 12:

տումը, կառավարման կազմակերպական համակարգի որոշումը: Հիմնադիրը գործադիր մարմնի նշանակման լիազորությունը կարող է վերապահել կոլեգիալ կառավարման մարմնին¹⁸: Ի դեպ, խորհուրդը լիազորվում է՝ հիմնադրի կողմից սահմանված կազմակերպության գործունեության առարկայի և խնդիրների շրջանակներում ներկայացնելու առաջարկություններ լիազորված պետական կառավարման մարմնին կազմակերպության գործունեության հիմնական ուղղությունների վերաբերյալ¹⁹: Նույն հոդվածով կոլեգիալ կառավարման մարմինը նաև լիազորվում է իրականացնելու ընթացիկ վերահսկողություն կազմակերպության գործադիր մարմնի գործունեության նկատմամբ, հաստատելու կազմակերպության գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերը, ստորաբաժանումների կանոնակարգերը, ներքին կարգապահական կանոնները և այլն: Ըստ հոդված 17-ի՝ գործադիր մարմնի լիազորություններից է ՊՈԱԿ-ի կառուցվածքի և կառուցվածքային ստորաբաժանումների սահմանումը²⁰: Այսպիսով, ՊՈԱԿ-ների առումով ռազմավարության և կառավարման կազմակերպական կառուցվածքի խնդիրների լուծմանը մասնակցում են հիմնադիրը, կազմակերպության կառավարման կոլեգիալ և գործադիր մարմինները:

¹⁸ Հայաստանի Հանրապետության օրենքը Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին, <https://www.arlis.am>, հոդված 13:

¹⁹ Հայաստանի Հանրապետության օրենքը Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին, <https://www.arlis.am>, հոդված 19:

²⁰ Հայաստանի Հանրապետության օրենքը Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին, <https://www.arlis.am>, հոդված 17:

Գործարար կազմակերպություններում, որոնք գերազանցապես մասնավոր են և շահույթ հետապնդող, ռազմավարության նպատակասլացությունը և կազմակերպական կառուցվածքի արդյունավետությունը կարող են գնահատվել կազմակերպության շուկայում մրցունակության ու շահութաբերության շարժընթացի ցուցանիշներով: Պետական ոչ առևտրային կազմակերպություններում ռազմավարության ու կառուցվածքի փոխառնչությունների և որակի գնահատումը կարող է կատարվել կազմակերպության ստացած արդյունքներով, նաև փորձագիտական դիտարկումներով:

Մեր ուսումնասիրություններով ներկայումս հանրապետությունում գործող կազմակերպությունների գործունեության ընթացքում ըստ պատշաճի չի կարևորվում ռազմավարության մշակման ու իրագործման անհրաժեշտությունը, իսկ տիրապետող է կազմակերպական կառուցվածքի գծային-ֆունկցիոնալ բյուրոկրատական կամ դասական մոդելը, անհամեմատ քիչ են ճկուն նախագծային (մատրիցային) տարբերակները:

Նման իրավիճակը պայմանավորված է հանրապետության տնտեսության կառուցվածքով: Ներկայումս տիրապետող են ծառայությունների ոլորտի և մշակող արդյունաբերության մեջ սննդի արտադրության ճյուղերը, իսկ գիտարար, տեխնոլոգիական գերհագեցվածությամբ արտադրությունների տեսակարար կշիռը ՀՆԱ-ում էականորեն ցածր է²¹, մինչդեռ հենց դրանք են հարափոփոխ բնա-


²¹ *Սուվարյան Յու. Մ.*, 2019, էջ 91-101:

գավառները, որոնցում լայնորեն կիրառվում են ճկուն կազմակերպական կառուցվածքները:

Իբրև տիպական մոդել ներկայացնենք բաժնետիրական ընկերության կառավարման կազմակերպական կառուցվածքը (գծապատկեր 2.):

Գծապատկեր 2.

Բաժնետիրական ընկերության կառավարման
կազմակերպական մոդելային կառուցվածքը



4. Հանրային կառավարման կազմակերպական կառուցվածքի մոդելը*

Հանրային տնտեսությունը ներառում է երկրի ողջ տնտեսական համակարգը, ներառյալ պետական, տեղական ինքնակառավարման և մասնավոր կազմակերպությունների գործունեությունը: Այն կառավարվում է հանրային մարմինների մշակած և իրագործած քաղաքականության արդյունքում, որը վերաբերում է գիտատեխնիկական, կրթական, տնտեսական, արտաքին առևտրի, հարկաբյուջետային, մաքսային կարգավորումներին ու միջոցառումներին: Այդ ամենն արտացոլվում է երկրի զարգացման ռազմավարական ծրագրում, որը սովորաբար ընտրական գործընթացի արդյունքում ձևավորված յուրաքանչյուր իշխանություն ներկայացնում է պառլամենտին և գործում հաստատված ռազմավարությամբ: Վերջինս էլ հիմք է հանրային տնտեսության կառավարման կազմակերպական կառուցվածքի կազմավորման համար: Սակայն, ի տարբերություն կազմակերպությունների, որտեղ կարող է գործել ճկուն կառուցվածք, այս խնդրում կա էական սահմանափակում: Բանն այն է, որ բազմաթիվ երկրների հիմնական օրենքներում, ՀՀ սահմանադրության մեջ նույնպես, կա հոդված (147.2), որում ամրագրված է. «Նախարարությունների ցանկը և կառավարության գործունեության կարգը կառավարության ներկայացմամբ սահմանվում են օրենքով: Փոխվարչապետ-

* Այս խնդրին հեղինակի առաջին անդրադարձը տե՛ս *Սուվարյան Յու. Մ.*, էջ 122-131:

ների թիվը չի կարող գերազանցել երեքը, իսկ նախարարներին՝ 18-ը»։ Նման կարգավորման նպատակը հանրային կառավարման համակարգում քաղաքական փոփոխությունների ազդեցությունը մեղմելն է, քանի որ այն, նախ՝ պետական և համայնքային ծառայություններ մատուցող բարձր որակավորման մասնագետների համախումբ է, որոնք օգտվում են որոշակի իրավունքներից, և, բացի այդ, ցանկալի չէ կառավարման համակարգը հաճախ ենթարկել արմատական ցնցումների։ Ուստի հանրային կառավարման ամբողջական համակարգը, նաև դրա ֆինանսատնտեսական հատվածը, հարկ է կառուցել՝ հիմք ընդունելով պետական կառավարման գլխավոր առաքելությունը, որի էությունն առկա մարդկային, բնատնտեսական ռեսուրսների արդյունավետ օգտագործմամբ երկրի բնակչության անհրաժեշտ կենսամակարդակի և անվտանգության ապահովումն է։ Նշված առաքելության կայուն բնույթը հարաբերական կայունություն է հաղորդում նաև կառավարման կազմակերպմանը, այսինքն՝ լիազորությունների ծավալին և դրանց պատվիրակման կառուցվածքին, ինչը, սակայն, չի նշանակում, որ նույն լիազորությունների սահմաններում չեն կարող նույնական մնալ լուծման ենթակա խնդիրները, ավելին՝ պարտադիր է, որ դրանք ժամանակի ընթացքում լինեն հարափոփոխ, համընթաց գիտատեխնիկական և շուկայական սրընթաց փոփոխությունների։ Վերը նշված առաքելության կենսագործման համար պետությունն իրականացնում է հետևյալ հանրահայտ հիմնական գործառույթները.

- հասարակական և տնտեսական կյանքի համար անհրաժեշտ օրենսդրական դաշտի ստեղծում,

- քաղաքական իրադրության կայունության և մակրոտնտեսական արդյունավետ հավասարակշռվածության ապահովում,
- սոցիալական ապահովության և ենթակառուցվածքային ոլորտներում ներդրումների իրագործում,
- հասարակության անաշխատունակ և բարձր տարիքի անդամների սոցիալական պաշտպանություն,
- շրջակա միջավայրի պաշտպանություն:

Թվարկված գործառույթների իրագործման նպատակով ստեղծվում են օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմիններ, որոնց լիազորություններն ամրագրվում են երկրի սահմանադրությամբ և ոլորտային օրենքներով:

Գործադիր իշխանության կազմում պարտադիր ստեղծվում են անվտանգային և արտաքին գործերի հիմնախնդիրներով զբաղվող կառույցներ, որոնց կազմը հիմնականում կայուն է և գրեթե անփոփոխ: Սովորաբար հարափոփոխ են տնտեսության և սոցիալական ոլորտի պատասխանատու մարմինները, թեև այստեղ էլ կան պատմականորեն ձևավորված և ռազմավարական նշանակության հարաբերական կայուն, նույնիսկ խիստ անհրաժեշտ բնագավառներ: Հայտնի է, որ աշխատանքի առաջին հասարակական բաժանման արդյունքում տարանջատվել են խաշնարածությունը և հողագործությունը, իսկ այնուհետև վերջինից՝ արհեստագործությունը: Այսպիսով, գյուղատնտեսությունը և արհեստագործության զարգացման ու ծավալման արդյունքում պատմականորեն ստեղծված արդյունաբերությունը սննդի և արտադրության գործիքների, անվտանգային նշանակության արտադրանքի թողարկման կարևորագույն

ճյուղերն են: Շինարարությունը կոչված է ստեղծելու բնակչության համար կենսամիջավայր, արտադրական ու սոցիալական ենթակառուցվածքներ: Հաշվի առնելով գիտակրթական համակարգի չափազանց էական կարևորությունը երկրի տնտեսության, մշակույթի զարգացման և անվտանգային միջավայրի ապահովման գործում՝ գտնում ենք, որ անհրաժեշտ է ունենալ առանձին կրթության կառավարման և գիտության ու տեխնոլոգիաների ղեկավարման մարմիններ²²: Հեռահաղորդակցության ու տրանսպորտի անհրաժեշտությունը և կարևորությունը համընդհանրացման ժամանակաշրջանում կասկած չեն հարուցում: Նույնը վերաբերում է առողջապահությանը, մշակույթին, շրջակա միջավայրի պահպանությանը: Ընդհանուր առմամբ, եթե կազմակերպությունների կազմակերպական կառուցվածքի ստեղծման կարևոր տարրերից է աշխատանքի մասնագիտական բաժանումը, ապա հանրային կառավարման առումով էական է աշխատանքի հասարակական բաժանման առաջին մակարդակը (ըստ խոշոր ճյուղերի և ոլորտների): Աշխատանքի ճյուղային և ոլորտային բաժանման առաջին մակարդակը պետք է արտացոլվի հանրային կառավարման կազմակերպական կառուցվածքում*, քանի որ պատմականորեն ձևավորված որոշակի ճյուղեր կամ ոլորտներ ունեն հստակ և անանց առաքելություն, իսկ

²² Հիմնավորումը տե՛ս *Մուլայթյան Յու. Մ.* 2020, էջ 100-121:

* Մենեջմենթի տեսությունը գործնական կառավարման անհրաժեշտությունը բացատրում է աշխատանքի հորիզոնական բաժանմանը հաջորդող ուղղահայաց բաժանմամբ, ուստի տրամաբանական է, որ կառավարման կազմակերպական կառուցվածքները չանջրպետվեն դրանցից:

անվերջ շարունակվող ներուլորտային բաժանումներն արտահայտում են բնագավառի զարգացման ուղղություններն ու գերակայությունները և ներառվում են ճյուղային ռազմավարություններ և կազմակերպական կառուցվածքներ:


Հանրային կառավարման առանձին օբյեկտներ են ֆունկցիոնալ՝ տնտեսական, սոցիալական, ֆինանսական, ինչպես նաև տարածքային ոլորտները, որոնք նույնպես պետք է ներառվեն կառավարման կազմակերպական կառուցվածք:

Նշված ճյուղերը և ոլորտներն այն նվազագույնն են, որոնք անհրաժեշտաբար պետք է հանդիսանան հանրային կառավարչական ներգործության օբյեկտ: Հարկ է նաև նշել, որ ժամանակակից նախարարությունները ոչ միայն համակարգում են ոլորտի արտադրական (ծառայությունների մատուցման) գործընթացները, այլև մշակում են բնագավառի ընդհանուր ռազմավարությունը, տեղադրում և ապահովում են պետական պատվերների կատարումը, անհրաժեշտության դեպքում գործարար կառույցներին տրամադրում են լիցենզիաներ՝ այդպիսով ապահովելով ճյուղին վերաբերող քաղաքականության իրագործումը:

Ըստ այդմ, հանրային կառավարման համակարգը կարող է բնութագրվել հետևյալ կառուցվածքով (գծապատկեր 3.):

Գծապատկեր 3.

Հանրային կառավարման մարմինները



Բերված գծապատկերում արտահայտվել են կառավարման սահմանադրական ու պետության առաքելության իրագործման համար անհրաժեշտ մարմինները, որոնց գործունեությունը հարաբերականորեն կայուն է և անհրաժեշտ:

ՀՀ անկախության տարիներին միջազգային փորձին համահունչ հաջողությամբ կազմավորվել և կայացել են օրենսդիր, գործադիր և դատական իշխանության, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները: Այնուհետև բոլոր մակարդակներում ու օղակներում տեղի են ունեցել և այսօր էլ շարունակվում են բարեփոխումները՝ ավելի բարձր արդյունավետության հասնելու համար: Սակայն ավելի հաճախ փոփոխվել են նախարարությունների կազմը և անվանումները, անգամ այն դեպքում, երբ 2005 թ. ընդունված սահմանադրությամբ կառավարության կառուցվածքը սահմանվում է օրենքով: Ենթադրվում էր, որ անհրաժեշտ է գտնել կառավարության օպտիմալ (լավագույն) կառուցվածք, որն առավելագույնս համապատասխանի պետական կառավարման առաքելությանն ու երկարաժամկետ ռազմավարությանը, իսկ կառավարման ճկունությունն ապահովել լիազորությունների պատվիրակման և խնդիրների սահմանման միջոցով: Այս իմաստով վերևում առաջարկված տարբերակը համապատասխանում է այդ պահանջներին և կարող է ունենալ հեռանկարային կիրառություն, քանի որ, ինչպես արդեն նշվել է, դրա հիմքում ընկած են երկու կարևոր նախադրյալներ՝ պետության երկարաժամկետ ռազմավարության առանցքը՝ նրա առաքելությունը, և աշխատանքի հասարակական բաժանման պատմականորեն ձևավորված առաջին մակար-

դակը: Զուտ որպես պատմատրամաբանական վերլուծության արդյունք՝ վերևում նշված եզրահանգումը գնահատվել է հետխորհրդային որոշ ունիտար երկրների (Լատվիա, Լիտվա, Էստոնիա, Վրաստան, Ղազախստան), արևելաեվրոպական (Լեհաստան, Չեխիա) և ֆեդերալ խոշոր պետությունների (Գերմանիա, Ռուսաստան) կառավարությունների կազմակերպական կառուցվածքի փորձով²³:

Տնտեսական բլոկի ֆունկցիոնալ նախարարություններ (ֆինանսների, էկոնոմիկայի) ստեղծված են բոլոր երկրներում:

Սոցիալական ոլորտը կառավարելու նպատակով հետազոտված բոլոր երկրներում գործում են աշխատանքի և սոցիալական ապահովության, առողջապահության, մշակույթի, սպորտի, կրթության, գիտության նախարարություններ:

Բազմաբնույթ են տնտեսության տարբեր ոլորտների, հատկապես իրական արտադրության և ծառայությունների կառավարման կառույցները: Ուսումնասիրված բոլոր երկրներում գործում են գյուղատնտեսության նախարարություններ:

Արդյունաբերության կառավարման համապետական մարմին գործում է ոչ բոլոր երկրներում: Այնտեղ, որտեղ չկա արդյունաբերական գերատեսչություն, ենթադրվում է, որ ոլորտի զարգացման քաղաքականությունը մշակվում և իրագործվում է էկոնոմիկայի նախարարությունում: Մինչդեռ արդյունաբերությունն ունի վիթխարի նշանակություն երկրի քաղաքակրթական և ռազմավարական զարգացման

²³ *Մուվարյան Յու. Մ.*, 2020, էջ 128-130:

գործում, ինչպես նաև ողջ տնտեսության համար ինտեգրող և լոկոմոտիվի դերակատարություն: Ճյուղի կառավարման գործառույթը հնարավոր է արդյունավետ իրագործել մասնագիտական որակների առկայության, զարգացման հեռանկարների և շուկայական առանձնահատկությունների խոր իմացության պայմաններում:

Տրանսպորտի և կապի կառավարման համատեղ մարմիններ ստեղծվել են հետազոտված բոլոր երկրներում՝ ներառելով հեռահաղորդակցության և թվայնացման արդի հնարավորությունները:

Ի դեպ, մի ուշագրավ միտում է նկատվում հետազոտված որոշ երկրներում՝ նախարարությունների թիվը կրճատելու ձգտում: Այն Վրաստանում և Էստոնիայում 11 է, Լատվիայում՝ 9, Չեխիայում, Լիտվայում և Գերմանիայում՝ 14, Լեհաստանում և Ղազախստանում՝ 17, իսկ ՌԴ-ում՝ 21: Կառավարության կազմի օպտիմալացման խնդիրը, մեր համոզմամբ, ունի առնվազն երկու սահմանափակում՝ պետական ապարատի պահպանման ծախսերի կրճատման անհրաժեշտությունը և պետական գործառույթների լիարժեք ու արդյունավետ իրականացման կարևորությունը, ընդ որում վերջինը գերակա է նախորդի նկատմամբ: Ուստի նախարարությունների թվի կրճատումը, որի նվազագույնի չափանիշներին արդեն անդրադարձ կատարվել է, չպետք է վնասի հանրային կառավարման արդյունավետությանը, միաժամանակ, մեղմ ասած, օգտակար չէ նաև պետական ապարատի հանիրավի ուռճացումը: Այսպիսով, հիմնախնդրի պատմատրամաբանական վերլուծությունը լրացնելով տարբեր երկրների փորձի համադրությամբ՝ կարելի է ընդհանրացնել, որ տնտեսության հանրային կառավարման

առաջարկված տարբերակը, ի լրումն ռազմավարական պահանջների բավարարման, նաև համապատասխանում է վերևում նշված սահմանափակումներին, մոտ է օպտիմալին և ունի կիրառական նշանակություն:

Եզրակացություններ

Ռազմավարությունը՝ իբրև կազմակերպության գործունեության հեռանկարային տեսլական, իսկ կազմակերպական կառուցվածքը՝ որպես դրա իրագործման ապահովման միջավայր, փոխառնչվում են բովանդակային և իրավական-կառավարչական առումներով: Բովանդակային տեսակետից, անկախ կառավարման մակարդակից, կազմակերպական կառուցվածքն ածանցյալ է ընտրված ռազմավարությունից, պետք է բխի դրանից, համապատասխանի առաջադրված նպատակների և խնդիրների պարտադիր լուծմանը: Իրավական-կառավարչական առումով ռազմավարության և կազմակերպական կառուցվածքի փոխառնչությունները համակարգվում են գործող օրենսդրության՝ երկրի սահմանադրության, քաղաքացիական օրենսգրքի և կազմակերպության կանոնադրության կարգավորումներով:

Ռազմավարության նպատակասլացությունը և կազմակերպական կառուցվածքի արդյունավետությունը կարող են գնահատվել կազմակերպության շուկայում մրցունակության և շահութաբերության շարժընթացի ցուցանիշներով, ստացված նպատակային արդյունքներով, ինչպես նաև փորձագիտական դիտարկումներով: Ուսումնասիրություններից պարզվում է, որ ներկայումս հանրապետությունում գործող կազմակերպություններում ըստ պատշաճի չեն

կարևորվում գիտականորեն հիմնավոր ռազմավարության մշակումն ու իրագործումը, իսկ տիրապետող է կազմակերպական կառուցվածքի գծային-ֆունկցիոնալ մոդելը, քիչ են ճկուն նախագծային (մատրիցային) տարբերակները:

Մակրոմակարդակում զարգացման ռազմավարության առանցքը պետական կառավարման գլխավոր առաքելությունն է՝ առկա մարդկային, բնատնտեսական ռեսուրսների արդյունավետ օգտագործմամբ երկրի բնակչության անհրաժեշտ կենսամակարդակի և անվտանգության ապահովումը: Հանրային կառավարման կազմակերպական կառուցվածքն օբյեկտիվորեն և անհրաժեշտաբար հիմնվում է երկու կարևոր նախադրյալների՝ պետության երկարաժամկետ ռազմավարության առանցք հանդիսացող նրա առաքելության և աշխատանքի հասարակական բաժանման պատմականորեն ձևավորված առաջին մակարդակի վրա:

Գրականություն

1. Мескон М., Альберт М., Хедоури Ф., Основы менеджмента. М., “Дело”, 2000, 704 стр.
2. Дафт Р.Л., Менеджмент. СПб, “Питер”, 2006, 864 стр.
3. Файоль А., Учение об управлении. В сб. Научная организация труда и управления. М., “Экономика”, 1965, 432 стр.
4. Кунц Г., О’Доннел С., Управление: системный и ситуационный анализ управленческих функций, т.1. М., Прогресс, 1981, 496 стр., т. 2, 512 стр.
5. Минцберг Г., Альстрэнд Б., Лэмпел Д., Школы стратегий, СПб. “Питер”, 2000, 336 стр.

6. Մենեջմենթ, Յու. Մ. Սուվարյանի ընդ. խմբ., Ե., «Տնտեսագետ», 2016, 672 էջ:
7. Սուվարյան Յու. Մ., Կառավարման տեսության արդի հիմնախնդիրներ, Ե., «Գիտություն», 2020, 162 էջ:
8. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք, Ե., «Պաշտոնական տեղեկագիր», 2015, 491 էջ:
9. ՀՀ օրենքը բաժնետիրական ընկերությունների մասին, Ե., «Պաշտոնական տեղեկագիր», 2009, 83 էջ:
10. ՀՀ օրենքը սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին, Ե., «Պաշտոնական տեղեկագիր», 2008, 31 էջ:
11. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (փոփոխություններով), Ե., «Պաշտոնական տեղեկագիր», 2019, 96 էջ:
12. Հայաստանի Հանրապետության օրենքը Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին, <https://www.arlis.am>, 10 էջ:
13. Սուվարյան Յու. Մ., Տնտեսական զարգացման որակական բնութագրիչները և գերակայությունները, «Լրաբեր հասարակական գիտությունների», թ. 2, 2019, 20 էջ:

2.3. ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ*

Ներածություն

Ի սկզբանե պետության ստեղծման կարևոր խնդիրներից էր կազմավորել լեգիտիմ ուժային կառույցներ, որոնց նպատակը երկրում անվտանգ միջավայրի պահպանումն է, ինչի շնորհիվ կարող են զարգացնել տնտեսությունը, մշակույթը, գիտությունը, բնակչության համար ապահովել նորմալ կենսապայմաններ, իսկ պետության համար՝ կայացման և ամրապնդման իրական հնարավորություններ: Աշխարհի յուրաքանչյուր երկրի առումով անվտանգության սպառնալիքների աղբյուր են հարևանների տարածքային նկրտումները, տարբեր պատճառներով սահմանների խախտումները, հետախուզական-դիվերսիոն ռիսկերը, բնակչության տարբեր խավերի և անհատների միջև բախումները սեփականության ու այլ շահերի համար: Նշված անվտանգային ռիսկերը կանխարգելելու և բնակչության համար խաղաղ միջավայրի ապահովման նպատակով ստեղծվում են երկրի զինված ուժերը, անվտանգության ծառայությունները, ոստիկանությունը: Թվարկված կառույցները մշտապես կազմել են սկզբում պետական, իսկ այնուհետև հանրային կառավարման համակարգի կարևորագույն բաղադրիչները, իսկ դրանց գործունակության արդ-

* Առաջին անգամ հրապարակվել է «Հայկական բանակ» հանդեսում (2021 թ., թ. 2):

յունավետությունը պայմանավորել է պետության անվտանգության և հզորության մակարդակը:

Երկրի զինված ուժերի առաքելությունը գերազանցապես երկրի տարածքային ամբողջականության, սահմանների անձեռնմխելիության ապահովումն է: ՀՀ Սահմանադրության (2015) հոդված 14.1-ում ամրագրված է. «Հայաստանի Հանրապետության զինված ուժերն ապահովում են Հայաստանի Հանրապետության պաշտպանությունը, անվտանգությունը, տարածքային ամբողջականությունը և սահմանների անձեռնմխելիությունը»¹: Նման բովանդակությամբ ձևակերպումներ հանդիպում են շատ այլ երկրների հիմնական և զինված ուժերի մասին օրենքներում նույնպես: Սակայն զինված ուժերի գործունեության նպատակասլացությունը և արդյունավետությունը պայմանավորվում են բազմաթիվ գործոններով, որոնց թվում առանցքային են դրանց կառավարման կառուցակարգը և տեղը հանրային կառավարման համակարգում: Միաժամանակ չափազանց կարևոր է երկրում իրականացվող տնտեսական, գիտատեխնիկական, կրթական քաղաքականությունը, որը վիթխարի նշանակություն ունի զինված ուժերի նյութատեխնիկական և կադրային ապահովման գործում: Նրանց մարտունակության բարձրացման համար առանձնահատուկ նշանակություն ունի տնտեսություն-գիտություն կապը: Ստորև պատմատրամաբանական և համեմատական վերլուծությամբ բանակի կառավարման սահմանադրական, տնտեսական, գիտակրթական բարեփոխումների գերակայությունները բնութագրելու փորձ է արվել:

¹ Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (փոփոխություններով), Ե., «Պաշտոնական տեղեկագիր», 2019, էջ 16:

Զինված ուժերի կառավարումը պատմական Հայաստանում

Հայկական պետականությունը, ինչպես հայտնի է, սկիզբ է առնում Ուրարտուից կամ Վանի թագավորությունից (մ.թ.ա. IX-VI դարեր), որին հաջորդել է Երվանդունիների թագավորությունը (մ.թ.ա. VI-II դարեր): Զինված ուժերի կառավարման խնդիրը կոլիտարկվի նրանց հաջորդող Մեծ Հայքի, Բագրատունիների հայոց և Կիլիկյան Հայաստանի թագավորությունների օրինակով:

Նշված երեք հայկական պետականությունների ժամանակաշրջանում կարևորագույն դերակատարություն էր վերապահված զինված ուժերին: Բանակի առաքելությունը, ինչպես բոլոր պետություններում, երկրի տարածքային ամբողջականության, սահմանների անձեռնմխելիության պաշտպանությունն էր: Մեծ Հայքի թագավորությունում (մ.թ.ա. 189 թ. -մ.թ. 428 թ.), ինչպես վկայում են պատմական աղբյուրները, հատկապես «Զորանամակը», բանակի ընդհանուր թվաքանակը շուրջ 120 հազար էր և բաղկացած էր արքունական ու նախարարական զորագնդերից: Առաջինը, ներառյալ Մաղխազին և Հայր Մարդպետին ենթարկվող հատուկ զինյալ զորախմբերը (10+15 հազար մարդ), եղել են 65 հազար, նախարարական զորագնդերի թվաքանակը՝ 84 հազար մարդ²: Երկրի ռազմական գործերը վարում էր

² Տե՛ս Հայոց պատմություն, հ. 2, գիրք 1 (IV դարի սկիզբ – IX դարի կես), Ե., «Զանգակ», 2018, էջ 401:

սպարապետը, իսկ զորքերի գերագույն հրամանատարը թագավորն էր³:

Բագրատունյաց Հայաստանում կամ Բագրատունիների թագավորությունում (862-1045 թթ.) սպարապետը պետության կարևորագույն պաշտոններից մեկն էր: Նա գլխավորում էր արքունական և իշխանների (մարզպետական) զորքերը: Պետության կազմի մեջ մտնող առանձին թագավորությունները նույնպես ունեին իրենց սպարապետները⁴: Ջորքի ընդհանուր թիվը Գագիկ Ա-ի օրոք հասնում էր 100 հազարի, որից մարզպետական՝ 45 հազար մարդ, մնացածը՝ արքունական զորախմբի մարտիկներն էին⁵:

Կիլիկյան Հայաստանում մեծ իշխանապետության՝ 1080-1198 թթ. (թագավորության՝ 1198-1375 թթ.) բանակը նույնպես բաղկացած էր արքունական և իշխանական (նախարարական) զորագնդերից: Այստեղ ստեղծվում էին զինված ուժեր նաև եկեղեցու հովանու ներքո, իսկ ծովափնյա սահմանների պաշտպանության համար՝ նավատորմ⁶: Ի դեպ, պատերազմական իրավիճակում կանոնավոր բանակի հետ միասին ճակատամարտերին բոլոր պետականությունների օրոք մասնակցել է նաև գյուղացիներից ու քաղաքաբնակներից կազմված աշխարհագորք:

Մեծ Հայքի և Բագրատունյաց Հայաստանի նման Կիլիկյան Հայաստանում ևս զինված ուժերի գերագույն հրա-

³ Տե՛ս նույն տեղում, էջ 398:

⁴ Տե՛ս Հայոց պատմություն, հ. 2, գիրք 2 (IX դարի կես -XVII դարի առաջին կես), Ե., «Զանգակ», 2014, էջ 66-68:

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 70:


⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 416-417:

մանատարը թագավորն էր, իսկ գլխավորը՝ գունդստաբլը (սպարապետը)⁷ :

Այսպիսով, պատմական Հայաստանում զինված ուժերի կառավարման համակարգը կարող է ներկայացվել հետևյալ գծապատկերով (գծապատկեր 1.):

Գծապատկեր 1.

Զինված ուժերի կառավարման համակարգը պատմական
Հայաստանում



Հայկական պետականության տարբեր փուլերում ընդհանուր դրական առանձնահատկությունն այն է, որ պահպանվել է զինված ուժերի կազմակերպման գլխավոր սկզբունքը՝ ըստ մակարդակների ուղիղ ենթակայությունը, իսկ պետության մակարդակում՝ թագավոր-սպարապետ-նախարարներ (բդեշխներ, իշխաններ) հրամանների անմի-

⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 415:

ջական շղթան թե՛ խաղաղ, թե՛ պատերազմական տարիներին: Բանակը մարտունակ կարող է դառնալ խաղաղ տարիներին, և այդ առումով այն մշտապես պետք է լինի պետության գլխավորի ուշադրության կենտրոնում, իսկ սպարապետը շարունակ զբաղվի զինված ուժերի կատարելագործման, զինամթերքի արդիականացման չափազանց կարևոր գործով: Այս առումով ուշագրավ է Մ. Խորենացու գնահատականը բանակի վերազինման առումով Տիգրան Մեծի գործելակերպին, ինչը հաջողություններ էր բերել նրա ղեկավարությամբ գործող հայոց բանակին. «Հետևակ կռվողները ձիավոր դարձան, պարսերով կռվողները հաջող աղեղնավորներ, կռպալներով կռվողները զինվեցին սրերով ու տեգավոր նիզակներով, մերկերը (զինվորներ, որոնք զրահներ կամ վահաններ չէին կրում) պատսպարվեցին վահաններով և երկաթե զգեստներով: Եվ երբ նրանք մի տեղ հավաքվեին, միայն նրանց արտաքին տեսքն ու նրանց պահպանակների ու զենքերի փայլմունքը բավական էին թշնամիներին հալածելու և վանելու»⁸:

Խիստ էական է նաև բանակի մարտունակության բարձրացման գործում տնտեսության և գիտակրթական համակարգի անընդհատ առաջընթացը, որին դեռ կանդրադառնանք:

⁸ Խորենացի Մ., Հայոց պատմություն, Ե., «Հայաստան», 1990, էջ 46:


Զինված ուժերի կառավարման սահմանադրական կարգը

Զինված ուժերի ամբողջությունը բարդ և խոշոր կառույց է, իրեն բնորոշ առանձնահատկություններով և կառավարման որոշակի աստիճանակարգով ու սկզբունքներով, սույն հետազոտության մեջ մեր խնդիրը հանրային կառավարման համակարգում բանակի ղեկավարման սահմանադրական կառուցակարգի դիտարկումն է: Զինված ուժերին բնորոշ ենթակայական խիստ աստիճանակարգը և տարբեր մակարդակների հրամանատարների անձնական պատասխանատվության սկզբունքները ցանկալի, նույնիսկ անհրաժեշտ է, որ արտացոլվեն նաև երկրի հիմնական օրենքում: Այս պահանջը հստակ իրագործվել է շատ երկրների, հատկապես հետխորհրդային, բանակի ավանդույթ ունեցող, հիմնական օրենքներում: Օրինակ, Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության 87-րդ հոդվածն ամրագրում է, որ ՌԴ նախագահը երկրի զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարն է, որը, ըստ 83-րդ հոդվածի, հաստատում է ՌԴ ռազմական դոկտրինան, նշանակում և ազատում ՌԴ զինված ուժերի հրամանատարությունը⁹:

ՌԴ-ում ըստ էության գործում է զինված ուժերի կառավարման հետևյալ համակարգը (գծապատկեր 2.):

⁹ См. и Конституция Российской Федерации, М., изд.-во ОМЕГА -Л, 2006, էջ 22-23:

Գծապատկեր 2.

ՌԴ ԶՈՒ կառավարման համակարգը¹⁰

Նմանատիպ համակարգ կիրառվում է նաև Ուկրաինայի և Բելառուսի հանրապետություններում¹¹:

¹⁰ <https://structure.mil.ru/structure/structuremorf.htm>

¹¹ Տե՛ս Закон республики Беларусь о вооруженных силах РБ, статья 9, <https://pravo.by/document/?guid=3871&p0=V19201904>, Закон о вооруженных силах Украины, https://kodeksy.com.ua/ka/o_vooruzhennyh_silakh_ukrainy.htm

2005 թ. ընդունված ՀՀ Սահմանադրությամբ նկարագրված նմանատիպ համակարգն ամրագրված էր իբրև Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կառավարման կառուցակարգ: Հայաստանի Հանրապետության նախագահը ՀՀ զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարն էր, նշանակում էր հրամանատարական կազմը, շնորհում զինվորական կոչումներ (հոդվածներ 55.12, 55.16)¹²:

Խորհրդարանական համակարգի արմատավորումից հետո փոխվեցին բանակի կառավարման սկզբունքները: Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ (2015թ.) պաշտպանության ոլորտի քաղաքականության հիմնական ուղղությունները սահմանում է Անվտանգության խորհուրդը (հոդված 155.2): Իսկ զինված ուժերը կառավարության ենթակայության ներքո են (հոդված 155.1): Զինված ուժերի զինվորական ամենաբարձր պաշտոնատար անձը գլխավոր շտաբի պետն է, որը ոչ պատերազմական ժամանակ ենթակա է պաշտպանության նախարարին (հոդված 155.3): Պատերազմի ժամանակ զինված ուժերի գերագույն հրամանատարը վարչապետն է (հոդված 155.4)¹³:

«Պաշտպանության մասին» ՀՀ օրենքով (հոդված 16.2) զինված ուժերի ղեկավարումն իրականացնում է ՀՀ պաշտպանության նախարարը, բայց նույն հոդվածի 3-րդ կետով «զինված ուժերի անմիջական հրամանատարը զինված ուժերի գլխավոր շտաբի պետն է»: Այսպիսի ձևակերպում-

¹² Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (փոփոխություններով), Ե., «Պաշտոնական տեղեկագիր», 2005, էջ 44-46:

¹³ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (փոփոխություններով), Ե., «Պաշտոնական տեղեկագիր», 2019, էջ 62-63:

ներով հստակ չէ, թե ով է պատասխանատվություն կրում բանակի մարտունակության վիճակի և մյուս խնդիրների պատշաճ իրագործման համար: Թեև, ըստ հոդված 17-ի, գլխավոր շտաբը պաշտպանության նախարարության ենթակա մարմին է, սակայն այդ պարագայում գլխավոր շտաբի պետը պետք է գտնվեր նախարարի ենթակայության ներքո, մինչդեռ նույն այդ օրենքով այդպես չէ, և շտաբը գործում է որպես ինքնուրույն կառույց:

Զինված ուժերին առնչվող լիազորություններ ունի նաև ՀՀ նախագահը: Նա վարչապետի առաջարկությամբ օրենքով սահմանված դեպքերում և կարգով նշանակում և ազատում է զինված ուժերի և այլ զորքերի բարձրագույն հրամանատարությանը, շնորհում է բարձրագույն զինվորական կոչումներ (հոդված 133)¹⁴ :

Միաժամանակ ՀՀ Սահմանադրության 152-րդ հոդվածի 3-րդ կետով ամրագրվում է. «Յուրաքանչյուր նախարար ինքնուրույն ղեկավարում է նախարարությանը վերապահված գործունեության ոլորտը»¹⁵ :

Զինված ուժերի կառավարման ներկայացված սահմանադրական դրույթների բազմությունից բխում են հետևյալ եզրակացությունները.

1. ՀՀ Սահմանադրության 152.3 հոդվածը պաշտպանության նախարարի առումով չի կարող գործել, քանի որ զինված ուժերի կառավարման լիազորություններն ապակենտրոնացված են, ինչը հանգեցնում է նաև երկրի պաշտպանության պատասխանատվության ինստիտուտի անորոշության (զճապատկեր 3.):

¹⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 56:

¹⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 62:

2. Չի ապահովվում զինված ուժերին բնորոշ ըստ աստիճանակարգության հրամանների և պատասխանատվության շղթան. գլխավոր շտաբի պետը բոլոր իրավիճակներում՝ իբրև գործողությունների ռազմավարական և տակտիկական պլանավորման մարմնի պատասխանատու, ինչը հայտնի է դեռևս Ալեքսանդր Մակեդոնացու ժամանակներից, պետք է ենթարկվի պաշտպանության ոլորտի գլխավոր պատասխանատուին՝ նախարարին, վերջինս էլ՝ գերագույն հրամանատարին:
3. Պաշտպանության գործը սկսվում է խաղաղ ժամանակներից, բանակի մարտունակությունը պետք է ապահովվի այդ ընթացքում, ուստի կառավարման մարմինների, հատկապես գլխավոր, լիազորությունները տարբերակել, ըստ խաղաղ և պատերազմական իրավիճակների, արդյունավետ չէ: «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքում, որն ընդունվել է 2017 թ. նոյեմբերի 15-ին, պարզաբանվում է «պաշտպանություն» եզրի իմաստը. «ՀՀ տարածքային ամբողջականությունը, սահմանների անձեռնմխելիությունը և անվտանգությունը, այդ թվում՝ քաղաքացիների պաշտպանվածությունը, ռազմական սպառնալիքներից ապահովելու նպատակով խաղաղ ժամանակ և ռազմական դրության պայմաններում քաղաքական, ռազմական, տնտեսական, տեղեկատվական, սոցիալական, իրավական և այլ բնույթի միջոցների կիրառման ու միջոցառումների իրականացման


ընդհանրություն»¹⁶: ՀՀ պաշտպանության կազմակերպման վերաբերյալ 5-րդ հոդվածում ներառված են 17 միջոցառումներ, որոնք պետք է իրագործվեն խաղաղ ժամանակներում, որոնց թվում են ռազմական սպառնալիքի կանխատեսումը, գնահատումը, կանխարգելման միջոցառումների պլանավորումը, բարձր մարտունակություն և պատրաստվածություն ունեցող զինված ուժերի, այլ զորքերի, ռազմարդյունաբերական համալիրի զարգացումը, ռազմական գործի, ռազմական գիտության և ուսուցման կազմակերպումը, անհրաժեշտ քանակությամբ զենքի ու ռազմամթերքի, ռազմական տեխնիկայի, պարենի և այլ նյութական պաշարների կուտակումը¹⁷:

¹⁶ Տե՛ս ՀՀ օրենքը «Պաշտպանության մասին», հոդված 3.1, <http://www.irtek.am/views/act.aspx?aid=150214> :

¹⁷ Տե՛ս նույն տեղում, հոդված 5:

Գծապատկեր 3.

ՀՀ զինված ուժերի կառավարման համակարգը՝ ըստ գործող սահմանադրության




Ընդհանրացնելով վերը շարադրվածը՝ նպատակահարմար է վերանայել կամ բարեփոխել երկրի պաշտպանության կառավարման վերաբերյալ օրենսդրական բազան և գործադրել զինված ուժերի ղեկավարման հետևյալ համակարգը (գծապատկեր 4.):

Զինված ուժերը, տնտեսությունը, կրթությունը և գիտությունը

Իրենց գլխավոր առաքելությունն իրագործելու համար զինված ուժերը յուրաքանչյուր երկրում վիթխարի կառույց են և հանդես են գալիս որպես արտադրանքի, տեխնոլոգիաների, գիտական գաղափարների, որակավորված կադրերի խոշոր սպառող:

Գծապատկեր 4.

ՀՀ զինված ուժերի կառավարման համակարգը
(բարձրագույն մակարդակ)



Սակայն բանակը սովորական սպառող չէ, այնպիսի կառույց է, որը պայմանավորում է երկրի անվտանգային միջավայրը, ուստի նա թելադրող կամ պատվիրատու սպառող է, որի պահանջած արտադրանքը, կադրերը, տեխնոլոգիական լուծումները երկրի համար ունեն բախտորոշ նշանակություն:

Պատմական աղբյուրների վկայությամբ հին և միջնադարյան Հայաստանում գիտակցում էին, որ «երկրի տնտեսական առաջընթացը բանակը զինելու, նյութապես ապահովելու ամուր հիմք է ստեղծում», «հայոց զորքի համար զինահանդերձանքի արտադրությունը խթանում է արհեստագործության զարգացումը»¹⁸:

Միաժամանակ ակնհայտ է, որ իբրև պահանջարկ ստեղծող բանակը նաև խթանում է առաջարկը, աշխատատեղերի առաջացումը: Սակայն զինված ուժերի մարտունակության առումով չափազանց կարևորվում են թողարկվող արտադրանքի որակը, կիրառվող տեխնոլոգիաների արդիականությունը, կրթության ու գիտության միջազգային մրցունակության մակարդակը և նպատակասլացությունը: Այս առումով չափազանց կարևորվում է երկրում իրագործվող տնտեսական և գիտակրթական քաղաքականությունը: Սա է նաև մեկն այն պատճառներից, որ անհրաժեշտ է դարձնում պետության ղեկավարի գերագույն զլխավոր հրամանատար լինելը նաև խաղաղ պայմաններում, երբ տնտեսական, հատկապես գիտատեխնիկական նպատակասլաց զարգացմամբ կարող է ապահովվել զինված ուժերի

¹⁸ Տե՛ս «Հայոց պատմություն», հ. 2, գիրք 2, Միջին դարեր (IX դարի կես- XVII դարի առաջին կես), Ե., «Զանգակ», 2014, էջ 71:

բարձր մարտունակությունը: Այս գործում կարևորվում է նաև պաշտպանության նախարար-գլխավոր շտաբի պետ երկյակի ամենօրյա զուգակցված հոգսը՝ ըստ անհրաժեշտության պատվիրելու տնտեսությանը՝ ռազմարդյունաբերական համալիրին, գիտությանը և կրթական հաստատություններին այն ամենը, ինչ անհրաժեշտ է զինված ուժերի կարողությունների աճին: Աշխարհաքաղաքական և մեր տարածաշրջանի ահագնացող մարտահրավերների պայմաններում բանակի մարտունակության բարձրացման գերխնդիրը համազոր է հայ ժողովրդի վաղնջական հողատարածքներում հայոց պետականության պահպանությանը և զարգացմանը: Այդ առումով ստորև հակիրճ կդիտարկենք իրականացվող տնտեսական, գիտատեխնիկական և կրթական քաղաքականության որոշ ցուցանիշներ ու դրանց հրատապ փոփոխության գերակայությունները:

Տնտեսական իրական քաղաքականության արդյունքներն արտացոլվում են երկրի համախառն ներքին արդյունքի և արտահանման կառուցվածքում, որն արտահայտում է թողարկված արտադրանքի տեսականին, դրա տեխնոլոգիական մակարդակը և մրցունակությունը:

Ցավոք, ՀՀ-ում համախառն ներքին արդյունքի ճյուղային կառուցվածքը, ինչը, ի թիվս վերը նշվածի, նաև բովանդակում է իրական տնտեսության և ծառայությունների ոլորտի զարգացման ուղղությունները և հիմնական արդյունքները, ինչպես նաև արտահանման կառուցվածքը նպաստավոր չեն բանակի խնդիրների լուծման առումով: Տնտեսական զարգացման որակի առումով իմ որոշ հրա-

պարակումներում¹⁹ անդրադարձել են տնտեսական քաղաքականության խնդիրներին, այստեղ անհրաժեշտ են համարում կրկնել որոշ դրույթներ:

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տեղեկություններով 2017-2018 թվականներին* ՀՆԱ կառուցվածքում տիրապետող է այն ոչ դրական միտումը, ըստ որի՝ հարաբերաբար ավելի արագ են աճում ոչ թե իրական տնտեսության ու գիտարար արտադրանք թողարկող ճյուղերը, այլ առևտրի, կացության և հանրային սննդի, զվարճությունների ոլորտները: ՀՆԱ-ում մշակող արդյունաբերության տեսակարար կշիռը 11 տոկոս է, գյուղատնտեսությանը՝ 14-15, ծառայություններինը՝ ավելի քան 25 տոկոս: Արդյունաբերության ճյուղային կառուցվածքում հանքագործական և բաց հանքերի շահագործման ոլորտի բաժինը 15,5 տոկոս է, մշակող արդյունաբերությանը՝ 69,8 տոկոս, որում սննդի արտադրության տեսակարար կշիռը գերակշռող է՝ 63,3%, իսկ թեթև արդյունաբերությանը՝ 4, 6, մեքենաշինական արտադրանքինը՝ 2,3, քիմիական և դեղագործական արտադրությունների բաժինը՝ 1,9 տոկոս: Ուստի զուտ գիտատար արտադրանքի տեսակարար կշիռը խիստ և մտահոգիչ ցածր է՝ 4, 2 տոկոս:

¹⁹ Տե՛ս *Մուվարդյան Յու. Մ.*, Տնտեսական զարգացման որակական բնութագրիչները և գերակայությունները, «Լրաբեր հասարակական գիտությունների», Ե., 2019, թ. 2, *Մուվարդյան Յու. Մ.*, Կառավարման տնտեսության արդի հիմնախնդիրներ, Ե., «Գիտություն», 2020, էջ 152-161:

* 2019-2020 թթ. ցուցանիշները չեն դիտարկվում համավարակի (COVID-19) և արցախյան 3-րդ պատերազմի բացասական ազդեցությունների պատճառով:

ՀՆԱ նման կառուցվածքը հանգեցրել է նաև աշխատատեղերի, այն է՝ կադրային ներուժի նմանօրինակ կազմի, իսկ վերջինիս արձագանքով դեֆորմացվել է կրթության բոլոր մակարդակներում (բակալավրիատ, մագիստրատուրա, ասպիրանտուրա կամ դոկտորանտուրա) կադրերի պատրաստման կառուցվածքը: Հանրապետության բարձրագույն կրթության համակարգի շրջանավարտների ընդհանուր թվում հումանիտար մասնագիտություններով կրթություն ստացածների տեսակարար կշիռը 2017-2018 թթ. հասել է ավելի քան 64 %-ի: Վիճակը միսիթարական չէ գիտական աստիճանաշնորհման բնագավառում: Գիտական աստիճան հայցողների, ասպիրանտուրայում սովորողների ընդհանուր թվում գերակշռում են իրավաբանական, տնտեսագիտական և մյուս հումանիտար մասնագիտությունները, փոքրաթիվ են ֆիզիկամաթեմատիկական, քիմիական, կենսաբանական՝ տեխնոլոգիական փոփոխությունների ներուժ ապահովող մասնագիտություններով գիտական աստիճանի ձգտողները: Ակնհայտ է, որ ռազմավարական առումով տնտեսության և կրթության նման դեֆորմացված կառուցվածքը նպաստավոր չէ աշխարհում ընթացող տեխնոլոգիական հեղափոխության ներկա փուլում մեր երկրի դիրքավորման, տնտեսության առաջատար ճյուղերի զարգացման ապահովման և, անշուշտ, զինված ուժերի մարտունակության բարձրացման առումով:

Գիտատեխնիկական քաղաքականությունը վիթխարի նշանակություն ունի տնտեսության նորամուծական զարգացման և, որ հատկապես կարևոր է, երկրում անվտանգային միջավայրի ստեղծման համար: Գիտության զարգացումը, մասնավորապես հիմնարար ուղղություններով, ըն-

թանում է ներհատուկ օրինաչափություններով, սակայն առանց ֆինանսական, տնտեսական և խթանիչ նախադրյալների այն կարող է դանդաղել, ու գիտատեխնիկական առաջընթացը չի կարող կատարել իր առաքելությունը՝ երկրի տեխնոլոգիական վերելքի և նորաստեղծական զարգացման ապահովումը: Ահա թե ինչու անհրաժեշտ է գիտական ներուժի պահպանման երկար ժամանակ շարունակվող քաղաքականությունից աստիճանաբար անցնել ակտիվ գործողությունների՝ գիտական կազմակերպությունների տեխնոլոգիական վերելքին առնչվող հատվածի հետազոտությունները կազմակերպել պատվերային սկզբունքով՝ նպատակ ունենալով ռազմարդյունաբերական ուղղությունների զարգացման գիտական ապահովումը*:

Այդպիսով, կակտիվանա տնտեսություն-գիտություն կապը, որը վերջին տարիներին շատ թույլ է կամ անգամ բացակայում է վերը նշված տնտեսության կառուցվածքային գիտության համար աննպաստ փոփոխությունների պատճառով: ՀՀ ՀՆԱ շարժընթացի վրա գիտակրթական համակարգի ազդեցության կոռելյացիայի գործակիցը տատանվում է 0.2-0.3-ի միջակայքում²⁰, մինչդեռ գիտատեխնիկական առաջադիմութե-

* Ի դեպ, սկսած դեռևս Անգլիայում 18-րդ դարում տեղի ունեցած արդյունաբերական հեղափոխության ժամանակներից, գիտության զարգացման պատահական-հավանական սկզբունքը համալրվել է դրա կազմակերպման նպատակային-ծրագրային կառուցակարգերով, որոնք առավել ընդլայնվել են XX դարի երկրորդ կեսին և XXI դարում: Ուստի մեր խնդիրը ժամանակին համընթաց քայլելն է:

²⁰ Տե՛ս *Մուվարդյան Յու. Մ., Սարգսյան Վ. Ա.*, ՀՀ համախառն ներքին արդյունքի ծավալի և աճի տեմպի վրա գիտության և կրթության ազդեցության գնահատումը, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2015, հ. 3:

յունը պետք է ապահովի տնտեսական որակական աճի ավելի քան երկու երրորդը: Նման իրավիճակը բացատրվում է գիտահետազոտական աշխատանքները նորամուծական զարգացմանը նպատակաուղղված չլինելու, գիտության կիրառական նվաճումների առևտրայնացման կայուն համակարգ չգործելու պատճառներով: Եթե ՀՆԱ կառուցվածքում գերակշռում են ծառայությունների ոլորտի և սննդի արդյունաբերության ճյուղերը, որոնք հարաբերաբար պակաս գիտատար են, ապա գիտական հետազոտությունների արդյունքները և տնտեսության ծավալման ընթացքը միմյանց քիչ են առնչվում, գիտական արտադրանքի նկատմամբ պահանջարկը նվազում է, մինչդեռ հակառակ պարագայում հետազոտական աշխատանքը կարող է խթանվել՝ դրա նկատմամբ առաջարկի աճի շնորհիվ: Տնտեսություն-գիտություն առնչությունների ակտիվացումը կնպաստի ժամանակակից և հեռանկարային տեխնոլոգիական ուղղությունների զարգացմանը, որոնք հնարավորություն կընձեռեն քաղաքացիական նշանակության միջազգային շուկայում մրցունակ արտադրանքի հետ մեկտեղ թողարկելու նաև անվտանգային նշանակության, զինված ուժերի մարտունակության բարձրացմանը նպաստող ապրանքատեսակներ*:

* Տնտեսության և գիտատեխնիկական քաղաքականության ծրագրված կապերի շնորհիվ 20-րդ դարի 50-80-ական թվականներին հզոր վերելք ապրեցին Հայաստանի գիտությունը, էլեկտրատեխնիկական, գործիքաշինական, հաստոցաշինական, քիմիական արտադրությունները, էականորեն աճեց բարձր որակավորման ճարտարագետների, ֆիզիկոսների, քիմիկոսների և ճշգրիտ գիտությունների այլ մասնագետների նկատմամբ պահանջը: Իսկ հանրապետության արդյունաբերության արտադրանքի ծավալում մեքենաշինության տեսակարար կշիռը 1985

րի գործունեության գնահատականը միջազգային հրապարակումներից առաջ կհանդիսանա երկրի տնտեսության, մշակույթի զարգացման և անվտանգության ապահովման կարևորագույն ոլորտներում ունեցած ավանդը: Այս դրույթի հիմնավորումը նաև այն է, որ ի սկզբանե գիտությունը զարգացել է ոչ միայն իր ամբողջականության ապահովման, բնության և հասարակության զարգացման օրինաչափությունները բացահայտելու, այլև առաջին հերթին հանրությանն օգտակար լինելու համար:

թ. կազմել էր 30.3, քիմիական արդյունաբերությունը՝ 6.5, թեթև և սննդի արդյունաբերությունը, համապատասխանաբար՝ 24.4 և 17.8 % (տե՛ս *Суварян Ю. М.* “Управление ростом производительности труда в промышленности” (Е., Айастан, 1987, էջ 105-109), այսինքն՝ զուտ գիտատար արտադրանքի բաժինն ընդհանուր ծավալում էական էր (36.8 %):

2.4. ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ*

Ներածություն

Մարդկային հասարակության զարգացման ժամանակակից փուլի ամենաակնառու միտումն արհեստական բանականության ներթափանցումն է մարդու կենսագործունեության գրեթե բոլոր ոլորտներ: Հաճախ դժվար է հավատալ, որ արհեստական բանականությամբ տեխնոլոգիաներին արդեն հաջողվել է տեսնել, լսել, խոսել և անգամ ստեղծագործել մարդու նմանությամբ: Արհեստական բանականությունն արդեն բավական հեշտությամբ կարողանում է լուծել մարդկային հնարավորությունների տեսանկյունից բավական բարդ խնդիրներ (կատարել բարդագույն հաշվարկներ, ճանաչել պատկերներ, որոնք մարդկային աչքը կարող է նաև չճանաչել, կարճ ժամանակում (երբեմն վայրկյանների ընթացքում) համեմատել ու վերլուծել տարբեր իրավիճակներ նկարագրող միլիոնավոր տարբերակներ և այլն)՝ դրանով իսկ նկատելիորեն հեշտացնելով ու առավել արդյունավետ դարձնելով մարդու գործունեությունը տարբեր ասպարեզներում: Արհեստական բանականության դերի ու նշանակության, կիրառման արդյունավետության սրընթաց մե-

* Շարադրվել է տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Գ. Հարությունյանի համահեղինակությամբ:

Առաջին անգամ հրապարակվել է «Հայկական բանակ» հանդեսում (2022 թ., թ. 1):

ծացման պայմաններում անխուսափելի էր տարբեր պետություններում պետական կառավարման համակարգում «թվային վերափոխման» իրականացումը, որը պիտի հանգեցներ արհեստական բանականության և այլ սահմանային տեխնոլոգիաների (մեծածավալ տվյալներ, ամպային տեխնոլոգիաներ, իրերի համացանց, բլոկչեյն, քվանտային տեխնոլոգիաներ և այլն) առավելությունների վրա հիմնված նոր մոտեցումների ձևավորմանը:

Հանրային կառավարման ոլորտները՝ պետական կառավարումը, տեղական ինքնակառավարումը, քաղաքացիական հասարակության կայացմանը զուգընթաց ձևավորվող ու գործող մեծաթիվ հասարակական-քաղաքական կազմակերպությունները, մեծ մասամբ իրագործում են մեծածավալ կարևորագույն գործառույթներ, որոնց բարձր արդյունավետությունը ներկայումս կարող է ապահովվել թվային տեխնոլոգիաների, զանազան կառավարչական գործընթացների մոդելավորման և այդ հիմքի վրա որոշումների ընդունման ու իրագործման ընթացքի մշտական վերահսկողության արդյունքում: Ի դեպ, վերահսկողությունն ընդունված կառավարչական որոշումների կատարումն ապահովելու և արդյունքները գնահատելու կարևորագույն միջոց է, հատկապես եթե այն իրագործվում է թվային տեխնոլոգիաներով:

Սակայն հանրային կառավարման ոլորտում ԱԲ տեխնոլոգիաների կիրառման հարցերի քննարկումը միայն դրանից հնարավոր առավելությունների համատեքստում, անշուշտ, միակողմանի մոտեցում է և արդի ժամանակաշրջանում արհեստական բանականության շուրջ ստեղծված «համաշխարհային աղմուկի» և անթաքույց գովազդի պայ-

մաններում կարող է հանգեցնել այս ուղղությամբ պետական քաղաքականության անթույլատրելի սխալների: Ուստի, կարևոր է քննարկել ինչպես հանրային կառավարման ոլորտում ԱԲ կիրառման առավելությունները, այնպես էլ դրա հետ կապված հնարավոր բոլոր ռիսկերը՝ ուրվագծելով ԱԲ կիրառման այն կարևորագույն ուղենիշները, որոնք իսկապես կհանգեցնեն հանրային կառավարման արդյունավետության բարձրացման և մատուցվող հանրային ծառայությունների բարելավման: Հոդվածում առավելապես քննարկվել են հենց նշված հարցերը:

Հանրային կառավարման ոլորտում արհեստական բանականության կիրառման առանձնահատկությունները

Արհեստական բանականության բնորոշման բազմաթիվ մոտեցումներից առավել համապարփակը մեր կարծիքով տրված է Ռուսաստանի Դաշնության «Մինչև 2030 թվականն արհեստական բանականության զարգացման ազգային ռազմավարության» մեջ, ըստ որի՝ արհեստական բանականությունը տեխնոլոգիական լուծումների համախումբ է, որը հնարավորություն է տալիս նմանակելու մարդու բանական (կոգնիտիվ) հնարավորությունները (ներառյալ ինքնուսուցումը և լուծումների որոնումն առանց նախապես տրված ալգորիթմի) և կոնկրետ խնդիրների լուծման ժամանակ ստանալու արդյունքներ, որոնք համադրելի են *նվազագույնը* մարդու մտավոր գործունեության արդյունքների հետ¹: Նշված բնորոշման մեջ կարևոր է «նվազագույն» բառը,

¹ Указ Президента РФ от 10 октября 2019 г. N 490 "О развитии искусственного интеллекта в Российской Федерации". [Указ Президента РФ от](#)

քանի որ հակառակ դեպքում արհեստական բանականության ներդրումն ու կիրառումը ոչ միայն դադարում են շահավետ ու արդյունավետ լինել, այլ նաև կարող են հանգեցնել սոցիալական խնդիրների սրացման, օրինակ՝ գործազրկության աճի հետևանքով: Տնտեսական զարգացման և համագործակցության կազմակերպության փորձագետների կարծիքով առաջիկա մի քանի տարվա ընթացքում արհեստական բանականությունը հնարավորություն կտա ազատելու հանրային ծառայողների աշխատաժամանակի 1/3-ը, որը նրանք կարող են ծախսել ավելի մեծ արժեք ստեղծող գործունեության վրա²: Սակայն աշխատաժամանակի նման կրճատումը կարող է նաև աշխատողների կրճատման պատճառ դառնալ: Ինչ խոսք, կատարյալ հիշողություն և ուշադրության կենտրոնացում, անվերջ տվյալների բազայում արագ կողմնորոշում, գործողությունների արագություն և հիմնավոր կանխատեսումներ իրականացնելու ունակություններ հանրային կառավարման ոչ բոլոր ծառայողներն ունեն: Եվ առավել հաճախ ԱԲ-ի այս ունակություն-

[10.10.2019 N 490 "О развитии искусственного интеллекта в Российской Федерации" | ГАРАНТ \(garant.ru\)](#) (Accessed: 02.05.2022)

² Jamie Berryhill, Kévin Kok Heang, Rob Clogher, Keegan McBride. “Hello, World: Artificial intelligence and its use in the public sector”. OECD Working Papers on Public Governance No. 36, © OECD 2019, p. 3. [Hello, World : Artificial intelligence and its use in the public sector | OECD Working Papers on Public Governance | OECD iLibrary \(oecd-ilibrary.org\)](#) (Accessed: 31.04.2022)

ներն են, որոնք հիմնավորում են պետական կառավարման ոլորտում դրա կիրառման նպատակահարմարությունը³:

2021 թվականի փետրվարի 11-ին ՀՀ կառավարության որոշմամբ հաստատվեց Հայաստանի թվայնացման ռազմավարությունը, և հավանության արժանացավ այդ ռազմավարությամբ նախատեսվող միջոցառումների ծրագիրը: Մասնավորապես նպատակադրված է մեծացնել պետական կառավարման ոլորտում թվային տեխնոլոգիաների կիրառելիությունը, որը թույլ կտա բարձրացնել պետական կառավարման արդյունավետությունը՝ օպտիմալացնելով վարչարարական գործընթացները, կրճատելով ծախսերը, մեծացնելով գործընթացների վերահսկելիությունը և նվազեցնելով կոռուպցիոն ռիսկերը⁴: Ռազմավարությամբ նախատեսվում է ստեղծել ամբողջությամբ թվայնացված փաստաթղթաշրջանառության համակարգ, որն արհեստական բանականության տեխնոլոգիաների օգնությամբ կօժանդակի կառավարությանը որոշումների կայացման գործընթացում: Նկատենք սակայն, որ էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության արդյունավետ կազմակերպումն արհեստական բանականության կիրառման թեև ամենատարածված, բայց ամեննին էլ միակ ոլորտը չէ: Ժամանակակից աշխարհում արհեստական բանականության շնորհիվ հնարավոր է

³ Талапина Э. В., Использование искусственного интеллекта в государственном управлении. Информационное общество, 2021, № 3, стр. 16-22.

⁴ «Հայաստանի թվայնացման ռազմավարությանը, ռազմավարության միջոցառումների ծրագրին և արդյունքային ցուցանիշներին հավանություն տալու մասին» կառավարության N 183-Լ որոշում (ընդունված 11 փետրվարի 2021 թվականի)

www.arlis.am/DocumentView.aspx?docID=149957

դարձել բարելավել թե՛ օրինաստեղծ և թե՛ իրավակիրառ գործընթացները, հանրային կառավարման տարբեր ուղղություններով կատարելագործել քաղաքականության մշակման և կիրառման տեխնոլոգիաները, հատկապես ռազմավարական և ընթացիկ ծրագրերի օպտիմալացման ու դրանց կատարման նկատմամբ մշտադիտարկման նպատակով տնտեսամաթեմատիկական մոդելավորման մեթոդների կիրառման շնորհիվ կանխատեսել և գնահատել վարվող քաղաքականության նկատմամբ հանրային տրամադրությունները, բազմազանեցնել մատուցվող հանրային ծառայությունների և հասարակական բարիքների տեսականին, առավել նպատակային ու թիրախային դարձնել դրանց ուղղությամբ կատարվող ծրագրերը, բարելավել քաղաքային երթևեկությունը, օժանդակել արտակարգ պատահարների կանխատեսման և հետևանքների վերացմանը: Արհեստական բանականության հնարավորությունների շարքը կարելի է երկար թվարկել, այդուհանդերձ հանրային կառավարման ոլորտում ԱԲ տեխնոլոգիաների գործադրումը նկատելիորեն հետ է մնում մասնավոր ոլորտում դրանց կիրառումից: Դա առավելապես պայմանավորված է հետևյալ հանգամանքներով.

- ✓ տվյալների (հատկապես անձնական) պաշտպանվածության բարձր մակարդակի ապահովման անհրաժեշտությունը,
- ✓ քաղաքացիներին առնչվող մեծածավալ տվյալների բազաների օգտագործման էթիկական հարցերը,
- ✓ ԱԲ տեխնոլոգիաների աշխատանքի արդյունքների վերահսկելիության անհրաժեշտություն, որը հա-

- ճախ կարող է չեզոքացնել արհեստական բանականության կիրառման արդյունավետությունը,
- ✓ կատարվող աշխատանքների թափանցիկության ապահովման անհնարինությունը որոշ դեպքերում, որը կարող է երբեմն հանգեցնել հանրային իշխանությունների նկատմամբ վստահության անկման,
 - ✓ պետական տարբեր գործառույթների իրականացման ժամանակ ԱԲ կիրառման, դրա հետևանքների գնահատման, հնարավոր պատասխանատվությունների շրջանակի գծման համար օրենսդրաիրավական հիմքերի ոչ բավարար մշակվածությունն ամբողջ աշխարհում,
 - ✓ արհեստական բանականության «ինքնուսուցման» համար բավարար «լուծումների» բազայի բացակայությունը,
 - ✓ միջպետական և միջազգային մակարդակում արհեստական բանականության զարգացման ոլորտում թույլ համագործակցությունը, քանի որ արդի պայմաններում այս նորարարական տեխնոլոգիայի զարգացման առումով գերիշխող դիրքի հասնելը համաշխարհային մրցակցության հարթակում առաջնային հայտանիշի է վերածվել՝ իրավացիորեն ենթադրելով, որ միայն այն պետությունները, որոնք կկարողանան արդյունավետ ներդնել արհեստական բանականությունը պետական կառավարման համակարգում, ունակ կլինեն հակազդելու ժամանակակից ներքին և արտաքին սպառնալիքներին⁵:

⁵ Васин С.Г. Искусственный интеллект в управлении государством. “Государственное и муниципальное управление”, 2017, № 3(17), стр. 5-10.

Թվարկված և մի շարք այլ հանգամանքներով պայմանավորված հանրային կառավարման մարմիններն արհեստական բանականության տեխնոլոգիաների կիրառման արդյունավետության բարձրացման համար պետք է առանձնահատուկ ուշադրությամբ նկատառեն հարցին առնչվող մի շարք կարևոր ասպեկտներ: Մասնավորապես⁶.

- ձևավորել փորձարարական որոշակի տարածություն (ինչպես ժամանակային, այնպես էլ թվային հարթակների տրամադրման առումներով) արհեստական բանականության համար (օրինակ, սահմանելով ռազմավարական մոտեցումներ և սկզբունքներ դրա ներդրման համար, ձևավորելով պետական ենթակառուցվածքներ՝ ԱԲ զարգացման ինկուբացիոն շրջանի հաղթահարման և աստիճանաբար հաջողությունների գեներացման համար),
- մշակել արհեստական բանականության օգտագործման վստահելի, անաչառ և պատասխանատու մոտեցումներ՝ ձևավորելով իրավական և էթիկական անվիճարկելի շրջանակներ, որոնք կապահովեն ԱԲ կիրառման արդյունքների մեկնաբանելիությունը և կհստակեցնեն մարդու դերը ԱԲ-ով կառավարվող գործընթացներում,
- ապահովել որակյալ տվյալների էթիկական հավաքագրում, դրանց հասանելիություն և օգտագործում՝ տվյալների կառավարման այնպիսի ռազմավարությունների մշակման ճանապարհով, որոնք հիմնված են մեքենայական ընթերցման, գաղտնի-

⁶ Jamie Berryhill et al. (2019), p. 9.

ության և անվտանգության պահանջների պահպանման, կողմնակալության բացառման սկզբունքների վրա,

- ապահովել միջգիտակարգային ինտելեկտուալ կարողություններով, բազմատեսակ ունակություններով և ներառական անձնակազմի հավաքագրում, որը, ըստ էության, ժամանակակից պետական կառավարման համակարգերում ԱԲ կիրառման լավագույն ենթակառուցվածքն է,
- ընդունել ու գիտակցել այն բոլոր հնարավոր կարևորագույն տեղաշարժերը, որոնց կարող է հանգեցնել ԱԲ համատարած օգտագործումը և կիրառել կանխողական նորարարական մոտեցումներ՝ ձևավորելով հանրային կառավարման ոլորտում ԱԲ կիրառման ներուժային հնարավորություններ, քանի դա հնարավոր է:

Հարցերի շրջանակը, որոնք պետք է անպայմանորեն հաշվի առնել արհեստական բանականության զարգացման ռազմավարություն մշակելիս, անշուշտ, բավական մեծ է: Թերևս, դա է պատճառը, որ հաճախ, փոքր երկրների պարագայում, որոնք չունեն ԱԲ ներդրման համար ձևավորված ենթակառուցվածքներ, պահանջվող գործընթացների մեկնարկի համար բավարար ֆինանսական միջոցներ, առավել նպատակահարմար է դիտվում ԱԲ որոշ տեխնոլոգիաների ներմուծումն առաջատար պետություններից կամ դրանց ընդօրինակումը: Մինչդեռ, արհեստական բանականության և ցանկացած այլ նորարարական սահմանային տեխնոլոգիայի կենսացիկլի առանձնահատկություններից ելնելով, դրանց կիրառումն առավելագույն արդյունավետություն

կարող է ապահովել միայն կենսացիկլի նախնական (ներդրման և աճի) փուլերում, իսկ առաջատար պետություններն այդ տեխնոլոգիաները սկսում են արտահանել հիմնականում դրանց կենսացիկլի հասունացման փուլին հասնելուց հետո: Այս հանգամանքը նույնպես կարևոր է հաշվի առնել արհեստական բանականության զարգացման ռազմավարական ուղենիշները գծելիս:

Արհեստական բանականության կիրառման իրողություններն ու հնարավորությունները հանրային կառավարման ոլորտում

Տեխնոլոգիական սրընթաց փոփոխություններով բնութագրվող ժամանակակից աշխարհում տարբեր պետությունների կառավարությունները մշտապես պետք է վերանայեն պետական կառավարման ավանդական մոտեցումները և գործիքները՝ ձգտելով ապահովել մարդկանց և տեխնոլոգիաների ֆունկցիոնալ համատեղելիություն, բարձրացնել քաղաքացիների վստահության աստիճանը պետական մարմինների աշխատանքի նկատմամբ, հանրային ծառայողների պատասխանատվությունը, աշխատանքի արդյունավետությունն ու թափանցիկությունը⁷: Այս ամենը վերաբերում է նաև տեղական ինքնակառավարման մարմիններին, որոնց աշխատանքն անմիջականորեն առնչվում է համայնքի տարածքի բնակչության ամենօրյա կարիքները գնահատելու և բավարարելու խնդիրների պատշաճ լուծ-

⁷ A. Kankanhalli, Y. Charalabidis, S. Mellouli, IoT and AI for smart government: a research agenda, Gov. Inf. Q. 36 (2) (Apr. 2019) p. 304–309.

մանր: Կրկնվող խնդիրների լուծման ավտոմատացման, գործողությունների արագության մեծացման, հնարավոր քաղաքականության հետևանքների կանխատեսման և այլ հնարավորությունների շնորհիվ այսօր արհեստական բանականությունը լայնորեն կիրառվում է հանրային կառավարման ամենատարբեր ոլորտներում՝ տրանսպորտային հոսքերի կարգավորումից մինչև քաղաքականության մշակում և դրա իրագործման արդյունքների գնահատում:

Սակայն արհեստական բանականության տեխնոլոգիական հնարավորություններն արդի ժամանակաշրջանում շատ ավելի մեծ են, քան առօրյա գործողությունների պարզ մեքենայացումը, և դրանց անտեսումը կարող է տանել հանրային կառավարման համակարգի և ժամանակակից թվային դարաշրջանի միջև տեխնոլոգիական խզման առաջացման՝ իր բոլոր բացասական հետևանքներով: Ընդհանրական անդրադառնանք այն հիմնական ուղղություններին, որտեղ ԱԲ-ն կարող է արդյունավետ իրացման հարթակ գտնել.

- տարբեր սարքավորումների միջոցով իրացվող արհեստական բանական (կոգնիտիվ) համակարգեր, ինքնազարգացող և հարմարվող համակարգեր, որոնք ունակ են ժամանակի իրական ռեժիմում վերլուծելու իրավիճակներ, մշակելու լուծումների տարբերակներ և առաջարկելու կիրառական որոշումների ընդունման մոտեցումներ,
- բարդ համակարգերի և նախագծերի կառավարման ինտելեկտուալ գործիքներ,

- պետական կառավարման գործընթացների ապահովման համար բարդ և գերբարդ բազմասցենարային ալգորիթմների կիրառում,
- մեծածավալ տվյալների մշակման և վերլուծության տեխնոլոգիաների կիրառում՝ պետական կառավարման փորձագիտական-վերլուծական և վերահսկողական գործառույթների ապահովման համար,
- կանխատեսումային սցենարային մոդելավորում, այդ թվում նաև՝ զգալի անորոշության պայմաններում,
- պետական կառավարման ոլորտում ռիսկերի օպերատիվ մշտադիտարկում, գնահատում, «կշռում» և դասակարգում⁸,
- ռազմական կառավարման ոլորտում զինվորական անձնակազմի և ռոբոտացման համակարգերի միջև ցանցային փոխգործողության ապահովում,
- նշված ուղղություններով ԱԲ կիրառման ստորև բերվող օրինակներն առավել ընկալելի կդարձնեն ԱԲ առավելությունները հանրային կառավարման ոլորտում:

⁸ Косоруков А.А. Технологии искусственного интеллекта в современном государственном управлении. Социодинамика. 2019, № 5. стр. 43 - 58.

Գիտահետազոտական աշխատանքների ֆինանսավորման և գնահատման կորեական PIE համակարգ

Չնայած գիտահետազոտական աշխատանքների պետական ֆինանսավորումը Հարավային Կորեայում շարունակաբար աճել է, այնուամենայնիվ նման միտումն իր դրական ազդեցությունը չէր ունենում տնտեսության նորարարական զարգացման վրա: Գիտության և հեռահաղորդակցության նախարարությունը հատկորոշել էր չորս հիմնական խնդիրներ, որոնք պետք է լուծվեին այդ դրական էֆեկտն ունենալու համար՝ ԳՀՓԿԱ ծրագրեր իրականացնող տարբեր գերատեսչությունների միջև տեղեկատվության փոխանակման սահմանափակություն, հիմնարար հետազոտությունների և կիրառական ու առևտրայնացված մշակումների միջև խզում, պետության կարգավորող գործառույթների անտեսում մշակումների փուլում, ծրագրերի գնահատման և ֆինանսավորման միջև հետադարձ կապի անհստակություն: Թվարկված խնդիրները լուծելու համար կառավարությունը ներդրեց նորարարական ներդրումային մոդել (R&D PIE), որի ամբողջ աշխատանքն իրականացվում է արհեստական բանականության միջոցով: Մոդելը համախմբում է մի քանի տարբեր ոլորտների տվյալները (ակադեմիական հետազոտություններ, պատենտներ, պետական և մասնավոր տեխնոլոգիական ձեռքբերումներ, տնտեսական ազդեցության վերաբերյալ տվյալներ, շուկայի վերաբերյալ այլ տվյալներ), որոնք մեծածավալ տվյալների վերլուծության և մեքենայական ուսուցման միջոցով գնա-

հատում են տեխնոլոգիական դաշտում կարևոր (բեկումնային) փոփոխությունները, բացահայտում համընկնումները, ներուժային հնարավորությունները, գերատեսչությունների, մասնավոր ոլորտում շահագրգիռ կողմերի և գիտական շրջանակների միջև փոխգործակցության համար «բացակայող օղակները»: Համակարգի ընձեռած հնարավորությունները կառավարությունն օգտագործում է նաև այլ ռազմավարական ոլորտներում՝ ներդրումների նպատակահարմարությունը գնահատելու և այդ ուղղությամբ որոշումների կայացման համար⁹:

Քաղաքական գործընթացների արդյունավետության բարձրացում

ԱԲ-ն հատկապես արդյունավետ է տարբեր երևույթների նկատմամբ հասարակության տրամադրությունների գնահատման, սոցիալ-քաղաքական կոնֆլիկտների բացահայտման և դրանց հետևանքների հաղթահարման հարցում: Ք. Մահոնի, Է. Ալբրեխտի և Մ. Սենսոյի կողմից 2019 թվականին հրապարակված հետազոտության մեջ նկարագրվում է, թե ինչպես է կիրառվել ԱԲ-ն՝ բացահայտելու համար համացանցում տեղի ունեցող քննարկումների և Քենիայում քաղաքական բռնությունների միջև¹⁰: Նախնական հիպոթեզն այն էր, որ համացանցում ազդեցիկ քաղաքական գործիչների խոսքում օգտագործվող շեշտադրումներն ուղ-

⁹ R&D Platform for Investment and Evaluation. <https://oecd-opsi.org/innovations/rd-platform-for-investment-and-evaluation-rd-pie/> (Accessed: 08.05.2022)

¹⁰ Chris Mahony, Eduardo Albrecht and Murat Sensoy. The relationship between influential actors' language and violence: A Kenyan case study using artificial intelligence. February 2019, 80 p.

ղակիորեն կապված են լարվածության աճի և բռնությունների գործադրման փաստերի հետ: Այս հիպոթեզը ստուգելու համար հետազոտողները վերլուծել են Թվիթերից հավաքագրած տվյալները՝ օգտագործելով բնական լեզվի մշակման տեխնոլոգիան (Natural Language Processing): Վերջինիս միջոցով գնահատվել է քաղաքական ազդեցիկ գործիչների թվիթների բնույթը (դրական, բացասական և բռնության ենթատեքստ պարունակող)՝ հետևելու համար նրանց էմոցիաների փոփոխությանը: Այնուհետև օգտագործվել է խոր ուսուցման (Deep Learning) մեթոդը՝ ոչ կառուցվածքային տվյալները կառուցվածքայինի փոխարկելու նպատակով: Պատահական անտառի ալգորիթմն օգտագործվել է տրամադրությունների գնահատականը քաղաքական բռնությունների հետևանքով ամենօրյա մահացության թվի հետ կորելացնելու համար: Արդյունքում գիտնականները բացահայտել են, որ հետազոտության այս մոդելը կարող է 150 օր առաջ կանխատեսել մահացությունների թվի փոփոխությունը: Ակնհայտորեն նման մոտեցման վրա հիմնված ԱԲ համակարգը կարող է կանխատեսել քաղաքական կոնֆլիկտները և օգնել՝ միջոցներ ձեռնարկելու բռնաճնշումներից տուժողների թիվը նվազեցնելու համար:

Հանրային ֆինանսների օգտագործման արդյունավետության բարձրացում

Հանրային ֆինանսների անօրինական յուրացման մի քանի սկանդալային դեպքերից հետո Բրազիլիայում 2019 թվականին մշակվեց արհեստական բանականության հիմքով աշխատող մի նախագիծ (Serenata de amor), որն ապահովելու էր ֆինանսական թափանցիկություն և բացահայտելու էր կոնգրեսի անդամների կողմից պետական ֆի-

նանսների ոչ նպատակային օգտագործման դեպքերը¹¹: Նախագիծն ըստ էության հնարավորություն էր տալիս բացահայտելու հանրային ֆինանսների բաշխման ժամանակ թույլ տված խախտումները (այդ թվում նաև՝ կոռուպցիոն ռիսկերը): Համակարգն աշխատում է ROSI արհեստական բանականության տեխնոլոգիայով, որը, վերլուծելով պաշտոնական և ընդհանուր հասանելի աղբյուրներից մեծածավալ տվյալներ, ստուգում է ոչ միայն դրանց անհամապատասխանությունը հայտարարված ծրագրերին, այլ նաև դրանց չհիմնավորված բարձր լինելու հանգամանքը, և կասկածների հաստատման դեպքում տեղեկատվությունը փոխանցում է վերահսկող լիազոր մարմիններին¹²: Միաժամանակ այդ տեղեկատվությունը հրապարակվում է համացանցային բաց հարթակներում, օրինակ՝ Թվիթերում: Արհեստական բանականության նման համակարգի առանձնահատկությունն այն է, որ ոչ միայն կարգավորում է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությունը պետական կառավարման համակարգում, այլև վերահսկում է գերատեսչությունների ֆինանսական հաշվետվողականությունը, գնահատում արդյունավետությունը, տրամադրում որոշումների կայացման խորհրդատվական գործիքներ:

¹¹ Madan, R. and Ashok, M. (2022) A Public Values Perspective on the Application of Artificial Intelligence in Government Practices: A Synthesis of Case Studies. Handbook of Research on Artificial Intelligence in Government Practices and Processes. IGI Global Publishing, Hershey, pp. 162-189.

¹² Искусственный интеллект в профилактике правовых рисков и противодействии коррупции. К XXIII Ясинской международной научной конференции по проблемам развития экономики и общества., Москва, 2022г, стр. 38.

Ռազմական կառավարման համակարգի արդյունավետության մեծացում բարձր աստիճանի իրավիճակային իրազեկության պայմաններում: Ներկայումս արհեստական բանականությամբ աշխատող ռազմական կառավարման ամենահայտնի համակարգն ամերիկյան «Լոկհիդ Մարտին» (*“Lockheed Martin”*) ընկերության մշակած ՍԻ4ԱյՍՌ (*C4ISR*)* համակարգն է¹³, որը հնարավորություն է տալիս.

- լրիվ ավտոմատացնելու հետախուզական տվյալների հավաքումը և մշակումը,
- ավտոմատ կերպով տեղորոշելու ստորաբաժանումների գտնվելու վայրը,
- տեղորոշելու հակառակորդի գտնվելու վայրը և նրա տեղաշարժը ներկայացնելու էլեկտրոնային քարտեզների վրա,
- ընտրելու գորքերի տեղաշարժման ուղղությունները,
- նշանառելու և թիրախը խոցելու,
- ստորաբաժանումներին մշտապես տեղեկացնելու յուրային այլ ստորաբաժանումների և հակառակորդի գործողությունների վերաբերյալ,

* Տվյալ հապավումը կազմված է հետևյալ անգլերեն տերմիններից՝ command, control, communications, computers, intelligence, surveillance and reconnaissance, որոնք թարգմանվում են՝ կառավարում, կապ, տեղեկության ստացման և մշակման ավտոմատացում, հետախուզություն, դիտում և տեղագնում, ինչը ըստ ՌԴ-ում ընդունված տերմինաբանության և ռուսաստանյան մասնագետների պատկերացումների, կոչվում է ավտոմատացված կառավարման համակարգ:

¹³ St' u Istvan Szabadi. Artificial Intelligence in Military Application - Opportunities and Challenges. “Land Forces Academy Review”, 2021, Vol. XXVI, N 2(102):

- մոդելավորելու ճակատամարտը (զինված պայքարի այլ ձևեր) և կանխատեսելու դրա արդյունքները,
- հրամանատարին առաջարկելու որոշումների կայացման տարբերակներ՝ ուժերի հարաբերակցության վերլուծությամբ¹⁴:

Այս հնարավորությունների շնորհիվ ՍԻ4ԱյՍՌ համակարգն օգնում է ձևավորելու միասնական տեղեկատվական դաշտ, հարմարվողական (ճկուն) կառավարման համակարգ՝ հիմնված զինված ուժերի հնարավորությունների լիարժեք ու նպատակային օգտագործման վրա: Հատկանշական է, որ տարբեր տեղեկություններով դեռ 2016 թվականի Ապրիլյան պատերազմից հետո նման համակարգ ունեցել է նաև Արցախի Պաշտպանության բանակը, սակայն այն չէր գործում արհեստական բանականությամբ¹⁵:

Աջակցություն ռազմավարական մակարդակում ռազմական օպտիմալ որոշումների կայացմանը: Որոշումների կայացման օպտիմալացմանը կողմնորոշված պատերազմավարման ամերիկյան արդիական մոտեցումներից մեկը «Խճանկարային պատերազմ» (*Mosaic Warfare*¹⁶) հայեցակարգն է, որում առանցքային դերակատարումը վերապահված է արհեստական բանականությանը: Վերջինիս օգնությամբ

¹⁴ Համակարգի հնարավորությունների մասին առավել հանգամանորեն տե՛ս Lockheed Martin ընկերության պաշտոնական կայքը՝ “C4ISR”. “Lockheed Martin” (<https://www.lockheedmartin.com/en-us/capabilities/c4isr.html>):

¹⁵ Տե՛ս *Micah Spangler*. Nagorno-Karabakh Is Ready for Another War. "The National Interest", 6 October 2016 (<https://nationalinterest.org/feature/nagorno-karabakh-ready-another-war-17959>):

¹⁶ Տե՛ս “Strategic Technology Office Outlines Vision for ‘Mosaic Warfare’”. “DARPA”, 4 August 2017 (<https://www.darpa.mil/news-events/2017-08-04>):

յամբ հնարավորություն է ստեղծվում միավորելու ռազմական կառավարման տարբեր համակարգեր և ցանցեր, որոնք ավանդաբար չեն գործակցում միմյանց հետ՝ առավել օպտիմալ որոշումների կայացման համար: Համակարգը ձգտում է ռազմական գործողություններին մասնակցող բոլոր օղակների, սարքավորումների, կառավարման և վերահսկողության հանգույցների քառասյին աշխատանքը համակարգելու ճանապարհով ձևավորել հզոր «անհամաչափ սպառազինություն», որը կարող է նկատելի առավելություն ապահովել ցանկացած մասշտաբի ռազմական գործողությունների ժամանակ: Այն հիմնվում է ոչ թանկարժեք տվիչների, զգայուն սարքերի, կառավարվող և ինքնակառավարվող ապարատների միջև տեղեկության օպերատիվ փոխանակության և «համագործակցային» աշխատանքի վրա»¹⁷: Ընդ որում այս համակարգի փորձարկումների ժամանակ արհեստական բանականությանը հաջողվել է օդային մարտում գերազանցության հասնելու համար արդյունավետ ընտրել ժամանակ, անհրաժեշտ ուժերի քանակն ու տեսակը, ծրագրել ճիշտ ռազմավարություն, կազմակերպել մարտավարական գորաշարժեր:

Կարելի է երկար թվարկել նորօրյա հանրային կառավարման համակարգերում արհեստական բանականության կիրառման օրինակները: Դրանք ներառում են միգրացիոն հոսքերի կառավարումը (կանադական AuroraAI), փախստականների հետ աշխատանքի օպտիմալացումը (ամերի-

¹⁷ Տե՛ս *Bryan Clark, Dan Patt, Harrison Schram. Mosaic Warfare: Exploiting Artificial Intelligence and Autonomous Systems to Implement Decision-Centric Operations. Center for Strategic and Budgetary Assessments, 2020, P. vi:*

կյան Annie™ MOORE), հոդօգտագործման խնդիրների լուծումը (ավստրալիական QLUMP համակարգ), բեռնային ավիափոխադրումների ժամանակ ռիսկերի գնահատումը (կանադական Bomb in a box համակարգ), գործարարության պետական կարգավորման ազդեցության գնահատումը (բրիտանական BEIS), ռազմական ոլորտում բազմաթիվ խնդիրների լուծումը¹⁸, մարդկային թրաֆիքինգի դեմ պայքարը, անհայտ կորածների որոնումը, հանցագործությունների բացահայտումը, խելացի քաղաքների բազմաթիվ նախագծեր և այլն: Ինչպես արդեն նշվել է, Հայաստանի Հանրապետությունում հանրային կառավարման շատ բնագավառներում՝ պետական կառավարման տարբեր մակարդակներում, տեղական ինքնակառավարման համակարգում, քաղաքացիական հասարակության ինստիտուտներում լայնորեն օգտագործվում է ԱԲ բաղադրիչներից մեկը՝ արդի թվային տեխնոլոգիաները: Դրա հետ մեկտեղ հարկ է ուսումնասիրել ԱԲ միջազգային նվաճումները և դրանք արդյունավետորեն օգտագործել: Օրինակ, վերը բերված ԱԲ կիրառություններից ուսանելի է և ստեղծագործական գործադրման արժանի հատկապես կորեական փորձը, քանի որ տնտեսություն-գիտություն թույլ կապը, նորամուծական զարգացման անբավարար մակարդակը, որ, ցավոք, բնորոշ են մեր տնտեսությանը, բացատրվում են կորեական փորձի

¹⁸ Տե՛ս **Գ. Հարությունյան**, Արհեստական բանականության կիրառման համաշխարհային փորձից, հեռանկարներ հայկական ռազմաարդյունաբերության զարգացման համար: «ՀԲ» 2020, հմ. 1 (Էլեկտրոնային տարբերակը՝ https://razmavaraget.files.wordpress.com/2020/07/hb_2020-n1.pdf):

նկարագրության նշված գործոններով, որոնք կարող են հաղթահարվել ոչ միայն գիտության կառավարման կազմակերպական կառուցվածքի անհրաժեշտ փոփոխություններով, այլ նաև ԱԲ տեխնոլոգիաների նպատակային գործադրմամբ:

Միաժամանակ հարկ է ընդգծել, որ հանրային կառավարման ոլորտում շարունակում է բավական մեծ վակուում մնալ արհեստական բանականության կիրառման համար: Մասնավորապես արհեստական բանականության վրա հիմնված տարբեր տեխնոլոգիաներով կատարվող կիրառությունները կարող են արդյունավետ լինել հետևյալ ասպարեզներում.

- անվտանգային աշխարհաքաղաքական միջավայրի գնահատում և թշնամական վարքագծի բացահայտում,
- ազգային պաշտպանության և անվտանգության համակարգերի արմատավորում ու ռիսկերի գնահատում և կառավարում,
- տարերային աղետների և հնարավոր պատերազմների ճշգրիտ կանխատեսում,
- ազգային մշակույթի և պատմության կեղծարարության, ինչպես նաև մանիպուլյատիվ ապակոդմնորոշող տեղեկատվության դեմ պայքար,
- հակամրցակցային գնագոյացման հանգամանքների գնահատում և տնտեսվարողների միջև գաղտնի համաձայնությունների բացահայտում,
- հարկային ու մաքսային քաղաքականության նոր գործիքակազմի ձևավորում, կարգավորման կիրառվող դրույքաչափերի օպտիմալության գնահատում՝

սոցիալական ազդեցության համատեքստում պետություն-մասնավոր համագործակցության էքստերնալների (արտաքին էֆեկտների) գնահատում:

Պետական կառավարման ոլորտում ԱԲ կիրառման ռիսկերը

Իր հսկայական ներուժային դրական արդյունքներով հանդերձ ԱԲ կիրառումը պետական կառավարման ոլորտում նաև բավական մեծ ռիսկեր է ենթադրում:

Դրանք են.

- թափանցիկությունը. այս կամ այն գործառույթի իրականացման համար ալգորիթմների գեներացման ոչ թափանցիկությունը, որի պատճառով հաճախ դժվար է լինելու պարզել սխալ «որոշումների» կամ գործողությունների պատասխանատուներին: Եվ թեև գործնականում հնարավոր է բացահայտել ալգորիթմների ձևավորման տրամաբանությունը, կողերին հասանելիությունը կարող է սահմանափակված լինել մտավոր սեփականության իրավունքով,
- կանխատրամադրվածությունը. քանի որ արհեստական բանականության տեխնոլոգիաներն ինքնուսուցվում են գոյություն ունեցող հասարակական հարաբերությունների վերլուծության արդյունքում բացահայտված օրինաչափություններով, բավական մեծ է հավանականությունը, որ դրանք կկրկնօրինակեն, կվերարտադրեն, կուժեղացնեն և կընդլայնեն հասարակության մեջ արդեն իսկ գոյություն

ունեցող բացասական վարքի մոդելները՝ մարզինալացում, անհավասարություն և խտրականություն¹⁹: Բացի այդ բանական վերլուծությունների ու չափումների համար մոդելները, այնուամենայնիվ, ընտրվում են մարդկանց կողմից, հետևաբար՝ մեծ հավանականությամբ դրանք կարող են արտացոլել մշակողների կանխատրամադրվածությունը,

- անհատական տվյալների խոցելիություն. ակնհայտ է, որ պետական կառավարման ոլորտում ԱԲ կիրառումն օգտակար կարող է լինել միայն այն դեպքում, երբ հասանելի են քաղաքացիների վերաբերյալ անհատական տվյալներ, ընդ որում բավական հաճախ դրանց օգտագործումը տեղի է ունենում առանց անհատի գիտակցության: Երբեմն անհատը կարող է հայտնվել անգամ սոցիալական փորձարկումների դաշտում՝ կորցնելով մասնավոր կյանքի պաշտպանվածության որոշակի աստիճան:
- սոցիալական մեկուսացում և ապաինտեգրում²⁰. արհեստական բանականության լայն կիրառման շնորհիվ հնարավոր գործողությունների ավտոմատացումը կարող է նվազեցնել մարդկանց՝ միմյանց հետ փոխգործակցելու պահանջմունքները: Դրա

¹⁹ Philipp Hacker and Bilyana Petkova, Reining in the Big Promise of Big Data: Transparency, Inequality, and New Regulatory Frontiers, 15 NW. J. TECH. & INTELL. PROP. 1 (2017). <https://scholarlycommons.law.northwestern.edu/njtip/vol15/iss1/1> (Accessed: 10.05.2022)

²⁰ Philipp Hacker and Bilyana Petkova, Reining in the Big Promise of Big Data: Transparency, Inequality, and New Regulatory Frontiers, 15 NW. J. TECH. & INTELL. PROP. 1 (2017). <https://scholarlycommons.law.northwestern.edu/njtip/vol15/iss1/1> (Accessed: 10.05.2022)

մասին է վկայում այն, որ հասարակությունը բավական արագ անցում կատարեց օնլայն հաղորդակցմանը և հրաժարվեց սոցիալական մի շարք սովորույթներից: Մինչդեռ առողջ հասարակությունը կառուցվում է վստահելի մարդկային հարաբերությունների, փոխադարձ էմպաթիայի և փոխըմբռնման վրա,

- մարդկային բանականության դեգրադացում. Արհեստական բանականության աստիճանական զարգացմանը զուգընթաց անխուսափելի է մարդկային ուղեղի որոշ հնարավորությունների աստիճանական սահմանափակումը, քանի որ հայտնի է, որ մտավոր ու ֆիզիկական աշխատանքի բազմազանությունը մարդու ուղեղը զարգացնելու գործառնությունի: Մարդու առօրյա կենսագործունեության ընթացքում հեշտ հասանելի աջակցող գործիքների առկայությունը բացասաբար կազդի մարդկային ուղեղի հետագա կատարելագործման վրա:

Ամփոփում

Որպես տեխնոլոգիական առաջընթացի միտում՝ արհեստական բանականության ներթափանցումը պետական կառավարման ոլորտ անխուսափելի է: Միաժամանակ ակնհայտ են դրա ներուժային դրական ազդեցությունները, ճիշտ այնպես, ինչպես ակնհայտ է, որ համաշխարհային մրցակցային թատերաբեմում արհեստական բանականությունն է այն հիմնական գործոնը, որի շուրջ ծավալվելու է հետագա մրցապայքարը: Այս տեսանկյունից պետական

քաղաքականության առաջնահերթությունների թվում արհեստական բանականության զարգացումն ու հանրային կառավարման ոլորտում ներդրումն անհետաձգելի անհրաժեշտություն են: Սակայն մյուս կողմից կարևոր է արհեստական բանականության օգտագործման «անվտանգության կանոնների» պահպանումը: Ընդ որում այդ նպատակով օրենսդրաիրավական հիմքերի և համապատասխան ենթակառուցվածքների ձևավորումը պետք է մեկ քայլ առաջ լինի բուն ԱԲ տեխնոլոգիաների կիրառումից, հակառակ դեպքում հետևանքները կարող են ավելի շուտ բացասական, քան դրական լինել:

Ընդհանուր առմամբ ԱԲ-ն՝ իբրև մարդկային քաղաքակրթության խոշորագույն նվաճում, նախորդող շատ այլ վիթխարի նշանակության ձեռքբերումների (արտադրության գործիքների, տեխնոլոգիաների, լայն սպառման առարկաների) նման ուղղված է ամբողջական աշխատանքի արտադրողականության և մարդկանց կենսագործունեության որակի բարձրացմանը: Սակայն այն հարկ է գործադրել այնպես, որ հանրության մեջ չստեղծվի սոցիալական ու անվտանգային լարվածություն, ավելին՝ նպաստի աշխատանքի պայմանների բարելավմանը, աշխատանքային շաբաթվա տևողության կրճատմանը, ըստ այդմ՝ մարդու հանգստի և ստեղծագործական ժամանակի ավելացմանը, նոր, բարձր, ինտելեկտուալ աշխատատեղերի ստեղծմանը, մարդկության անվտանգության մակարդակի և պաշտպանվածության աստիճանի բարձրացմանը:

ԳԼՈՒԽ 3.

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ ՀԱՅԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ

3.1. ՀՈՎՀԱՆ ՕԶՆԵՑՈՒ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ (Հովհան Օձնեցու գահակալության 1300-ամյակի առթիվ)*

Տասներեք դար առաջ ընտրվեց Հայ առաքելական եկեղեցու 34-րդ ղեկավարը՝ Հովհաննես Գ. Օձնեցին, որին վիճակված էր բացառիկ դեր խաղալ հայ ժողովրդի պատմության մեջ: Տեսական-իմաստասիրական դատողություններով և հրապարակային ելույթներով, վարչական և դիվանագիտական նպատակամետ միջոցառումներով Օձնեցին մեծապես ամրապնդել է Հայոց եկեղեցու դավանաբանական հիմքերը և կազմակերպական կառույցները, կարողացել է Բյուզանդիայի և Արաբական խալիֆայության պես հակառակորդ տերությունների շահերի միջև հակասությունները հմտորեն գործադրել հոգուտ հայության կյանքի ապահովության և հավատքի անաղարտության, իր բազում մեծագործությունների և սրբակենցաղ կյանքի համար սրբադասվել արդեն կենդանության օրոք:

* Առաջին անգամ հրապարակվել է «Պատմաբանասիրական հանդես»-ում (2018, թ. 1) փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վ. Ա. Միրզոյանի համահեղինակությամբ:

Հովհան Օձնեցու կյանքը և կառավարչական գործունեությունը գնահատելու համար մեզ հարկավոր է լավ պատկերացնել Ը դարի սկզբի Հայաստանի քաղաքական և սոցիալ-տնտեսական վիճակը: Հայոց պետությունը վերացել էր 428 թ. Արշակունիների արքայատոհմի անկմամբ, վերականգնման փորձերը հաջողություն չէին բերում՝ հայոց նախարարական տոհմերի անմիաբանության պատճառով, արաբական արշավանքներն ավերածություն էին գործել Հայաստանում, Արաբական խալիֆայությունը ծանր հարկեր էր սահմանել հայ ժողովրդի համար: Արևմտյան հարևանը՝ Բյուզանդիան, թեպետ ընդհանուր առմամբ, թուլացել էր, սակայն ամեն կերպ ձգտում էր գրավել հայերին՝ միջոցների շարքում շահարկելով քրիստոնեական հավատքի (իբր) ընդհանրությունը, ուստի և առանձնահատուկ թիրախ էր դարձրել հայ եկեղեցու ինքնուրույնությունը: Եվ պիտի ասել, որ քաղկեդոնականությունն արդեն իսկ արմատներ էր ձգել Աղվանքում և Սյունիքում: Աշխուժացել էին հերձվածողները և աղանդավորները, որոնց գործունեությունը լուրջ սպառնալիք էր հայոց դավանաբանական միասնության համար: Բնավ չէին վերացել հակասությունները նաև հայոց վերնախավի ներսում, մասնավորապես ավանդաբար բյուզանդամետ և պարսկամետ նահապետական տների կենտրոնախույս ձգտումների միջև: Այս պայմաններում ահա Հայ առաքելական եկեղեցին շատ ավելի կենտրոնաձիգ, կարող ենք, թերևս, ասել «պետականամետ» գտնվեց (որքան էլ դա տարօրինակ է հնչում պետականությունից զուրկ ազգային-կրոնական համայնքի համար), իսկ նորընծա կաթողիկոսը շատ ավելի շրջահայաց քաղա-

քականագետ և պետական գործիչ եղավ, քան հինավուրց նախարարական տոհմերը:

Այսպիսի պայմաններում էր վիճակված ապրել և գործել Գուգարաց աշխարհի Տաշիրք Օձուն գյուղականում ծնված Հովհաննեսին, որը, կրթություն ստանալով ժամանակի նշանավոր աստվածաբաններից մեկի՝ Թեոդորոս Քոթենավորի մոտ, այնուհետև, ինչպես վկայում է Լեոն. «...սեփական աշխատանքով, ինքնագարգացմամբ այնքան մեծ հմտություն ձեռք բերեց, այնքան լավ մշակեց և ընդարձակեց իր ընդունակությունները, որ դարձավ հայ եկեղեցու ամենանշանավոր հայրերից մեկը, որ գործում էր և գրչով»¹: Եվ հիրավի, Հովհան Իմաստասեր Օձնեցին հայոց պատմության մեջ երևելի տեղ է զբաղեցնում թե՛ որպես մեր եկեղեցու հավատքի հիմքերը հզորացնող մեծագործ հովվապետ (717 – 728 թթ.), թե՛ որպես հայ տեսական մտքի գաղաթներից մեկը: Ոչ միայն իր կառավարման 11-ամյա ժամանակաշրջանի անցուղարձը, այլև հայ ժողովրդի պատմության հետագա տասնամյակների ընթացքը մեծավ մասամբ պայմանավորված են նրա վարչական և գրական գործունեության բարերար պտուղներով: «Իմաստասեր» պատվանունը նրան տրվել է միանգամայն արժանվույն, հիրավի ընդգրկուն փիլիսոփայական մտածելակերպի, բանավոր և գրավոր խոսքի կառուցման ճարտարության և արտահայտման նրբագեղության համար²: Եվ հարկ է նկատել,

¹ **Լեոն**, Հայոց պատմություն // Երկերի ժողովածու, հատ. 2, Եր., 1967, էջ 465:

² Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցին մեզ է փոխանցում նաև «Հովհաննես մեծ Իմաստասեր» ձևը (*Հովհաննես Դրասխանակերտցի*, Հայոց պատմություն, Եր., 1996, էջ 103):

որ Հովհան Օձնեցին ոչ թե իրական կյանքի խնդիրներից կտրված, վերացական դատողություններին տրված մի իմաստասեր էր, այլ հասարակական-քաղաքական հորձանուտների մեջ ընկղմված, հայ եկեղեցու և հայ հասարակության ամենակենսական հարցերով մտահոգ հոգևոր առաջնորդ, Հայաստանի արտաքին քաղաքականությունը շահեկանորեն ուղղորդող հմուտ և եռանդուն դիվանագետ, փաստորեն իր ժամանակի հանրային կառավարման համակարգի հենասյուներից մեկը: Կարևորելով հանդերձ տեսական փիլիսոփայության ասպարեզը, հատկապես տրամաբանության հարցերը, քաջահմուտ և կորովի բանավիճելով դավանաբանական նրբին հարցերի շուրջ՝ Օձնեցին, այնուամենայնիվ, հակված է եղել դեպի գործնական փիլիսոփայությունը, հանրային կյանքի կառավարման ամբողջականացմանը որոշակի սկզբունքների լույսով:

Հովհան Օձնեցին արգասաբեր գործունեություն է ծավալել շատ ասպարեզներում: Հանրային կյանքի կարգավորման տեսակետից առավել կարևորն այն է, որ նա է հենց առաջինը միավորել և կազմել ամբողջական «Կանոնագիրք Հայոցը»՝ փաստաթղթերի բացառիկ ժողովածուն, որ հետագայում լրացվել և հարստացվել է³: ԻԱ դարից հետահայաց դիտարկումը հիմք է տալիս եզրակացնելու, որ վարքակարգավորիչ նման ձեռնարկումը վկայում է Օձնեցու լայն աշխարհայացքի, ամենից առաջ՝ հանրային կյանքը ոչ թե կամաժին և կամայական որոշումներով, այլ օրենքների ոգով կարգավորելու նրա դիրքորոշման մասին: Իրավունքի և բարոյականության ներդաշնակ համադրումը, քրիստոնեա-

³ Տե՛ս *Կանոնագիրք Հայոց* / Սշխատասիրությամբ Վ. Հակոբյանի, Եր.: ՀՄՍՀ ԳԱ հրատ., հատ. Ա, 1964, հատ. Բ, 1971:

կան վարդապետության և աշխարհիկ վարվեցողության հիմնավոր ազուցումը «Կանոնագիրք Հայոց»-ին հաղորդում են անգուգական նշանակություն, վկայում արդեն հեռավոր Ը դարում հայ իրավական, փիլիսոփայական և կառավարչական մտքի տեսական բարձր մակարդակը, արժանանում երախտապարտ սերունդների գնահատանքին և ակնածանքին⁴:

Ինչպես հայտնի է, հայկական պետականության պայմաններում Հայ առաքելական եկեղեցուն վերապահված էր Մեծն դատավարության լիազորությունը, իսկ պետականության կորստից հետո եկեղեցին դարձավ քրիստոնեական հավատքի և ավանդույթների, հայ հանրության համակեցության կանոնների կարգավորման ու պահպանման, լայն առումով՝ ազգապահպանման գլխավոր կենտրոն: Ուստի օբյեկտիվ անհրաժեշտությամբ եկեղեցին և եկեղեցական գործիչները պետք է մտահոգվեին իրենց վերապահված լիազորության իրագործման համար իրավական հիմքի ստեղծման, իսկ օտար իշխանությունների պայմաններում՝ նաև հոգևոր-եկեղեցական, տնտեսական-քաղաքացիական հարաբերությունները կարգավորելու նպատակով համա-

⁴ Տե՛ս **Հ. Գաբրիելյան**, *Հայ փիլիսոփայական մտքի պատմություն*, հատ. 1, Եր., 1956, **Ե. Սահակյան**, *Հովհան Օձնեցի*, Ալավերդի, 1993, **Մ. Պասյան**, *Հովհան Իմաստասեր Օձնեցի*, Եր., 1998, **Ռ. Ավագյան**, *Հայ իրավական մտքի գանձարանը* (մ.թ.ա. IX – XIX դդ.), հատ. 1, Եր., 2001, Սուրբ Հովհան Օձնեցի Հայրապետը և իր ժամանակը, Ս. Էջմիածին, 2004, **Յու. Սուվարյան**, **Վ. Միրզոյան**, *Հանրային կառավարման տեսություն և պատմություն*, Եր., 2013, **Մ. Օրմանյան**, *Հայոց եկեղեցին*, Եր., 2016, **Գ. Շախկյան**, *Հայրապետական աթոռին փառքը*, Եր., 2017, *Հայ եկեղեցու Սուրբ Կաթողիկոսները*, Վաղարշապատ, 2017, Սբ. Հովհաննես Գ. Օձնեցի // <http://www.qahana.am/am/leaders/show/953201247/0>

պատասխան կանոնակարգերի մշակման ու գործադրման կարևոր խնդիրներով: Ինչպես վկայում են պատմական աղբյուրները, եկեղեցական ժողովները, որոնց ավանդաբար մասնակցել են հոգևորականները և աշխարհիկ շերտերի ներկայացուցիչները (իշխաններ, ազատներ), ընդունել են որոշումներ մարդկանց համակեցության ձևերի, եկեղեցական ներքին կյանքի և ծիսակատարությունների, ամուսնության և ընտանիքի, անգամ ժառանգական և քաղաքացիական իրավունքի, եկեղեցականների և աշխարհականների վարվեցողության եղանակների վերաբերյալ: Այդ որոշումները կամ առանձին կրոնական խոշոր գործիչների գրությունները (նամակներ, շրջաբերականներ) հայ մատենագրության մեջ արտահայտել են «կանոն» բառով, ուստի կանոնների համախմբումը կոչվել է «Կանոնագիրք»: Կանոնական որոշումներ են ընդունվել Աշտիշատի (Դ դար), Շահապիվանի (Ե դար), Դվինի (Ջ և Է դարեր), Պարտավի (Ը դար), Սսի (1243 թ.), Ջազավանի (1268 թ.), Երուսաղեմի (1651 թ.) և այլ եկեղեցական ժողովներում, կանոնական գրություններ են թողել Գրիգոր Լուսավորիչը, Սահակ Պարթևը, Հովհան Մանդակունին, Դավիթ Ալավկա որդին և այլ երևելի գործիչներ:

Ձեռնամուխ լինելով կանոնական որոշումների ամփոփմանը՝ Հովհան Օձնեցին նախ՝ հիմնավորում է դրա հանրային անհրաժեշտությունը. «Քանի որ տեսնում եմ, թե ինչպես է շատացել անկարգությունը բազմաթիվ և դժվարին բաներում, ոչ միայն ժողովրդի, այլև ավելի շատ մանուկների ուխտի և եկեղեցու առաջնորդների միջև»⁵: Այնուհետև

⁵ Տե՛ս **Հ. Օձնեցի**, Ատենաբանություն // Հ. Օձնեցի, Երկեր, Եր., 1999, էջ 25:

Օձնեցին հանգամանորեն բնութագրում է մինչ Ը դարի 10-ական թվականներն ընդունված կանոնական որոշումները, հիմնավորում իր գլխավորությամբ հերթական՝ յոթերորդ միաբանական ժողովի (726 թ., Մանազկերտ) անցկացման անհրաժեշտությունը և դավանաբանական հիմնադրույթները⁶: Դրանց խորապատկերին արդեն հստակ շարադրվում են «Կանոնագիրք Հայոցի» ամբողջականացման նպատակները: Նախ՝ «աստվածախոսունակ» հոգևորականների կրթության նպատակը. «...որպեսզի վարդապետական կոչման համաձայն առընթեր լինեն նաև այն պատվիրանների գումարումները», ապա՝ վերլուծական նպատակը. «...ուսումնասիրող մարդկանց առաջ քաշած բազմաքնին խնդիրները իմ աշխատանքով սիրով ուզեցի ի մի բերել»⁷: Կանոնագրքի մեջ Օձնեցու ձևակերպած կանոնախմբում (32 կանոնից բաղկացած) կարդում ենք ամենակարևոր նպատակադրումը՝ հայոց առաքելական հավատքի անսասանության և ավանդական ծիսակարգի անաղարտության ապահովումը. ամենից առաջ՝ «չխոնարհել յայլ ազգաց քրիստոնեից յաւանդութիւնս», «չառնել նորաձեւս ինչ»⁸:

Այս նպատակադրումները, իհարկե, հեռահար ազդեցության էին, ուղղված էին հանրային կյանքի կարգավորմանը, ամենից առաջ՝ հոգևոր անկախության ամրապնդմանը: Հայոց հովվապետի գերնպատակն էր, ինչպես արդարացիորեն նկատում է Կանոնագրքի հրատարակման երախտավոր Վազգեն Հակոբյանը, միննույն դավանանքի

⁶ Տե՛ս **Հ. Օձնեցի**, Հայաստանում տեղի ունեցած ժողովների մասին // **Հ. Օձնեցի**, Երկեր, Եր., 1999:

⁷ **Հ. Օձնեցի**, Հիշատակարան // **Հ. Օձնեցի**, Երկեր, Եր., 1999, էջ 201 – 202:

⁸ Կանոնագիրք Հայոց, հատ. Ա, էջ 519:

ներքո համախմբել հայերին, պահպանել նրանց ու հայ եկեղեցու ինքնուրույնությունը և անկախությունը արաբների և բյուզանդացիների միջև Հայաստանը նվաճելու համար մղվող պատերազմների, քաղկեղոնության ու զանազան աղանդների դեմ պայքարի ընթացքում. «Ազգային ավանդական կարգ ու կանոնով, սովորություններով իրականացնել հասարակական-քաղաքական որոշակի նպատակներ, այս է Կանոնագրքի այն ժամանակվա քաղաքական և գործնական նշանակությունը, որը մի ցույց էր ընդդեմ քաղկեղոնության՝ մասնավորապես և Բյուզանդական կայսրության նվաճողական քաղաքականության՝ ընդհանրապես»⁹: Հարցի մյուս կողմն էլ կա. չէ՞ որ Կանոնագիրքը ստեղծվեց արաբական գերիշխանության պայմաններում: Ուրեմն որքա՞ն հնարամիտ է եղել Հովհան Օձնեցին, որքա՞ն նրբորեն է խաղարկել արաբական խալիֆայության և Բյուզանդիայի միջև հակասությունները. «Հենց նրա շրջահայաց գործունեությամբ էր, որ Օմայան խալիֆայությունը հանդուրժեց շարիաթին չադերսվող, նրան հակոտնյա ազգային կանոնագրքի ստեղծումը հպատակ Հայաստանում, այն դիտելով իբրև իր ախոյան Բյուզանդիայի դեմ հայերի քաղաքական և գաղափարական դիմակայությունը զորացնող կոմաններից մեկը»¹⁰:

Խնդիրը, այսպիսով, հասունացել էր, լուծումը պատմականորեն հրամայական էր դարձել: Եվ փաստորեն, կամոքն Աստծո, այս խնդրի լուծումը վիճակվեց մի մարդու,

⁹ Տե՛ս Կանոնագիրք Հայոց, հատ. Ա, էջ XV:

¹⁰ Վ. Վարդանյան, Հայ եկեղեցու պետաիրավական և գաղափարական շահերի պաշտպանությունը Հովհաննես Օձնեցու կողմից // Սուրբ Հովհան Օձնեցի Հայրապետը և իր ժամանակը, Ս. Էջմիածին, 2004, էջ 20:

որն ունենալու դրա համար անհրաժեշտ բոլոր նախադրյալները՝ իշխանական դիրք, անսասան կամք, հանրային կյանքի բոլոր բնագավառները որպես ամբողջական մի համակարգ ընկալելու հիրավի փիլիսոփայական կարողություն, գրական ձիրք և ճաշակ, ամենակարևորը՝ հզոր հավատ և բոլորանվեր ծառայության պատրաստակամություն:

Ընդհանուր առմամբ, եթե Հովհան Օձնեցու իմացաբանական հայացքների առումով գրականության մեջ արձանագրված է որոշ անհետևողականություն¹¹, սակայն հանրային կյանքի ըմբռնման սոցիալ-փիլիսոփայական հայեցակարգը միանգամայն կոտ է և հետևողական. հանրային կյանքը դիտվում է որպես համակարգ, որի մտավոր-հոգևոր կենտրոնը, ուստի և համակեցության բնականոն կազմակերպման փաստացի առաջնորդը Հայ առաքելական եկեղեցին է: Այս հայեցակարգի շրջանակներում էլ հարկավոր է գնահատել նրա սոցիալ-փիլիսոփայական հայացքները և հասկանալ, որ հակապավլիկյանականությունը դրանց ոչ թե հիմնական բնութագիրն է¹², այլ ածանցյալ, ժամանակի հրամայականով արծարծված թեմա: Ըստ Օձնեցու՝ ինչպես որ քրիստոնեական շիտակ հավատքի մեջ չկա երկվություն, այնպես էլ հանրության կյանքի կազմակերպման մեջ պիտի գործի մեկ-միասնական ուղղորդող սկզբունք, ինչը միանգամայն հստակ է. «Որի համար եւ հարկավոր է հաճութամբ ու հավատքով գնալ այն ամենի հետևից, ինչ Քրիստո-

¹¹ Տե՛ս **Հ. Գաբրիելյան**, Հայ փիլիսոփայական մտքի պատմություն, հատ. 1, էջ 552:

¹² «Առհասարակ, Օձնեցու փիլիսոփայական հայացքների բնորոշ կողմը հակապավլիկյանականությունն է» (**Հ. Գաբրիելյան**, Հայ փիլիսոփայական մտքի պատմություն, հատ. 1, էջ 544 – 545):

սից է գալիս»¹³: Եվ այդպէս գործելիս հանրային կյանքում տեղ չպիտի ունենան ապականիչ աղանդները և օտարամուտ շարժումները. «Որովհետև խոստովանում ենք Բանի և մարմնի մեկ բնություն, Աստված կատարյալ և մարդ կատարյալ, և անբաժանաբար միավորված հստակ միացած բնությամբ և անշփոթ միությամբ, անսկիզբն սկզբի հետ, Բանը մարմնի հետ»¹⁴: Եվ ահա այսօրինակ միաբանության գերնպատակն էլ հաղորդված է Կանոնագրքին, և նաև վերջինիս հանրային դերակատարման ամենաստույգ ձևակերպումն է. «Թող սա լինի մեր խոստովանիչ հավատի կանոնն ու գիրը, և թող սա լինի մեր Հայաստան աշխարհի ամենքիս ավանդը»¹⁵:

Անգերագանցելի վարպետությունն է բնորոշ Հովհան Օձնեցու փաստարկման արվեստին: Հին Աթենքից՝ ճարտասանության ձևավորման օրրանից մեզ են հասել խոսքի կառավարչական ուժը դրվատող դատողություններ և այն փաստացի գործադրելու եղանակների նկարագրություններ: Ահա և Սոկրատեսի, Դեմոսթենեսի, Էսքինեսի, Լիսիասի ասույթների կողքին անվարան դնենք Օձնեցու հիասքանչ համեմատություններից մեկը, որն առնչվում է պավլիկյանների աղանդի՝ «խոսք որսացողների դրժողությունները» հիմնովին հերքելու եղանակին: Հոգևոր մտածումները, ըստ Օձնեցու, հարկավոր է պատշաճորեն մարմնավորել խոսքի մեջ՝ որպես այդ խոստոված լեզվագարների վրա ամենաազդեցիկ միջոցի. «Այլև նրանցից ընտրված ամենակորովին՝ խոսքի պատեհությունը, այն դնելով մեր

¹³ *Հ. Օձնեցի*, Ատենաբանություն, էջ 28:

¹⁴ *Հ. Օձնեցի*, Հայաստանում տեղի ունեցած ժողովների մասին, էջ 211:

¹⁵ Նույն տեղում, էջ 217:

իմաստության պարսատիկի մեջ, ուղղաձիգ նետելով ջախ-ջախենք նրանցում ամենաբարձր և ամենավեր կանգնածը՝ չարը պաշտող գլուխը»¹⁶:

Դավանաբանական բանավեճերում միանգամայն հստակ է Օձնեցու դիրքորոշման իմաստասիրական հիմքը: Ըստ նրա՝ ինչպես երևութականները, այնպես էլ պավլիկյաններն աղավաղում են տեսանելիի և անտեսանելիի կապը: Մասնավորապես նյութն ինքնին չի կարող լինել պաշտամունքի առարկա, ուստի այդօրինակ կռապաշտությանը (նաև հենց պավլիկյանների կողմից ուղղադավան քրիստոնյաների հասցեին ներկայացվող՝ կռապաշտության համար մեղադրանքին) Օձնեցին հակադրում է անբեկանելի հակափաստարկներ. «Երբ տեսնում եմ քարից կամ ոսկուց պատրաստված խաչ, կամ էլ պատկեր, մի՞թե իմ հույսը քարի կամ ոսկու վրա եմ դնում.... Անկենդան նյութերը չէին կարող կենդանի մարդկանց օգնության շնորհ մատուցել, եթե Աստված բնակված չլիներ նրանց մեջ»¹⁷: Այս հավատո հանգանակը Օձնեցին նաև հստակորեն ձևակերպել է Կանոնագրքում, իր շարադրած կանոնախմբի ԻԷ հոդվածում՝ որպես ծիսակարգի պարտադիր նորմ. «Եթե ոք խաչ արասցե փայտեայ եւ կամ յինչ եւ իցէ նիւթոյ, եւ ոչ տացէ քահանային աւրինել եւ աւծանել զնա միւռոնովն սրբով, ոչ է պարտ զնա ի պատիւ ընդունել կամ երկրպագութիւն մատուցանել, զի դատարկ եւ ունայն է յաստու-

¹⁶ **Հ. Օձնեցի**, Ընդդեմ պավլիկյանների // Հ. Օձնեցի, Երկեր, Եր., 1999, էջ 145:

¹⁷ Նույն տեղում, էջ 139, 141:

ծային զարութենէն եւ արտաքոյ աւանդութեան առաքելական եկեղեցոյ»¹⁸:

Քրիստոսաբանության առանցքային հարցերից մեկին՝ աստվածայինի և մարդկայինի փոխհարաբերության ըմբռնմանը, Օձնեցին բացառիկ ուշադրություն է դարձրել՝ հանգամանորեն պարզաբանելով «մի բնութիւն Բանին Աստուծոյ մարմնացելոյ» հիմնադրույթը¹⁹: Աստված մարմնավորվեց, այսինքն՝ անտեսանելին դարձավ տեսանելի՝ «կամենալով այդպես աշխարհին երևալը դարձնել առհավատչյա իր աներևութապես գալստյան, որին աշխարհը չկամեցավ աչքի տեսածը դարձնել սրտի տեսողության ճանապարհ»²⁰: Այս անցման էությունը հարկավոր է ճիշտ ըմբռնել՝ ճշմարիտ հավատքի հիմքը հասկանալու համար. «Այլ այն, որ կար, առանց անտեսելու, եղավ այն, ինչ չկար: Եվ այս ձևով ամենաբարձրյալին հաճելի եղավ խոնարհությունը. բարձրության վրա մնալով՝ նույն ինքը գտնվեց նույն խոնարհության մեջ»²¹: Սա չհասկացող, հոգով և մտքով խավարածի հասցեին Օձնեցու ախտորոշումն աֆորիզմի աստիճանի նրբագեղ է. «Այլ ակամա կուրություն է ցանկանում՝ անտեսանելիների տեսնող լինելու, և կամավոր կուրություն է փնտրում՝ տեսանելիների տեսնող չլինելու համար»²²: Այս ձևակերպումը ոչ միայն աստվածաբանի դիրքորոշում է,

¹⁸ «Կանոնագիրք Հայոց», հատ. Ա, էջ 532:

¹⁹ Տե՛ս *Եզնիկ Եպս. Պետրոսյան*, Ս. Հովհան Օձնեցու ուսմունքը Քրիստոսի բնությունների մասին // Սուրբ Հովհան Օձնեցի Հայրապետը և իր ժամանակը, Ս. Էջմիածին, 2004:

²⁰ *Հ. Օձնեցի*, Ընդդեմ պավլիկյանների, էջ 140:

²¹ *Հ. Օձնեցի*, Ընդդեմ երևութականների, էջ 75:

²² Նույն տեղում, էջ 73:

այլև խորունկ փիլիսոփայի, քանի որ լավագույնս պարզաբանում է նյութական աշխարհի հանդեպ միակողմանի ռացիոնալիզմին բնորոշ այդ «կամավոր կուրության» վնասակարությունը²³:

Շատ տպավորիչ համեմատությամբ և սքանչելի լեզվով է նկարագրում Օձնեցին Աստծո տաճարի և կուռքերի մեհյանների տարբերությունը. վերջիններս որոշակի ախտերի ծնունդ են, կառուցվել են՝ մարմնավորելու համար մարդկային ազահությունը, բարկությունը, այլ արատներ, «...այնինչ եկեղեցիները կառուցվեցին հավատացյալների աստվածասիրության փափագով, որի համար էլ Աստված այնտեղ գալով դադար է առնում, և երկնային դասակից հրեշտակները պարում են նրանցում»²⁴:

Բանավիճելիս Օձնեցին երբեմն չի խնայում դիմացինին, իսկ երբեմն էլ մերժվող տեսակետը կրողների հանդեպ խիստ վերաբերմունք է պարտադրում, ինչպես հետևյալ օրինակում. «Պետք չէ չարաղանդ մծղնեականների, որ կոչվում են պավլիկյաններ, վայրերում գիշերել, կամ էլ (նրանց հետ) շփվել, խոսակցել և երթուգալ ունենալ: Այլ ամբողջովին հեռու մնալ նրանցից, խորշել և հեռու մնալ նրանցից. որովհետև սատանայի որդի են և հավիտենական կրակի վառիչ, և օտարացել են Արարչի սիրո կամքից: Եթե մեկը լինի, որ հարի նրանց, և (նրանց հետ) սիրո և բարե-

²³ «Հայ փիլիսոփայության պատմության մեջ սա շատ կարևոր դրույթ էր: Օձնեցու նախորդները չկարողացան այդպիսի պարզությամբ ու խորությամբ դնել միակողմանի ռացիոնալիզմի բացասական լինելու հարցը» (*Հ. Գաբրիելյան*, Հայ փիլիսոփայական մտքի պատմություն, հատ. 1, էջ 545 – 546):

²⁴ *Հ. Օձնեցի*, Ընդդեմ պավլիկյանների, էջ 135:

կամության մեջ լինի, պետք է այդպիսիներին խոշտանգել և ծանր պատուհասի առաջ կանգնեցնել, մինչև որ հավատի մեջ զգաստանան և առողջանան»²⁵: Այս վարքականոնը նույնությամբ շարադրված է Կանոնագրքում, Օձնեցու կանոնախմբի ԼԲ հոդվածում²⁶:

Օձնեցու դատողություններին (նաև Կանոնագրքի որոշ հոդվածներին) բնորոշ նմանօրինակ խստությունը պայմանավորված է, իհարկե, ոչ թե հակադիր տեսակետի տիրոջ անձնային հանգամանքներով, այլ բուն այդ տեսակետի և համապատասխան վարքագծի հանրային վտանգավորության չափով: Իսկ վերջինս ամենից առաջ այն էր, որ թե՛ հերձվածող երևութականները (ընդունելով եկեղեցուն՝ այդուհանդերձ խորքային դավանաբանական վեճի մեջ էին մտնում), թե՛ աղանդավորները՝ իրենց ուղղակի պայքարով եկեղեցու դեմ, վերջիվերջո հանգեցնում էին հեթանոսության վերականգնմանը: Հենց դա էլ կարևորում է Օձնեցին՝ իր երևակայական գրուցակցին (բանավիճող կողմին) բացատրելով խոսելակերպի խիստ տոնայնությունը. «Ապա նաև քեզ հետ որպես ինչ հարազատ բանավիճենք, որ դու ցանկանում ես մեզանից հեթանոսաբար առանձնանալ, և այն, որ հրաման ընդունեցինք, որ հեթանոսների ճանապարհով չգնանք»²⁷:

Հովհան Օձնեցու կազմած «Կանոնագիրք Հայոցը» բաղկացած է եղել 24 կանոնախմբից, Ժ դարի կեսին ընդլայնվել է և դարավերջին բովանդակում էր 40 կանոնախումբ, մինչև ԺԷ դարը ընդլայնվել ու խմբագրվել է, ընդ-

²⁵ Հ. Օձնեցի, Ատենաբանություն, էջ 67 – 68:

²⁶ Տե՛ս Կանոնագիրք Հայոց, հատ. Ա., էջ 534 – 535:

²⁷ Հ. Օձնեցի, Ընդդեմ երևութականների, էջ 92:

գրկել 98 կանոնախումբ: Ինչպես նշում են հետազոտողները, միջնադարում հայ մտածողների ստեղծած իրավագիտական հուշարձաններից միայն «Կանոնագիրք Հայոցն» է, որ դարերի ընթացքում ճանաչվել է որպես իրավաբանական ակտերի պաշտոնական ժողովածու: Այն որպես այդպիսին հետագայում ոչ միայն նպաստեց հասարակական-տնտեսական հարաբերությունների կարգավորմանը, հանրային կյանքի կանոնակարգմանը, այլև հիմք դարձավ իրավագիտական մտքի հետագա զարգացման համար: Այդ առումով ԺԲ-ԺԳ դարերում ստեղծված Մխիթար Գոշի և Սմբատ Սպարապետի «Դատաստանագրքերը» ապահովեցին հայ իրավագիտական մտքի զարգացման նոր փուլ՝ ներառելով պետական ու տարածքային կառավարման, քրեական ու քաղաքացիական իրավունքի կարևոր ոլորտները:

«Կանոնագիրք Հայոցի» ուսումնասիրությունից պարզվում է, որ դրանում ամրագրված կանոնախմբերը, ինչպես արդեն նշվել է, հիմնականում վերաբերում են կրոնական ծիսակատարությունների սկզբունքներին, եկեղեցու սպասավորների վարքագծին, ամուսնության, ընտանիքի, հոգևորականների և աշխարհականների բարոյական կերպարի ընդունելի նորմերին, համակեցության կանոններին, իսկ դրանք խախտելու համար իբրև պատիժ սահմանվում են ապաշխարանքը, նգովքը, բարոյական դատապարտումը:

Նկատենք հանրային կառավարման արդյունավետության առումով հույժ կարևոր այն հանգամանքը, որ Կանոնագրքում ամենախիստ պահանջներն են ներկայացվում իրենց հոգևոր հովիվներին. ըստ Սահակ Պարթևի կանոն-

ների՝ այդպիսիք պիտի լինեն բարեպաշտ, առաքինի, պարկեշտ, ուսումնասեր, զերծ արծաթասիրության և կաշառքի ախտից, որ կարողանան այլոց ուսուցանել, եկեղեցու շուրջ համախմբել, աստվածահաճո վարքուրարք ձևավորել²⁸։ Եկեղեցու սպասավորները պիտի խուսափեն ամեն չարից, հետամուտ լինեն արդարության պահպանմանը, այդկերպ լինեն օրինակ աշխարհականների համար և նրանց ցույց տան փրկության ուղին. «Եղիցի մեզ ամենեցուն խոյս տալ եւ փախչել ի չարէն եւ արդարութեանն լինել հետամուտ, յամենայն ժամ ի հաճոյս Աստուծոյ ծախել զկեանս մեր, զի անձանց եւ այլոց բազմաց լիցիմք առիթ փրկութեան»²⁹։ Ինչպես տեսնում ենք, եկեղեցին այսկերպ հստակորեն վավերացրել է իր համակարգաստեղծ դերակատարումը հանրային կառավարման բովանդակ համակարգում և նաև ստանձնել սեփական պատասխանատվությունն իր գործառույթների անբասիր իրականացման համար։

Այս դատողությամբ շեշտադրված է նաև սեփական օրինակի կարևորությունը՝ որպես այլոց վարքի ազդակի։ Փաստորեն Կանոնագիրքն ամրապնդում է հայ կառավարչական մտքի ավանդական դրույթներից մեկը, որի ձևակերպումն առաջինը տվել է Եզնիկ Կողբացին տակավին Ե դարում։ Հանրության կյանքի համար չկա ավելի մեծ չարիք, քան առաջնորդի՝ թեկուզ ինքնին անտարակուսելիորեն ճշմարիտ խոսքի և փաստացի արված գործի հակասությունը, քանի որ մարդիկ դա տեսնում են և նրա մասին ավելի են հակված գործով, քան խոսքով դատելու. «զի

²⁸ Տե՛ս Կանոնագիրք Հայոց, հատ. Ա, էջ 368։

²⁹ Նույն տեղում, էջ 374 – 375։

մարդիկ յօրինակն առաւել հային, քան ի ճշմարտութիւն»³⁰: Եվ ընդհակառակը, շիտակ հոգևոր առաջնորդը ունակ է բարեփոխելու միջավայրը, ամեն չարիք և ախտ վանելու. «Հոգևոր առաջնորդ՝ աստուծային հուր է, զապականարար ախտն այրէ.... և ինքն ըստ հաւատարիմ ծառային թագաւորէ»³¹: Ահա այս միտքը՝ վատ, հոռի առաջնորդի վարքագծի մերժումը և, հակառակը, շիտակ առաջնորդի օրինակելի վարքի, հավատարիմ սպասավորության հիմնավորումը կարմիր թելի պէս անցնում է բազմաթիվ կանոններում՝ հակադրության շատ տպավորիչ ոճական հնարքի միջոցով. «Կառաւար արբեալ՝ կառքն ընդ որպէս ընթանան: Նաւավար ի քուն՝ նաւն երագ ծովածուփ: Խաշնարած յոյլ՝ խաշինքն զվնասու խոտ ճարակին: Զի եթէ առաջնորդք արինացն հաստատուն եւ ճշմարիտ, ապա եւ կարգեալքն ընդ նոքաւք առաւելապէս ոչ սայթաքեալք»³²:

Կանոնախմբերում նաև հոդվածներ կան կաշառակերության, մաքսեր և տուրքեր սահմանելու և դրանց բաշխման մասին: Այսպէս, Գրիգոր Լուսավորչին վերագրվող կանոններից (301–325 թթ.) մեկը վերաբերում է կաշառք վերցնողին. «Եթէ քահանան կամ աշխարհականը կաշառք առնի, թող Սիմոն կախարդի անեծքը վրան թափի, Հուդային կցորդ լինի...»³³: Աշտիշատի կանոնադիր ժողովում (356 թ.) ընդունված կանոններից չորրորդը վերաբերում է մաքսեր և տուրքեր սահմանելուն. «Որբերի և այրի-

³⁰ *Եզնիկ Կողբացի*, Եղծ աղանդոց, Եր., 1994, էջ 258:

³¹ Նույն տեղում:

³² Տե՛ս Կանոնագիրք Հայոց, հատ. Ա, էջ 458:

³³ *Ռ. Ավագյան*, Հայ իրավական մտքի գանձարանը (մ.թ.ա. IX – XIX դդ.), հատ. 1, էջ 98:

ների համար որոշեց կառուցել որբանոցներ, այրիանոցներ և դրանց պահելու համար նշանակեց առանձին տուրքեր և հարկեր»³⁴:

Ուշագրավ է տուրքերի սահմանման արդարացի և մարդասիրական սկզբունքը: Աղվանքի արքա Վաչագանի «Կանոնական սահմանադրության» (488 թ.) «Դ» գլխում ամրագրված է. «Քահանային ժողովրդի կողմից (տուրք) տալու կարգը այսպես է լինելու. ունևորը պետք է տա չորս գրիվ ցորեն, վեց գրիվ գարի, տասնվեց փաս քացու [5.32 լ խաղողի հյութ], իսկ նա, ով հացապակաս է, դրա կեսը պետք է տա.... Վար ու ցանք և այգի չունեցողից չպետք է առնեն, իսկ նա, որ իր հոգու համար սրանցից ավելին կտա, բարիք կանի»³⁵: Ազատների տուրքը եկեղեցու և վանքի միջև բաժանելու համար պահանջվում է. «Եթե ազնվականները տասանորդ են տալիս, պետք է մի մասը բուն գլխավոր եկեղեցուն տան, մյուս մասը՝ իրենց եկեղեցուն»³⁶: Հանգուցյալի տանը անպատշաճ լացուկոծը պիտի կասեցվի, իսկ տանուտերը և երաժիշտը՝ պատժվեն³⁷:

Շեղվող վարքագծի դրսևորումների հանրային արձագանքի առումով շատ կարևոր է, որ կանոնական պատիժները տարբերակված են՝ ըստ հանցանքի տեսակի և տարիքի: Ներսես կաթողիկոսի կանոններում, օրինակ, հացի դեզը այրողը պիտի ապաշխարի յոթ տարի, իսկ տունն իր գույքով այրողը՝ տասը³⁸: Շահապիվանի ժողովի ընդունած կա-

³⁴ Նույն տեղում, էջ 108:

³⁵ Նույն տեղում, էջ 138:

³⁶ Նույն տեղում, էջ 141:

³⁷ Կանոնագիրք Հայոց, հատ. Բ, էջ 96:

³⁸ Նույն տեղում, էջ 260 – 261:

նոններից ԺԹ հռչակածն աղանդավոր ընտանիքի չափահաս անդամների համար նախատեսում է ազատագրվում և այլ պատիժներ, սակայն անմեղ երեխաները, որ չէին կարող գիտակցաբար մասնակցել պիղծ արարքներին, ազատվում են պատժից և հանձնվում վերադաստիարակության. «...եւ մանկունքն որ չեւ իցեն գիտեցեալ զպղծութիւն, կալցին եւ տացին ի ձեռս սուրբ պաշտաւնէից Աստուծոյ, ու սնուցեն եւ ուսուցեն զնոսա ի հաւատս ճշմարիտ եւ յերկիւղ Տեառն»³⁹: Նկատենք նաև, որ արդեն Դ դարում մեր նախնիները փաստորեն տարբերակել են դիտավորյալ և ոչ դիտավորյալ («ոչ կամաւ») սպանությունները⁴⁰: Եթե հավատուրացը կամ այլ հանցանք կատարած չարագործն ականջալուր չի լինում խրատին, չի զոջում, չի ապաշխարում, ապա արժանի է մահապատժի. «Եթէ ոք ի կախարդութեան գտցի այլ կամ կին, եւ յուրացութեան կամ յայլ չարագործութեան, եւ ի զոջումն եւ յապաշխարութիւն ոչ եկեացեն՝ ըստ գրոց հրամանի քարկոծ լիցին»⁴¹: Հովհան Օձնեցու կանոնախմբի Ա, Բ, Գ և Դ կանոններն ուղղված են եկեղեցականների և աշխարհականների շրջանում հարբեցողության դեմ. մարմնական զեխությանը տրվածը իրավունք չունի օրհնություն և հաղորդություն ստանալու. «...մինչեւ աւուրս ընդ մէջ արարեալ սրբեացէ՝ զինքն ապաշխարութեամբ, պահաւք եւ աղաւթիւք», իսկ եթե համառի, ապա պետք է պատժի ենթարկվի⁴²:

39 Կանոնագիրք Հայոց, հատ. Ա, էջ 462:

40 Տե՛ս **Ռ. Ավագյան**, Հայ իրավական մտքի գանձարանը (մ.թ.ա. IX – XIX դդ.), հատ. 1, էջ 262:

41 Կանոնագիրք Հայոց, հատ. Ա, էջ 440:

42 Տե՛ս նույն տեղում, էջ 516 – 517:

Կանոնագիրքն առանձնացնում է այն դեպքերը, երբ մեղավորը պիտի անպայման պատժվի, բայց միաժամանակ նախատեսում է նաև հորդորի, խրատի պատշաճ գործադրում. վարդապետին երբեմն հարկ չկա մեղավորին աճապարանք անիծել, «ապա խաղաղասեր վարդապետն բարեսեր խրատու բարեխաւսութիւն արասցէ հնազանդեցուցանել ընդ բուն վարդապետան»⁴³: Կամ երբ պսակադրվողներն են խախտում կարգը, անտեսում սուրբ օրերի խորհուրդը, նրանք պիտի պատժվեն, միաժամանակ չի բացառվում պատժի մեղմացումը. «Եվ եպիսկոպոսը, դա իմանալով, ինչպես որ կամենա, կարող է մարդասեր լինել նրանց հանդեպ»⁴⁴: Պատժի և ներողամտության համադրումը՝ որպես հանրային կյանքում «կառավարման սուբյեկտ – կառավարման օբյեկտ» փոխհարաբերության ըմբռնման սոցիալ-փիլիսոփայական կարևոր սկզբունք և վերջինիս ճկուն գործադրումը՝ որպես հանրային կյանքի արդյունավետ կառավարման եղանակ, Օձնեցին վերստին հիմնավորում է մեկ-միասնական սկզբունքով, այն է՝ Արարչի սեփական վարվելակերպով. «Քանզի տեսնում ենք, որ Աստված առհասարակ երկու կերպ է վարվում՝ ներողամտությամբ և վրեժխնդրությամբ, ոչ ամեն տեղ, ժամանակ կամ ամենքի դեմ է, որ դրանցից մեկին կամ երկուսին է դիմում, այլ լինում է երբեմն, որ դրանցից մեկին կամ մեկով, ինչպես որ հարմար է գտնում Աստծու կանխատեսությունը»⁴⁵:

Չենք կարող, հիրավի, չհպարտանալ այն բանով, որ տակավին Ե դարում հայ հոգևորականության հանրային

⁴³ Նույն տեղում, էջ 460:

⁴⁴ *Հ. Օձնեցի*, Ատենաբանություն, էջ 48:

⁴⁵ *Հ. Օձնեցի*, Ընդդեմ պավլիկյանների, էջ 142:

պատասխանատվության զգացումը և իրավական գիտակցությունն այնքան զարգացած են եղել, որ լիովին ճշգրիտ են ըմբռնել ու մեկնաբանել ամուսնության և ընտանիք կազմելու հիմքերը, ամենից առաջ՝ կողմերի փոխադարձ ցանկությունը: Մասնավորապես Սահակ Պարթևի կանոնախմբի ԻԷ և ԻԸ հոդվածները պահանջում են քահանաներից՝ չկատարել երիտասարդ զույգի պսակադրությունը, եթե նրանք նախապես միմյանց չեն տեսել ու հավանել, իսկ եթե դա ծնողների կամքով է արվում, «բռնադատությամբ ծնողացն», իսկ քահանան էլ ինչ-ինչ պատճառաբանությամբ կատարում է պսակադրությունը, ապա պատժի են ենթարկվում թե՛ քահանան և թե՛ ծնողները⁴⁶:

Կանոնագրքում կարևորվում են նաև կրթության խնդիրները: Սահակ Պարթևն իր մշակած կանոններում անհրաժեշտ է համարում դպրոցների կազմակերպումը⁴⁷, Աշտիշատի ժողովի որոշման Ժ գլխում պահանջվում է «Երկրում լուսավորություն տարածելու նպատակով՝ ողջ Հայաստանում բաց անել հունարեն և ասորերեն լեզուներով դպրոցներ»⁴⁸: Ընդ որում կրթությունը ներառում է նաև բարոյական արժեքների սերմանում և արատների մերժում. «Ուսուցեք եւ զժողովրդականս յամենայն անառակութենէ ի բաց փախչել՝ յորկորստութենէ, յարբեցութենէ, ի հակառակութենէ, ի զրկելոյ զաղքատս եւ զընկերս իւրեանց»⁴⁹:

⁴⁶ Տե՛ս Կանոնագիրք Հայոց, հատ. Ա, էջ 382 – 383:

⁴⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 372 – 373:

⁴⁸ Տե՛ս **Ռ. Ավագյան**, Հայ իրավական մտքի զանձաբանը (մ.թ.ա. IX – XIX դդ.), հատ. 1, էջ 109 – 110:

⁴⁹ Կանոնագիրք Հայոց, հատ. Ա, էջ 381:

Կրթվածության պահանջը, ինչպես ասվեց, Կանոնագիրքը քանիցս կրկնում է վարդապետների համար⁵⁰:

Վերոշարադրյալը նշանակում է, որ «Կանոնագիրք Հայոցը» ընդգրկել է հանրային կյանքի ընդարձակ շրջանակ՝ ներեկեղեցական գործունեությունից մինչև աշխարհիկ հասարակական-տնտեսական հարաբերություններ՝ էապես նպաստելով ազգային ավանդույթների, դավանանքի, հայ եկեղեցու ինքնուրույնությանը, հայկական ինքնության պահպանմանը, համակեցության գործնական կառավարման բազմաթիվ խնդիրների լուծմանը, այլ նաև կարևորագույն նշանակություն է ունեցել հայ իրավագիտական ու կառավարչական մտքի զարգացման ասպարեզում: Իհարկե, իրավակիրառական առումով Կանոնագրքի բազմաթիվ դրույթներ հիմնականում պատմական արժեք ունեն, և վերընձյուղված պետականության պայմաններում եկեղեցու և պետության փոխհարաբերությունները կարգավորվում են ՀՀ սահմանադրությամբ և օրենքներով, այդուհանդերձ բարոյական բովանդակության առումով դրանք պահպանում են իրենց արդիականությունը: Ավելին, Կանոնագիրքն ազգային ինքնաճանաչման տեսակետից անսպառելի մի շտեմարան է, որի վերլուծությամբ կարող ենք հասկանալ հայ մարդկանց հոգեբանության, կենցաղի, ընտանեվարության, նրանց միջև հանրային տարբեր դերերում գոյացող փոխհարաբերությունների առանձնահատկությունները:

Այնպես որ բնավ էլ զուր չէին «Կանոնագիրք Հայոց»-ի մասին իր իսկ՝ Հովհան Օձնեցու պատկերավոր կարծիքն ու հորդորը ընթերցողին՝ «անմոռացաբար» հիշել. «...սա գանձ

50 Տե՛ս Կանոնագիրք Հայոց, հատ. Ա, էջ 424, 459, հատ. Բ, էջ 239 – 240:

է, որ ցեցը և ուտիճը չեն փչացնի, այլ գանձ է ստացողին, որի սիրտը վեր, դեպի երկնայինը կտանի»⁵¹: Անցած տասներեք դարն ասվածի լավագույն հաստատումն է, և ինչպես Օձնեցին է երախտագիտությունն արտահայտել Տիրոջը՝ իրեն իշխանություն պարգևելու համար, որը նա, ի թիվս այլ ազգանպաստ արարումների, գործադրել է նաև նման կոթող ստեղծելու համար, երախտապարտ սերունդներս նույնպես պիտի ոչ միայն հարգանքի տուրք մատուցենք հայոց մեծերից մեկին, այլև գործադրենք մեզ ավանդված այդ գանձը հանուն հայոց ազգային միաբանության, հավատքի անսասանության և պետականության հավիտենականության:

51 Հ. Օձնեցի, Հիշատակարան, էջ 202:

3.2. ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

(Ելույթ «Հայաստանի Ա Հանրապետության
100-ամյակ» գիտաժողովում, Անթիլիաս,
մարտի 21-23, 2018 թ.)

Վեհափա՛ռ Տեր,
Մեծարգո՛ սուրբ հայրեր,
Հարգելի՛ գործընկերներ:

Սկսում ենք Հայաստանի Հանրապետության 100-ամյակին նվիրված համաժողովի հաջորդ նիստը «Հանրապետության պետաիրավական կառուցվածքը և ներքին դրությունը» խորագրով: Այդ առթիվ իբրև ներածական թու՛յլ տվեք խիստ հակիրճ բնութագրել Առաջին հանրապետությունում հանրային կառավարման համակարգը և սոցիալ-տնտեսական քաղաքականության առանձնահատկությունները:

Ավելի քան մեկ ու կես հազարամյակի պետականության փորձ ունեցող հայ ժողովուրդը 100 տարի առաջ չորրորդ անգամ վերականգնեց իր անկախ պետությունը պատմական Հայաստանի արևելյան մասում՝ Կիլիկյան հայկական թագավորության անկումից 543 տարի հետո:

Հարկ է նշել, որ եթե և՛ հին, և՛ միջնադարյան Հայաստանում պետական կառավարման համակարգը միապետական-ժառանգական բնույթ ուներ, ապա նորաստեղծ հանրապետությունում ստեղծվեց եվրոպական քաղաքակրթությանը համահունչ հանրային կառավարման համակարգ. ձևավորվեց օրենսդիր մարմինը (Հայաստանի խոր-

հուրդը՝ 1918թ. օգոստոսի 1-ից, իսկ 1919 թ. օգոստոսից՝ ընտրովի պառլամենտն իր 12 հանձնաժողովներով), կազմավորվեց գործադիր իշխանությունը՝ կառավարությունը: Ըստ Ս. Վրացյանի՝ 1919 թ. ամռանը Հայաստանն արդեն կազմավորված պետություն էր՝ բաժանված 10 գավառի՝ Երևան, Էջմիածին, Դարալագյազ, Նոր Բայազետ, Դիլիջան, Ղարաքիլիսա, Ալեքսանդրապոլ, Կարս, Զանգեզուր, Սուրմալու, որոնցից յուրաքանչյուրն ուներ կառավարման տարածքային մարմիններ ու վարչություններ¹: Ժամանակակից ընկալմամբ ստեղծվել էր տեղական ինքնակառավարման համակարգը, որով զբաղվում էր ներքին գործերի նախարարությունը: Ա. Խատիսյանի ձևակերպմամբ. «...տեղական ինքնավարության վերաբերյալ օրինագծի հիմք ընդունված էր անոր կատարյալ անկախությունը, անոր հանձնված էին տեղական սահմաններու մեջ մեկ քանի գործառնությունները, պաշտոնները»²:

Դատական իշխանությունը ևս կայացել էր. Գավառներում գործում էին հաշտարար դատարանները, Երևանում՝ շրջանային դատարանը, Դատաստանական պալատը, սենատը:

Չորրորդ իշխանությունը՝ մամուլը ևս ձևավորվում էր:

Այսպիսով, ամբողջանում էր ժողովրդավարական հիմունքներով կառուցված հանրային կառավարման համակարգը՝ օրենսդիր և գործադիր իշխանության թևերով, տեղական ինքնակառավարման, դատական ու չորրորդ իշխա-

¹ Տե՛ս *Վրացյան Ս.*, Հայաստանի Հանրապետություն, Փարիզ, 1928, էջ 320-321:

² Տե՛ս *Խատիսյան Ա.*, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968, էջ 134:

նության մարմիններով՝ իրենց վերապահված լիազորություններով ու գործառնություններով: Հանրային կառավարման վերաճած նման առաջադիմական պետական կառավարման համակարգի ստեղծումը հինգ ու կես դար պետականություն չունեցած ժողովրդի համար պատահական չէր և ոչ էլ որևէ երկրի փորձի կրկնօրինակում էր: Հայ մտավորականները, մտահոգված պետականության վերականգնման հույժ կարևոր խնդրով, ստեղծել են ապագա անկախ Հայաստանի պետական կառավարման սահմանադրական հիմունքներ, տեղական ինքնակառավարման սկզբունքներ: Այս իմաստով անկախ պետության սահմանադրության ստեղծման արժեքավոր փորձ է Շ. և Հ. Շահամիրյանների «Որոգայթ փառաց» (1773 թ.) աշխատությունը, որտեղ հիմնավորվում է խորհրդարանական կառավարման համակարգի անհրաժեշտությունը՝ քաղաքացիական հասարակության այնպիսի հիմնարար սկզբունքների վրա, ինչպիսիք են օրենքի գերակայությունը, արդարությունը, մարդու իրավունքների հարգումը: Այն ժամանակ, երբ եվրոպական երկրների մեծ մասում պետական կառավարման համակարգը միապետական բնույթ ուներ, երբ ֆրանսիական բացարձակապետության փոխարեն առաջին անգամ 1792 թ. հռչակվեց հանրապետություն, երբ Անգլիայում դեռևս պառլամենտական միապետություն էր, իսկ ԱՄՆ-ում երկրի սահմանադրությունը պետք է ընդունվեր միայն 1787 թ. հռչակելով դաշնային հանրապետության ծնունդը, «Որոգայթ փառացում» առաջարկվում էր ստեղծել պառլամենտական հանրապետություն՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանություններով:

1908 թ. Կոստանդնուպոլսում հրատարակված Ս. Զավարյանի «Ապակենտրոնացում» աշխատությունում հիմնավորվում են տեղական ինքնակառավարման անհրաժեշտությունը և պետական կառավարման ժողովրդավարացման սկզբունքները: Ըստ Ս. Զավարյանի. «Ամեն տեղ **երկրի ազատության աստիճանը** կապված է տեղական ինքնավարության աստիճանին: Բավական է հիշել, որ **բռնապետական երկրներու մեջ բնավ չկա** տեղական ինքնավարություն, **չափավոր** սահմանադրական երկրներու մեջ **սահմանափակ** է տեղական ինքնավարությունը, իսկ Զվիցերիո մեջ, ուր կատարյալ է ազատությունը, կատարյալ է նաև տեղական ինքնավարությունը»³: Այսպիսի օրինակներ էլի կարելի է վկայակոչել, սակայն նշվածը բավարար է ընդհանրացնելու, որ հանրային կառավարման ստեղծված համակարգը ստեղծագործական երկարամյա մաքառումների, ինչպես նաև պետական կառավարման զարգացման միտումների ճշգրիտ հաշվառման արդյունք էր:

Ուսումնասիրություններից ակնհայտ է դառնում, որ Հայաստանի Առաջին հանրապետության տարիներին տրնտեսական քաղաքականության հիմքում մասնավոր սեփականատիրական հարաբերությունների գերակայությամբ շուկայական տնտեսակարգի գաղափարախոսությունն էր, սակայն որոշակի սոցիալական ուղղվածությամբ՝ պայմանավորված իշխող քաղաքական ուժի՝ ՀՅԴ-ի իբրև սոցիալիստական կուսակցության ծրագրային դրույթներով: Դա ապացուցվում է կառավարության հայտարարած սոցիալ-

³ Տե՛ս **Զավարյան Ս.**, Երկեր, Ե., ԵՊՀ հրատ., 1991, էջ 33:

տնտեսական քաղաքականության հետևյալ հիմնական դրույթներով.

- խրախուսել մասնավոր կապիտալի մուտքը երկիր,
- կարգավորել հարկային համակարգը՝ կիրառելով՝ աճող եկամտահարկ, հաստատել ուղղակի հարկեր՝ ի հաշիվ անուղղակի հարկերի,
- աջակցել կոոպերատիվներին, զարգացնել արտադրողական ուժերը,
- իրականացնել կալվածատիրական, եկեղեցապատկան, վանքապատկան և մասնավոր գինեգործական հողերի ազգայնացում՝ բաժանելով դրանք սակավահող գյուղացիությանը՝ ըստ չափի և կարիքի,
- ստեղծել ամենամատչելի պետական վարկ՝ մի շարք ձեռնարկություններ շահագործելու և գործարկելու, գործադրկության դեմ պայքարելու, աշխատանքի վարձատրության կենսական նորմեր կիրառելու նպատակով,
- պետական օգնություն ցուցաբերել աշխատավոր դասակարգին՝ հատկապես բնական աղետներից քայքայված տնտեսությունը վերականգնելու համար,
- արմատավորել ընդհանուր, պարտադիր, անվճար տարրական կրթություն, զարկ տալ մասնագիտական ուսուցմանը:

Անշուշտ, իրական քաղաքականության ոլորտում կարևորվում էր երկրագործության, անասնապահության, արդյունաբերության, մասնավորապես հանքարդյունաբերության, սոցիալական ծառայությունների՝ կրթության, առողջապահության, մշակույթի զարգացումը:

Հայաստանի Առաջին հանրապետությունը, թեև պատմաքաղաքական հանգամանքների բերումով գոյատևեց երկուսուկես տարի, դարձավ այն հիմքը, որի վրա բարձրացան Երկրորդ (1920-1990թթ.) և Երրորդ (1991 թ. սկսած) հանրապետությունները:

3.3. ՇՈՒՇԻՈՒՄ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ԱՌԹՎ

(ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական
գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար,
ակադեմիկոս Յուրի Սուվարյանի ողջույնի խոսքը
«ԱՂԲԵԶԱՆԻ ՑԵՂԱՍՊԱՆԱԿԱՆ ՎԱՐՔԸ.
ՊԱՏՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»
գիտաժողովում, հուլիսի 15-16, 2020 թ.)

Ողջունում եմ գիտաժողովի բոլոր մասնակիցներին։ Արձանագրենք, որ վաղուց սպասված միջազգային գիտաժողովը վերջապես կայանում է՝ դատելով ծրագրից և զեկուցումների պատկառազորու հեղինակների և թեմատիկ ընդգրկման լայն շրջանակից։ Կարելի է հուսալ, որ մեր գիտաժողովի հիմնական նպատակը, որը, իմ կարծիքով, 100 տարի առաջ տեղի ունեցածը գնահատելն է, դրա պատճառները, ցեղասպանության հանցագործության հետևանքները և պանթուրքիզմի հեռագնա նպատակները պարզաբանելը, կկարողանանք իրագործել։ Այսօր, ավելի քան հրատապ է համապատասխան գնահատականներ տալու հենքի վրա դիմել միջազգային հանրությանը, որպեսզի ձեռնարկվեն մարդասպանների նկատմամբ համապատասխան իրավական միջոցառումներ, և նաև ապահովվի հատուցում 1915 թ. և հետագա ցեղասպանությունների կորուստների համար։

100 տարի առաջ՝ մարտի 23-ին, տեղի է ունեցել մի ահավոր սպանդ. Շուշիում հրդեհվել են հայ բնակչության

7000 տներ: Երբեմնի ծաղկուն 7000 տուն՝ ականատեսների ու պատմաբանների տեղեկություններով: Շուրջ 35 հազար հայ բնակչության մի զգալի մասը ոչնչացվել է: Երևի մեր աղետոյալ ժողովրդի բախտը մի փոքր բերել է նրանով, որ այդ օրը Քարինտակի ձորում մառախուղ էր, որի քողի տակ ոմանք կարողացել են փրկվել: Ի դեպ, հայրս նույնպես 1912 թ. ծնվել է Շուշիում, 8 տարեկան էր, երբ ականատես է եղել այդ ջարդերին: Մշուշի քողարկվելու հնարավորությունից օգտվելով՝ տատս մի կերպ փրկել է իր երեխաներին՝ փախչելով դեպի Քարինտակ: Շատերը, որոնց հետագայում ես հանդիպել եմ, օրինակ՝ պրոֆեսոր Առաքելյանը, որ այն ժամանակ թեմական դպրոցի դասատու էր, հետո դարձավ մանկավարժական համալսարանի արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչ, անձամբ է պատմել, թե ինչ սոսկալի վիճակում էր Շուշին այդ օրերին, և թե ինչպես է ժողովրդի մի մասը կարողացել մազապուրծ փախչել: Ի դեպ, եթե կարդաք շուշեցի Վաղարշ Վաղարշյանի հուշերը, որոնք վերնագրված են այսպես. «Ընկերներս, բարեկամներս և ես», արժեքավոր տեղեկություններ կիմանաք ընդհանրապես Շուշիի կյանքի և մասնավորապես այն մասին, թե ինչպես են նրա հորը՝ հացթուխ Բոգդանին, սպանել ու զցել իրենց բակի ջրհորը: Սարսափելի դաժանություն, բայց դա թուրքի ձեռագիրն էր, որը մեզ հայտնի էր վաղուց: Ո՞րն էր թուրքերի ոճրագործությունների պատճառը: Դրա պատճառը, ըստ իս, ուղղակի այն էր, որ հայ ազգին պատկանող բնատարածքը թուրքերը փորձում են զավթել: Թուրքական զավթողական քաղաքականության շարունակություն էր նաև Շուշիի կործանման հիմնական պատճառը: Սպասվում էր մեկ ամիս հետո՝ ապրիլի 28-ին, Ադրբեջանում բոլշևիկ-

յան կարգերի հաստատումը: Նոր իշխանությունների պայմաններում գուցե կոժվարանար այդ ոճրագործությունը կատարելը: Պատմական Արցախը չէր մտնում Ադրբեջանի արհեստականորեն ստեղծված հանրապետության կազմի մեջ, որի ռեակցիոն կառավարությունը գտնում էր, որ եթե այդպես շարունակվի, ապա պատմական Արցախի՝ որպես ռազմավարական տարածքի նկատմամբ իրենց անհիմն հավակնություններն ի դերն կելնեին, ուստի նպատակադրվել էին հայ բնակչության այդ հատվածը ոչնչացնել, ինչպես 1915 թ. Թուրքիայում, որպեսզի տարածքը կարողանային զավթել: Եվ հանցագործի սառնասրտությամբ նրանք ավերեցին Շուշին՝ դարձնելով այն ուրվականների քաղաք: Տակավին անցած դարի 60-ականների վերջերին ես անձամբ տեսել եմ Շուշիի սրտակեղեք ավերակները: Թուրք ջարդարարները և ադրբեջանցիների հանցագործ նախնիներն անողորձաբար ավերեցին, թալանեցին երբեմնի ծաղկուն քաղաքը, կոտորեցին հայ ազգաբնակչությանը, բայց իրենց գերնպատակին չհասան, որովհետև արցախցիներն ամուր են և մինչև այսօր պայքարում են իրենց երկրի անկախության, մայր Հայաստանին միանալու համար: Ի դեպ, արցախցիների այդ պահանջը շատ բնական է, որովհետև դեռ սկսած 5-րդ դարից, երբ Արշակունյաց թագավորությունը վերացավ, ստեղծվեց հայկական մի պետություն, բոլորդ գիտեք, Արցախի և Ուտիքի պետությունը Վաչագան Բարեպաշտի թագավորությամբ, դրան հաջորդեց Խաչենի իշխանությունը, հետո հաջորդեցին Խամսայի մելիքությունները, այսինքն՝ մինչև 1813 թ. Արցախի բնակչությունը կիսաանկախ ապրում էր, գոյատևում, արարում, ոչ մի դեպքում չէր կարող հանդուրժել հետամնաց, թափառական ցե-

ղերի արհեստականորեն ստեղծված պետության կազմի մեջ մտնելը: Հենց այդ պետության ղեկավարները 1920 թ. մարտին ձեռնարկեցին քստմենտի քայլը՝ ցեղասպանության ոճրագործությունը: Դա դարձավ արցախյան հիմնախնդրի սկիզբը, և Շուշիի հայ բնակչության ցեղասպանության 100-րդ տարելիցի առթիվ մենք նաև պիտի արձանագրենք, որ միևնույն ժամանակ դա Արցախյան շարժման ավելի քան մեկ դարն է, որովհետև 1918 թ. սկսված պայքարի գագաթնակետը 1920 թ. մարտյան եղեռնագործությունն էր, որով թաթարները և թուրքերը միասին կարծում էին, թե խնդիրը կլուծեն այդ եղանակով: Բայց խնդիրը չկարողացան և չէին էլ կարող լուծել, որովհետև, թեև Շուշին դատարկվեց, հայ բնակչության մի մասը փախավ հարևան գյուղերը, մյուս մասը՝ Հյուսիսային Կովկաս, բայց Արցախի մնացած շրջանների գյուղական բնակչությունը քիչ չէր, որը շարունակեց պայքարը, որի արդյունքում հասանք հիմնախնդրի միջանկյալ լուծման. 1923 թ. պատմական Արցախի միայն մի մասի վրա ստեղծվեց ինքնավար մարզ: Ինքնավար մարզի հայ ազգաբնակչության հանդեպ արդեն Ադրբեջանական ԽՍՀ իշխանությունների ահաբեկչական, խտրական ու բռնատեղահանման քաղաքականությունը տարբեր դրսևորումներով ու հնարներով գործադրվեց խորհրդային իշխանության տարիներին:

Մայր Հայաստանին վերամիավորվելու շարժումը, որը միշտ էլ ընդհատակում շարունակվում էր, նորից արտահայտվեց 1988-ին, արդեն բացահայտ, իսկ 1990-ականների սկզբին ազատագրական պայքարով հայ ազգաբնակչությունն իր հայրենակիցների աջակցությամբ կարողացավ նվաճել Արցախի անկախությունը: Բայց այդ պայքարի

սկիզբը կարելի է համարել 1918-1920 թթ., այսինքն՝ Արցախյան շարժումը ոչ թե սկսվել է, ինչպես կարծում են ոմանք, միայն 1988-ին, այլ 102 տարի առաջ: Եվ Շուշիի խնդրո առարկա ոճրագործությունը պետք է դիտարկել այդ համատեքստում:

Գիտաժողովի կազմկոմիտեն մշակել է բանաձևի շատ սուր ու հիմնավորված տեքստ, որի նախագիծը ձեզ կներկայացվի և բոլոր մասնակիցների հավանությանն արժանանալուց հետո պետք է դառնա այս գիտաժողովի ընդունած հանրագումարային փաստաթուղթը: Ի դեպ, մի անգամ էլ ընդգծեմ, որ այս ողբերգական իրադարձությանը երբեք այսպիսի լուրջ գիտաժողովի մակարդակով անդրադարձ չի կատարվել, և կարծում եմ, որ այս առցանց գիտաժողովի արդյունավետ աշխատանքով կստեղծվի նման եղանակով անցյալի դասերը վերաիմաստավորելու ավանդույթ:

Հաջորդ խնդիրը պիտի լինի այն, որ գնանք ոճրագործությունների հետքերով, միջազգային հանրությունից պահանջենք ցեղասպանության այդ ակտի դատապարտում և հատուցում: Հայաստանում, Երևանում գործող մասնագիտացված թանգարան-ինստիտուտում ստեղծենք մի առանձին սրահ՝ նվիրված Շուշիի ցեղասպանությանը, որին մեծ թվով մարդիկ են գոհ գնացել:

Արդիական է մնում Արցախյան շարժումը շարունակելը և իր տրամաբանական ավարտին հասցնելը, քանի որ անկախության համար պայքարը, ըստ էության, դեռ չի ավարտվել, քանի որ Ադրբեջանն անընդհատ փորձում է հարցը սրել, ձգտում է նորից վերանվաճել պատմական Արցախը, ոչնչացնել այնտեղ արդեն շուրջ երեք տասնամյակ արարվող հայկական պետականությունը:

Մենք պետք է մեր զեկուցումները, մեր հարցադրումները կառուցենք այդ ոգով և մեր ծանրակշիռ խոսքը հասցնենք միջազգային հանրության գիտակցությանը, որ սա նոր խնդիր չէ, սա ուղղակի ազգային-ազատագրական պայքար է, ինքնորոշման իրացման համար պայքար է, հետևաբար՝ այս խնդիրը մենք պիտի միշտ պահենք հրատապ վիճակում և անընդհատ անդրադառնանք դրա իրավաքաղաքական ու պատմական փաստարկներին և դրանք հանրահռչակելու, միջազգային գիտական համակարգում ինտեգրելու նպատակով կազմակերպենք նման գիտաժողովներ:

Շուշին, իհարկե, XIX դարում խոշոր մշակութային կենտրոն էր, երկրորդը Թբիլիսիից հետո, Հարավային Կովկասում, պատմական Հայաստանի տարածքում, թեև տխուր փաստ է, բայց այդպես է, միակը մինչև 1920 թվականը: Այնտեղ է գործել հռչակավոր Խանդամիրյան թատրոնը, իսկ մինչ այդ թատերական խմբերի ձևով այդտեղ են բեմել XIX դարի խոշորագույն հայ արտիստները, որոնց անունները գիտեք, ես չեմ ուզում թվարկել: Այնտեղ է գործել Ռեալական ուսումնարանը, որը տվել է աշխարհին հռչակավոր գիտնականներ, որոնք, սովորելով եվրոպական երկրներում, Ռուսաստանում, դարձել են խոշոր գործիչներ: Մի խոսքով՝ Շուշիի ներդրումը հայ մշակութային, գիտական կյանքում վիթխարի է, և չի կարելի երբևիցե հանդուրժել, որ Շուշիին նորից վիճակվի մի ճակատագիր, որը շատ տխուր է, անընդունելի. այն, Արցախի հետ միասին, երբեք չպիտի լինի Ադրբեջանի կազմում:

3.4. ՀԱՅԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՄԲ

**(Խոսք «Վենետիկի Մխիթարյան միաբանություն - 300»
միջազգային գիտաժողովում,
23-25 հոկտեմբերի, 2017 թ.)**

Գիտաժողովի հարգարժան մասնակիցներ և հյուրեր, ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի բյուրոյի անունից ջերմորեն ողջունում եմ ձեզ, մաղթում արդյունավետ աշխատանք և ստեղծագործական նոր ձեռքբերումներ:

Հիրավի, մեր ժողովուրդն ինքնապաշտպանական հրաշալի բնագդ ունի, տիրապետում է այդ նպատակով զանազան եղանակների ու կառուցակարգերի հատկապես այն ժամանակ, երբ կորցնում է պետականությունը: Այդպիսի փայլուն օրինակ էր Հ. Օձնեցու «Կանոնագիրք հայոցի» ձեռնարկումը (VIII դար), որը վիթխարի դեր կատարեց հանրային կյանքի կանոնակարգման, հայկական ավանդույթների ու ծեսերի, հայ ինքնության պահպանության համար:

1717 թվականին Վենետիկում ստեղծված Մխիթարյան միաբանությունը թեև ի սկզբանե կրոնական-լուսավորչական բնույթ ուներ, սակայն առաջին հերթին այն հայապահպանության, նաև հայ մտավոր մշակույթի զարգացման առաքելություն ուներ: Հիմնադիրը՝ Մխիթար Սեբաստացին, 16 տարի համառ ու հետևողական աշխատանք կատարեց, հաղթահարեց բազում խոչընդոտներ և հիմնա-

դրեց ու 32 տարի գլխավորեց մի հաստատություն, որն առայսօր կրոնական-լուսավորչական գործունեությանը զուգընթաց իրականացրել է և շարունակում է ծավալել հայագիտական հետազոտություններ՝ ստեղծելով լեզվաբանության, գրականագիտության, պատմության, աշխարհագրության, աղբյուրագիտության և այլ գիտաճյուղերի վերաբերյալ կոթողային, արդիականությունը չկորցնող աշխատություններ՝ Մ. Սեբաստացու «Բառգիրք հայկազյան լեզվի» (երկու հատոր), Մ. Չամչյանի «Պատմություն Հայոց» (3 հատոր), Ղ Ալիշանի «Քաղաքական աշխարհագրություն» և այլն:

Մխիթարյանները զբաղվել են նաև կրթական գործով՝ իրենց գործունեությունը շարունակող սերունդ պատրաստելու համար, այդ նպատակով ստեղծել են վարժարաններ (Մուրադ Ռափայեյան վարժարան և այլ նմանատիպ հաստատություններ տարբեր քաղաքներում): Հրատարակել են մեկ տասնյակից ավելի պարբերականներ, որոնցից ցայսօր հրատարակվում են նշանավոր «Բազմավեպ», «Հանդես ամսօրյա» գիտական հանդեսները: Այնքան արգասաբեր է Մխիթարյանների գործունեությունը, որ, ըստ ընդունված տեսակետի, հայագիտությունը որպես գիտական ուղղություն առաջացել է XVIII դարի սկզբին՝ նրանց արժեքավոր հետազոտությունների շնորհիվ: Ամենևին չստվերելով նրանց կատարածը, սակայն հարկ է նշել, որ նրանք շարունակել և համակարգել են հայ պատմիչների սկսած գործը, իսկ առաջին հայագետները Մ. Մաշտոցը և Մ. Խորենացին են:

Մխիթարյան միաբանության գործունեությունից արդիական խնդիրների լուծման նպատակով կարելի է կատարել երկու առանցքային ուշագրավ դիտարկում.

1. հայապահպանության և հայ մտավոր մշակույթի զարգացման համար Մխիթարյանները կարևորել են հայազիտության ու մյուս գիտաճյուղերի (աշխարհագրություն, աստղագիտություն) զարգացման անհրաժեշտությունը և այդ նպատակով ստեղծել են գիտակրթական հաստատություն, որը մեր այսօրվա Գիտությունների ազգային ակադեմիայի նախատիպն էր: Չունենալով պետականություն, անհրաժեշտ ռեսուրսներ՝ հայ գործիչները մեծ դժվարությամբ ստեղծել են նախադեպը չունեցող այդ կառույցը, որը վիթխարի դեր է կատարել հայ մտավոր մշակույթի զարգացման և հայապահպանության գործում: Ինչպես հայտնի է, Նապոլեոն Բոնապարտը, գիտակցելով Մխիթարյանների գործունեության կարևորությունը, հավանաբար նաև՝ մարդասիրական և մշակութային բնույթը, 1801 թ. օգոստոսի 17-ին իր ընդունած հրովարտական կարգադրել է պահպանել Վենետիկի Ս. Ղազար կղզու հայ միաբանների կարգավիճակը:

Այսօր ՀՀ ԳԱԱ ինստիտուտների գիտաշխատողները նոր և ապագա ժամանակների պահանջներով զարգացնում են հայ մտավոր մշակույթը, իրենց ավանդն են ներդնում համաշխարհային գիտության առաջընթացի ասպարեզում՝ շարունակելով Մխիթարյանների փառավոր ավանդույթները: XXI դարում այսքանից հետո արժե՞ անգամ մտածել կասեցնելու ՀՀ ԳԱԱ գործունեությունը:

2. Ներկայումս շատ է խոսվում գիտության և կրթության, նաև արտադրության միասնացման մասին:

Այդ աքսիոմատիկ ճշմարտությունը հայտնի է վաղուց, ինչն ապացուցել են նաև Մխիթարյանները՝ ստեղծելով բոլոր անհրաժեշտ ենթակառուցվածքներով գիտակրթական հաստատություն: Մեր օրերում հարկ է գտնել այդ եռամիասնության արդյունավետ կազմակերպման կառուցակարգը, ինչը կնպաստի թե՛ գիտության, թե՛ կրթության, հատկապես նորօրյա պահանջներին համապատասխանող կադրերի պատրաստմանը, թե՛ արտադրության վերելքին՝ հավատարիմ մնալով ազգային ավանդույթներին, մասնավորապես Մխիթարյան միաբանության 300 տարի շարունակվող գործելակերպին:

Ավարտելով խոսքս՝ մեկ անգամ ևս հաջողություն եմ մաղթում գիտաժողովին և հավերժություն Մխիթարյան միաբանության արդյունավետ գործունեությանը:

3.5. ԽՈՍՔ ՀԱՅՈՑ ՆԱՀԱՊԵՏԻ ՄԱՍԻՆ

**(ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական
գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար,
ակադեմիկոս Յուրի Սուվարյանի ողջույնի խոսքը
«ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆ – 200» գիտաժողովում,
6 հուլիսի 2020 թ.)**

Հարգելի՛ գործընկերներ, մենք մեր բաժանմունքով բազմաթիվ գիտաժողովներ ենք կազմակերպել: Ինչպես Հ. Թումանյանի ծննդյան 150-ամյակին նվիրված գիտաժողովի ժամանակ, այնպես և հիմա տիրում է նույն ոգևորությունը, որը պատահական չէ:

Երկու հարյուր տարի առաջ՝ ճիշտ այս օրը, ծնվեց մի անձնավորություն, ում ժողովուրդն անվանեց Հայոց Նահապետ: Նա վիթխարի ներդրում ունեցավ հայ գրականության և հայագիտության մեջ իր մոտ 45 հատոր կազմող գրական և գիտական ժառանգությամբ, որն արժեքավոր է նաև միջազգային տարողությամբ:

Ալիշանը, ունենալով հանրագիտակ գիտելիքներ, ոչ միայն լուրջ նվաճումների է հասել գրականության ասպարեզում, այլև գրականագիտության, պատմագիտության, պատմական աշխարհագրության: Բոլոր այս բնագավառներում աչքի է զարնում նրա խոր հայրենասիրությունը: Իր ողջ գիտական ժառանգությունը տոգորված է հայրենասիրությամբ, գիտականությամբ և գեղարվեստականությամբ, շնորհիվ որի նրա գործերը ձեռք են բերել մնայուն արժեք և անանց հմայք:

Բոլորիս քաջ հայտնի է, որ Ալիշանն իր 1840-50-ական թվականների բանաստեղծական գործունեությամբ դարձավ հայ նոր գրականության և հայկական ռոմանտիզմի հիմնադիրներից մեկը:

1850-ական թվականներից սկսած՝ նա իրեն առավելապես նվիրեց հայագիտությանը: Նախ՝ հրատարակեց հայ մի քանի պատմագիրների բնագրերը Ժամանակի ընդունված գիտական չափանիշներով:

Պատմաաշխարհագրական տեսանկյունից ներկայացրեց Հայաստանի նահանգները: Այս աշխատություններն այսօր ևս չեն կորցրել իրենց գիտական արդիականությունը: Տեղագրական հատորներից յուրաքանչյուրում սկզբից ներկայացվում են տվյալ նահանգի ֆիզիկական աշխարհագրությունը, բուսական և կենդանական աշխարհը, ապա աղբյուրագիտական առումով թվարկվում է, թե հայկական և եվրոպական ինչ աղբյուրներում հիշատակություններ կան այդ նահանգի և նրա մեջ մտնող գավառների առանձին բնակավայրերի մասին:

Ալիշանը հրատարակել է նաև ուշագրավ մի աշխատանք «Հայ Բուսակ» անվանմամբ, որում ներկայացրել է Պատմական Հայաստանի տարածքում աճող 3400 բույսի նկարագրությունը: Այն մեկ անգամ ևս գալիս է հավաստելու հեղինակի հանրագիտակ գիտելիքների մասին:

Ոչ միայն իր գործերի թեմատիկ բազմազանությամբ, այլև աշխարհագրական հատորներից յուրաքանչյուրում տարբեր գիտակարգերի վերաբերող նյութերին անդրադառնալը պահանջում է Ալիշանի գործերը ենթարկել միջգիտակարգային համալիր վերլուծության, որն այսօր այնքան

կարևորվում է մեր բաժանմունքի գիտական գործունեությունում:

Նման ծանրակշիռ աշխատություններով Ալիշանը գիտական մեծ ճանաչում ձեռք բերեց՝ դառնալով եվրոպական մի շարք գիտական ակադեմիաների պատվավոր անդամ:

Չնայած իր գիտական փառքին՝ նա ապրում էր Հայաստանի հանդեպ կարոտով, հայրենիքը տեսած չլինելու հայրենաբաղձ սիրով, որի մարմնավորումն է «Հայոց աշխարհիկ» պոեմը, որի հետևյալ երկու տողը կցանկանայի հիշեցնել Ձեզ.

***Հայրենեաց հարուստ է հող, ջուրն անուշ,
Քանց օտար վարդ քաղցր է հայրենեաց փուշ:***

Այս տողերը հայրենիքի հանդեպ կարոտի իսկապես ջերմ արտահայտություն են: Այսօր էլ մենք, մեր սերունդը, հատկապես այսօրվա նոր սերունդը, պետք է լավ կարդա այս տողերը, խորամուխ լինի դրանց մեջ: Ասվածը վերաբերում է «Նահապետի երգերի» ողջ շարքին, որպեսզի լցվեն հայրենասիրության նույն ոգով:

Ալիշանն իր գիտագեղարվեստական գործերով մնալուն խոր հետք թողեց մեր պատմության մեջ և այսօր էլ շարունակում է արդիական մնալ իր արտահայտած գաղափարներով:

Ալիշանի ընդգրկուն գիտագրական ժառանգությանը նվիրված այս գիտաժողովի աշխատանքներին հաջողություն եմ մաղթում:

3.6. ՄԵՐ ՀՆԱԳՈՒՅՆ ՀԱՐԵՎԱՆԸ

ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Յուրի Սուվարյանի ելույթը ՀՀ և ԻԻՀ միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովում)

Հարգարժան գործընկերներ, այսօր հավաքվել ենք գիտաժողովի մի չափազանց կարևոր թեմայով: Այս տարի լրանում է ԻԻՀ-ի և ՀՀ-ի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման երեսուն տարին: Իհարկե, մենք մինչև Քրիստոսի ծնունդը և դրանից հետո, որպես այս տարածաշրջանի հնագույն ժողովուրդներ՝ հայերը և իրանցիները, և հնագույն պետություններ՝ ունեցել ենք միջպետական հարաբերություններ: Հետո պատմական հանգամանքների բերումով ապրել ենք միասին, և ահա դիվանագիտական հարաբերությունների հաստատման այս իրադարձությունը մի նոր փուլ է մեր երկու ժողովուրդների հարաբերությունների մեջ: Սակայն այն իր նշանակությամբ չափազանց կարևոր է, նախ այն առումով, որ մենք բարեկամ ժողովուրդներ ենք: Երկրորդ, 90-ականներին էական էր ԻԻՀ-ի աջակցությունը մեր երկրին, և երրորդ, այսօր աշխարհաքաղաքական բարդ իրադրության պայմաններում մեր հարաբերությունը մեր հնագույն հարևանի հետ ամուր կառուցելը հնարավորություն կտա դիմակայելու սպասվող և տեղի ունեցող մարտահրավերներին: Այսօր Իրանի տարածքում գործում է հայկական համայնք, ապ-

րում են հայեր: Նրանք ունեն կրթական-մշակութային զարգացման բոլոր հնարավորությունները, պահպանվում են հայկական հուշարձանները, և այս առումով, իբրև պետություն, մեծ հարգանքով է վարվում իր հայ քաղաքացիների նկատմամբ: Դրա ապացույցն է այն, որ ունենք երկու հայ պատգամավոր Մեջլիսում և մի ուշագրավ փաստ, ըստ ավանդույթի, 13-րդ դարում Արաքսի երկու ափերին, դեմ առ դեմ, երկու հովիվ եղբայրներ կառուցել են մատուռներ: Այդ մատուռներից մեկը Ատրպատականում է, կանգուն է, ավելին, պետության աջակցությամբ վերականգնվել է և 2008 թ.-ից ներառված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության հուշարձանների ցանկում: Մյուս մատուռը, որը գտնվում է բոլձնիկների կողմից Ադրբեջանին նվիրված Նախիջևանի տարածքում, այսօր չկա և ավերվել է: Տեսե՛ք, մի փաստ, թե ինչպես է վերաբերվում մի հարևան մեզ, և ինչպես է մեզ վերաբերվում մյուսը: Սա սկզբունքային փաստ է, որը պետք է հաշվի առնել: Գիտաժողովի թեմաների ցանկում կան թեմաներ, որոնք վերաբերում են մեր՝ պատմական և մշակութային անցյալին, և աշխարհաքաղաքական սպասվող իրադարձություններին և մեր հարաբերությունների հեռանկարներին: Ողջունելով գիտաժողովի մասնակիցներին՝ այն հայտարարում եմ բացված:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան.....	3
---------------	---

Գլուխ 1.

Հայկական պետականության պատմության հարցեր

1.1. Հին և միջնադարյան Հայաստանում սահմանադրականության և հանրային կառավարման մասին: Պատմության դասերը.....	7
1.2. Հանրային կառավարումը XX դարում և XXI դարի առաջին քառորդում.....	30
1.3. Очерк истории государственности Арцаха и век карабахского движения.....	63

Գլուխ 2.

Հանրային կառավարման մեթոդաբանական խնդիրներ

2.1. Հանրային կառավարման քաղաքակրթական ու քաղաքագիտական կազմակերպման հիմնախնդիրները.....	74
2.2. Ռազմավարություն և կազմակերպական կառուցվածք.....	103
2.3. Զինված ուժերի ղեկավարումը ՀՀ հանրային կառավարման համակարգում.....	130
2.4. Հանրային կառավարման համակարգում արհեստական բանականության կիրառության հիմնախնդիրներ.....	151

Գլուխ 3.
Հանուն հայկական պետականության ու
հայապահպանության

3.1. Հովհան Օձնեցու փիլիսոփայական և կառավարչական հայացքները (Հ. Օձնեցու գահակալության 1300-ամյակի առթիվ).....	176
3.2. Հանրային կառավարման համակարգը Առաջին հանրապետությունում.....	199
3.3. Շուշիում հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի առթիվ.....	205
3.4. Հայապահպանության և հայագիտության զարգացման առաքելությամբ.....	211
3.5. Խոսք Հայոց Նահապետի մասին.....	215
3.6. Մեր հնագույն հարևանը.....	218

ՅՈՒՐԻ ՄԻՔԱՅԵԼԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հրատ. խմբագիր՝ Ազատուհի Սահակյան
Համակարգչային շարվածքը և էջադրումը՝
Ալինա Մելքոնյանի

Հրատ. պատվեր № 1239

Հանձնված է տպագրության՝ 06.06.2023թ.:

Չափսը՝ 60 x 84^{1/16}, 14 տպ. մամուլ:

Տպաքանակը՝ 100 օրինակ:

ՀՀ ԳԱԱ տպարան,
Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 24

